ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(78-րդ տարի) Թիվ-11 (1693) Նոյեմբեր 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Չհաշտվել կործանարար ընթացքի հետ (էջ 1-2)

2- Քաղաքական

Անի Մելքոնյան
Կամավորը, Դաշնակցությունն ու պետական և ազգային խորհրդանիշները «թավշյա» իշխանության հարձակումների թիրախ (էջ 3-6)

3- Հասարակություն

Զրույց Դավիթ Գասպարյանի հետ
Կանգնած ենք ճակատագրական գալիքի առջև (էջ 7-12)

Մանվել Մկրտչյան
Ինչո՞ւ չի կենտրոնանում մեր հանրությունը (էջ 13-15)

4- Ռազմաքաղաքական

Սարգիս Սարգսյան
44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 3) (էջ 16-26)

5- Պատմության լուսարձակ

Հայկազուն Ալվրցյան
Համշենահայության ինքնապաշտպանական մարտերը 1915-1923 թթ. (1915-16 թվականներ) մաս առաջին (էջ 27-37)

6- Ընթերցումներ

Մարգարիտա Խաչատրյան
Վերընթերցենք Համաստեղին
Համաստեղի «Հայը եւ իր հաւատքը» հոդվածը (էջ 38-40)

8- Հայ կյանք

Մովսէս Ծիրանի
Այնճարը իբրեւ՝ համահայկական արժէք (Արման Նաւասարդեանը եւ Միւսները (ԼԳ)) (էջ 41-43)

9- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Այո՛, ա՛յս ենք մենք (էջ 44)

Չհաշտվել կործանարար ընթացքի հետ

2024 թ. նոյեմբերի 3-ին Մոլդովայում տեղի ունեցած նախագահական ընտրությունների երկրորդ փուլից հետո վերընտրված նախագահին հղած Նիկոլ Փաշինյանի շնորհավորական ուղերձում մասնավորապես ասվում է. «Հայաստանի և Մոլդովայի հարաբերությունների շարունակական զարգացումը Հայաստանի կառավարության արտաքին քաղաքական օրակարգի առաջնահերթություններից է»: Ինչո՞վ է պայմանավորված այս առաջնահերթությունը: Եթե անդրադառնանք անկախացումից հետո հայ-մոլդովական հարաբերությունների պատմությանը, կտեսնենք միայն, որ Մոլդովան մաս է կազմել ՎՈՒՈՒԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ուզբեկստան, Ադրբեջան, Մոլդովա) կազմակերպությանը, որը միշտ ունեցել է հակահայկական ուղղվածություն: Ուրեմն ինչո՞վ է պայմանավորված այս քաղաքական առաջնահերթությունը, եթե Հայաստանի այսօրվա իշխանության համար քաղաքական առաջնահերթություն չէ (եթե չասենք օրակարգից հանված է) հայոց ցեղասպանության հարցը, այդ օրակարգում գոյություն չունի Արցախի հարցը: Պատասխանը շատ ակնհայտ է՝ Մոլդովան, Հայաստանի պես, գործիք է ծառայում Ռուսաստանի շուրջ հակառուսական ճակատ ձևավորելու Արևմուտքի փորձին: Ինչպես գիտենք, այդ փորձի մեջ փորձարարական կենդանու դեր ստանձնելով, Վրաստանի նախկին իշխանությունը կորցրեց Օսեթիան ու Աբխազիան, իսկ հարևան երկրի այսօրվա իշխանությունը, դիմակայելով Արևմուտքի կոշտ ճնշումներին, հրաժարվում է կրկին խաղալու նույն դերը: Ուկրաինայի արևմտամետները նույնպես որդեգրեցին այդ խաղը, և նրանց համար դեռ շարունակվում է տարածքային ու մարդկային հսկայական կորուստների ընթացքը: Ամենայն հավանականությամբ տարածքային կորուստների առումով հաջորդը կլինի Մոլդովան, եթե Հայաստանի իշխանությունը, շարունակելով իր այս հակազգային քաղաքականությունը, Արցախից հետո տարածքային և ինքնիշխանության կորստի առջև չկանգնեցնի նաև Հայաստանը:

Հայաստանի իշխանությունը ժամանակ առ ժամանակ հայտարարում է, որ Ադրբեջանը ցանկանում է Հայաստանի դեմ սանձազերծել նոր պատերազմ: Սրանով հանդերձ, իշխանությունն ու իր պարագլուխը փորձում են համոզել ժողովրդին, որ Հայաստանը Արևմտյան Ադրբեջան համարող թշնամի երկրի հետ ոչ միայն կայուն խաղաղության պայմանագիր կարելի է կնքել, այլև հայտարարում է, թե վերջինիս ղեկավարին առաջարկել է Հայաստանի և Ադրբեջանի միջև ռազմավարական գործարք կնքել: Հայաստանի ղեկավարությունը նույն կերպ վարդագույն է ներկայացնում հայ-թուրքական հարաբերությունների ներկան ու ապագան՝ շրջանցելով Թուրքիայի դերակատարությունն Արցախյան պատերազմում և Պանթուրանական ծրագիրն իրագործելու համար Զանգեզուրի միջանցքին տիրանալու Թուրքիայի ռազմավարական ձգտումը:

Իսկ Նիկոլ Փաշինյանն անձամբ է 2020 թվականի հոկտեմբերի սկզբին կանադական The Globe and Mail պարբերականի հետ հարցազրույցում հայտարարել. «Անցել է հարյուր տարի, և Թուրքիան վերադարձել է Հարավային Կովկաս՝ շարունակելու Հայոց ցեղասպանությունը»:

Այսօր, նույն այս իշխանությունը, հեռացրել է Ադրբեջանի հետ սահմանից ռուսական ուժերին, Իրանի հետ սահմանակետից նույնպես դուրս է բերում ռուսական ուժերին և դաշնակցային հարաբերությունների շրջանակում տասնամյակներով Թուրքիայի հետ սահմանը պահպանած այս երկրի զինված ուժերի քանակը կիսով չափ նվազեցրել է: Այս ուղղությամբ շարունակվող գործընթացը հստակորեն տանում է ռազմական դաշինքի խզման:

Փոխարենը Հայաստանի սահմանների վրա Եվրամիության խաղաղապահների անվան տակ հայտնվել են ՆԱՏՕ-ական առայժմ սահմանափակ ուժերը:

2024 թ. նոյեմբերի 7-ին yerkir.am կայքէջի vpoanalytics.com-ի աղբյուրից թարգմանաբար ներկայացրած Սերգեյ Անդրեևի հոդվածում ասվում է. «Փաշինյանի ռեժիմը շարունակում է թե՛ բաց, թե՛ կուլիսային դրեյֆը դեպի արևմուտք և ՆԱՏՕ: Հոկտեմբերի կեսերին Հայաստանի և ԱՄՆ-ի բարձրաստիճան զինվորականները հավաքվել էին Վաշինգտոնում: ՀՀ պաշտպանության նախարարությունը տեղեկացնում է. կողմերը՝ ի դեմս Գլխավոր շտաբի պետ Էդվարդ Ասրյանի և ԱՄՆ բանակի շտաբների պետերի միացյալ կոմիտեի ղեկավար Չարլզ Բրաունի, «քննարկել են պաշտպանական ոլորտում համագործակցության զարգացման ու երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր»: Ընդ որում՝ հայկական ռազմական գերատեսչության հայտարարության մեջ ընդգծվում է՝ «Ամերիկյան կողմը նշել է՝ շարունակելու է իր աջակցությունը Հայաստանի զինված ուժերի վերափոխման և բարեփոխումների գործընթացին»: Նման հաղորդագրությունների ֆոնին ադրբեջանական ԶԼՄ-ները շարունակում են ակտիվորեն նյութեր տարածել սեպտեմբերի

30-ին Բրյուսելում ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի և ՆԱՏՕ-ի ռազմական կոմիտեի ներկայացուցիչների հանդիպման հնարավոր մանրամասների մասին: Լրագրողների տեղեկություններով Գրիգորյանը հայտնել է Երևանի պատրաստակամությունը՝ դառնալու «ՆԱՏՕ-ի նոր հարավային թևը» և նպաստելու ավիաբազաների կառուցմանն ու Այլանսի ՀՕՊ զորամասերի տեղակայմանը: Կողմերը կարող էին նաև պայմանավորվածություններ ձեռք բերել Հայաստանի հարավում լեռնահրաձգային զորքերի համար կենտրոն կառուցելու վերաբերյալ, որտեղ ՌԴ սահմանապահների դուրսբերումից հետո ներկա կլինեն ՆԱՏՕ-ի զինվորականները: Թե՛ ռուս, թե՛ադրբեջանցի ռազմական փորձագետների կարծիքով՝ ԱՄՆ-ն ու Ֆրանսիան ակտիվորեն ամրագրում են իրենց ռազմական ներկայությունը Հայաստանում, իսկ այնտեղ, ՊՆ-ում, արդեն հայտնվել է Վաշինգտոնից խորհրդական: Հայաստանի հարավն այս դասավորություններում պատահական չէ, քանի որ Սյունիքի մարզում ամրագրումը կապված է տարածաշրջանային հաղորդակցությունների բացման ու վերահսկողության հետ: Այնտեղով է անցնում նաև Իրանի հետ սահմանը, որին մոտենալը կարևոր է Արևմուտքի համար: Արդեն տեղեկություններ են հրապարակվել այնտեղ ամերիկյան հետախուզական մանևրային խմբերի համար դիրքերի կահավորման մասին, որոնք հետևում են Թեհրանի գործունեությանը և Իսրայելի ուղղությամբ հրթիռների արձակմանը: Այդ իսկ պատճառով Երևանը շտապ լուծում էր ՌԴ ՋՈՒ ստորաբաժանումներն այստեղից դուրս բերելու հարցը: Այս գործընթացներին զուգահեռ Հայաստանի ուժային կառույցներն ավելի ակտիվորեն են մաքրում կադրերը, որոնք այս կամ այն պատճառով ձեռնտու չեն Արևմուտքին: Այդ իսկ պատճառով Գրիգորյանի վերոհիշյալ հանդիպման ժամանակ Արևմտյան կուրատորների հետ բարձրաձայնվել է «Հայաստանի անվտանգության կառույցներում մեծ թվով ռուսամետ կադրերի խնդիրը»: Ինքը՝ Գրիգորյանը, որին բացահայտ անվանում են ԱՄՆ ԿՀՎ դրածո, միշտ ներկա է ամերիկացիների հետ բանակցություններին և պատասխանատու է հենց ռուսամետ ուժերից մաքրելու համար: Հաշվի առնելով նաև ամերիկացիների ակտիվ աշխատանքը հայ ուժայիններին կաշառելու ուղղությամբ՝ զարմանալի չէ, որ Գրիգորյանը, հանդիպման ընթացքում հերթական անգամ հաճոյանալով, հավաստիացրեց ՆԱՏՕ-ի իր վերադասներին, որ հայկական ուժային գերատեսչությունները նրանցից մաքրելու աշխատանքներն արդեն ընթանում են (և ձեռքի հետ էլ Արևմտյան հատուկ ծառայությունների փորձագիտական և այլ աջակցություն է խնդրել)»: «Մի շարք բնակավայրերից (Գորիս, Սիսիան, Երասխ) ռուսական ստորաբաժանումները դուրս են բերվել վաղուց: Նաև ռուսական ռադիոլոկացիոն խմբերը լքել են իրենց սովորական դիրքերը Մարտունու շրջանում՝ Սևանա լճի մոտ: Հենց նրանք էին ապահովում Հայաստանի օդային տարածքի վերահսկողությունը և տվյալները փոխանցում հայկական կողմին»:

Իսկ ինչ հարաբերության մեջ են Ռուսաստանին փոխարինելու եկող Արևմուտքն ու Թուրքիան, վկայում են հետևյալ փաստերը. ԱՄՆ նախագահի անվտանգության նախկին քարտուղար Ջոն Բոլթոնն ասել է. «Թուրքիան ԱՄՆ-ի ամենահետևողական դաշնակիցն է տարածաշրջանում»: Ըստ Հարավային Կովկասի և Վրաստանում ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարի՝ «Թուրքիան կարող է օգտակար լինել տարածաշրջանային խաղաղության հաստատման համար՝ որպես տարածաշրջանի առաջատար երկիր»: Ակնհայտ է, որ Արևմուտքը Թուրքիայի դեմքով է տեսնում Հարավային Կովկասի խնդիրների լուծումը: Եվ սա այլ բան չի նշանակում, քան ՆԱՏՕ-ի միջոցով Անդրկովկասում Ռուսաստանի փոխարինումը Թուրքիայով: Հայաստանի իշխանությունը հասկանու՞մ է ինչ է անում, երբ իր աչքի առջև է կործանվող Ուկրաինայի կենդանի օրինակը: Կամ չի հասկանում, կամ հասկանալով անում է այն, ինչի համար բերվել է իշխանության: Արցախի հանձնումը, Հայաստանին որպես Արևմտյան Ադրբեջան դիտարկող երկրի այս հավակնության լեգիտիմացումը հաստատում է այդ ենթադրությունը:

Վերջին շրջանում Ռուսաստանը, արդեն պաշտոնյաների մակարդակով, հասկացրել է, որ իրեն շրջանցելով՝ հայ-ադրբեջանական տարածաշրջանային խնդիրներ չեն կարող լուծվել: Վերջին շրջանում նորություն էր նաև Ռուսաստանի Արտաքին հետախուզական ծառայության տարածած հաղորդագրությունները Հայաստանում ամերիկացիների կողմից Արևմուտքի ազդեցությունը կրող ուժերի հետ աշխատանքի ակտիվացման, իշխանության և գալիք համապետական ընտրությունների նկատմամբ վերահսկողության ծրագրերի ու միջոցառումների մասին: Ինչո՞ւ այս անգամ Ռուսաստանի համապատասխան ուժերն այս տեղեկությունները չեն հրապարակում լրատվական միջոցների, վերլուծաբանների, երկրորդ ու երրորդ մակարդակի պաշտոնյաների միջոցով: Ակնհայտ է, որ սա զգուշացում է այն մասին, որ իրենք տիրապետում են ներքին զարգացումներին և ուշադրությամբ հետևում տեղի ունեցողին: Պարբերաբար, արդեն բարձր պաշտոնյաների կողմից արվող հայտարարություններն, ըստ էության, այն մասին, որ ռուսները հենց այնպես այստեղից գնացողը չեն, արդյոք չե՞ն հուշում լավ հիշել թե՛ Վրաստանի, թե՛ Ուկրաինայի, թե՛ հենց սեփական դասերը:

Պետք չէ լինել պրո-ռուս կամ հակաարևմտյան, բայց որևէ մեկի դեմ կազմակերպված հակա շարժումներին մաս կազմելը շռայլություն է ճակատագրի ալիքների վրա երերացող Հայաստանի համար: Թերևս այս մասին այլևս ավելորդ է զգուշացնելը քաղաքականապես հակազգային, բարոյապես սպառված իշխանություններին, բայց պարտադիր է բոլոր նրանց համար, ովքեր չեն կարող հաշտվել այս կործանարար ընթացքի հետ:

Կամավորը, Դաշնակցությունն ու պետական և ազգային խորհրդանիշները «թավշյա» իշխանության հարձակումների թիրախ

Անի Մելքոնյան
Պատմաբան

Այն, որ հայաստանյան քաղաքական դաշտում ազգային գաղափարախոսության առաջամարտիկ ուժը Դաշնակցությունն է, փաստ է. փաստ է նաև, որ բոլոր այն ուժերը, որոնք վերջին հարյուրամյակում փորձել են հարվածներ հասցնել հայ ժողովրդի ազգային գաղափարախոսությանը և հայից աշխարհաքաղաքացի «ձևել», առաջին հարվածը հասցրել են Դաշնակցությանը:

Պատմական մանրամասների մեջ չմտնելով ասենք միայն, որ 2018-ին Հայաստանում իշխանության հասած «թավիշները» այս քաղաքականության հավատարիմ հետևորդները լինելով, իշխանություն ստանալու հենց սկզբից թիրախ դարձրին Դաշնակցությունը, հայոց եկեղեցին, ազգային ու պետական խորհրդանիշները: Այդ քաղաքականությունն առավել ցայտուն կերպով դրսևորվեց հատկապես 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, երբ Դաշնակցությունը դեմ կանգնեց Նիկոլ Փաշինյանի դավաճանական քաղաքականությանը, քաղաքականություն, որն աստիճանաբար հանգեցրեց նրան, որ ՀՀ արտաքին գործերի նախարարը հայտարարեց. «Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում թիվ մեկ առաջնահերթություն չէ[1]», բնականաբար, նման հայտարարության տրամաբանության շրջանակներում էր տեղավորվում ԱԺ ամբիոնից վարչապետի աթոռը զբաղեցնողի ելույթը, թե.

««Գինի լից» երգի կամավորը պետության չգոյության սիմվոլն է[2]» - իսկ ո՞վ է «Գինի լից» երգի կամավորը՝ Սողոմոն Թեհլիրյանը, որը հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատու Թալեաթի մահվան դատավճիռն իրագործողն էր, և ում գերմանական դատարանը՝ դատական նիստերի դահլիճից ազատ էր արձակել, կամա թե ակամա համաձայնելով հայ ժողովրդի արդար վրիժառության իրավունքի հետ:

Իսկ ո՞վ կամ ովքե՞ր էին Թալեաթի ու երիտթուրք մյուս պարագլուխների համար մահվան դատավճիռ կայացրել՝ նախ դա արել էր օսմանյան պետությունը, որը 1918 թ. դեկտեմբերի 5-ին միջազգային հանրության ճնշման ներքո հաձնաժողով ստեղծեց արդեն հրաժարական տված և երկիրը լքած իթթիհատական կառավարության պատերազմական հանցագործությունները քննելու նպատակով. «Հանձնաժողովը, երկիրը պատերազմի մեջ ներքաշելու և Հատուկ կազմակերպությանն առնչվող խնդիրներն ընդգրկող 10 տպագիր հարց ուղղելով, գրավոր ու բանավոր ցուցմունքներ վերցրեց բազմաթիվ անձանցից….

Թղթապանակներ նախապատրաստվեցին 130 հոգու վերաբերյալ, և պահանջվեց, որ տվյալ անձինք դատաքննության ենթարկվեն[3]»:

1919 թ. մարտի 9-ն բրիտանական կառավարության պահանջով թուրքական իշխանության կողմից ձերբակալվեցին պատերազմի տարիների թուրքական կառավարության անդամները: Գլխավոր պատասխանատուները՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Սայիդ Հալիմը և մյուսները հասցրել էին ճողոպրել:

Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուների երկրորդ մահավճիռը կայացվեց հայկական պետության կողմից, ավելի հստակ Հայաստանի Հանրապետության իշխող կուսակցության՝ Դաշնակցության կողմից՝ 1919 թ. սեպտեմբերին Երևանում տեղի ունեցած ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի ժամանակ:

Ուրեմն հարց. ի՞նչ է հասկանում Փաշինյանը ««Գինի լից» երգի կամավորը պետության չգոյության սիմվոլն է» ասելով. - այդ օրերին գոյություն ունեցած թուրքական պետությունը և նրա դատարանի կայացրած վճի՞ռը չի ճանաչում, Հայաստանի Առաջին Հանրապետությո՞ւնը չի ընդունում, թե՞ 1921 թ. հունիսի 2-ին Թեհլիրյանին արդարացրած պետության դատարանի՝ Գերմանիայի գոյությունն է կասկածի տակ դնում, կամ ի՞նչ տրամաբանությամբ էր այդ դեպքում 2020 թ. 44-օրյա պատերազմի ժամանակ մարդկանց կամավորագրվելու կոչեր անում և բանավոր հրա-

հանգով ազգի բոլոր տղամարդկանց թելադրում էր այստեղից-այնտեղից զինվորական պարագաներ հայթայթել և գնալ ճակատ: Եթե կամավորությունը պետության չգոյության սիմվոլ է, Հայաստանի Հանրապետության գոյությունն էր կասկածի տակ դնում, այդ դեպքում ինչի՞ վարչապետն է ինքը, եթե «Հայաստանի անկախության հռչակագրի բովանդակությունն այն մասին է, որ Հայաստանի Հանրապետությունը չի կարող գոյություն ունենալ[4]»:

Վարչապետի աթոռը զբաղեցնողի մտքերը շարունակեցին իշխող խմբակցության որոշ պատգամավորներ, Դաշնակցությանը մեղադրելով անկախական շարժմանը իբր դեմ լինելու մեջ և հարցնելով, թե որտե՞ղ էր Դաշնակցությունը պատերազմների ժամանակ:

Ինչպես ասում են, ծիծաղելի կլիներ, եթե այսքան տխուր չլիներ…

Այս անհեթեթությանը հակադարձելու համար կարելի էր վկայակոչել 400-ից ավելի այն զոհերին, որոնք ունեցել է Դաշնակցությունը միայն Արցախյան առաջին պատերազմի ընթացքում, բայց կբավարարվենք միայն Արցախյան շարժման օրերին ՀՅԴ Բյուրոյի անդամ Հրայր Մարուխյանի՝ սփյուռքահայությանը հղած կոչի մեջբերմամբ.

«Կոչ կ’ուղղեմ բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն՝ վերադառնալ հայրենիք, երթալ հայրենիք, մեռնել յանուն հայ ժողովուրդին՝ ապրեցնելու համար հայ ժողովուրդը[5]»: Տխրահռչակ ՀՀԾ-ի կառավարման տարիներին պաշտոններ զբաղեցրած որոշ գործիչների այսօրվա՝ ՔՊ-ական պատգամավոր որդիները կարող են իրենց հայրերից հետաքրքրվել, թե ով էր Հրայր Մարուխյանը և ինչ դեր ունեցավ Արցախի ազատագրման ու Հայաստանի անկախության կայացման գործում:

Ինչևէ, փաշինյանական վարչակազմի ու դրա ղեկավարի հակադաշնակցական զեղումները մի կողմ թողնենք և անցնենք պետական ու ազգային մյուս խորհրդանիշների դեմ թրքասեր իշխանության գրոհներին:

Իշխանության գալու առաջին իսկ օրվանից փաշինյանական վարչակազմի գրոհների թիրախում է ազգային մեկ այլ խորհրդանիշ՝ հայոց եկեղեցին, որն ընկալվել և ընկալվում է որպես ազգային ինքնության պահպանման գլխավոր գործոններից մեկը: Հայաստանի վայ իշխանության հակաեկեղեցական զեղումները սրվեցին հատկապես 2024 թ. ապրիլի 23-ի Ջահերով երթի ավարտին Ծիծեռնակաբերդի բարձունքում Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանի ելույթից հետո: Սրբազանը հայոց եկեղեցու անունից ուղիղ տեքստով բանադրանք կիրառեց Հայաստանում իշխողների նկատմամբ.

«- ով փորձում է ջնջել կամ կասկածի տակ առնել Հայոց Ցեղասպանության իսկությունը, նզովյալ պիտի լինի սերնդեսերունդ,

- *ով փորձում է ջնջել պապրմական մեր հիշողությունը, անիծյալ պիտի լինի նրա ու նրա ընտանիքի անունն ու հիշատակը հավիտենապես,*
- *ով պայքարում է եկեղեցու դեմ, հավիտենական դատապարտության ու ամոթի խարանով պիտի հիշվի պատմության մեջ,*
- *ով խարիսխում է հայոց ընտանիքի հիմքերը, զրկված պիտի մնա ընտանեկան հարկից ու ընտանեկան ջերմությունից,*
- *ով հրաժարվում է հայրենի հողերից, անիծյալ ու ապտանդական պիտի դառնա եղբայրասպան Կայենի նման[6]»:*

Շարունակվեցին գրոհները՝ Տավուշի թեմի առաջնորդ և «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ, Հայաստանի օտարահպատակ իշխանությունը հասավ այնտեղ, որ. «Սարդարապատում ոստիկանությունը խոչընդոտում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի մուտքը հուշահամալիր[7]»:

Հայաստանի ու Արցախի հանրապետությունների տարածքները Ադրբեջանին հանձնած, կապիտուլյացիա ստորագրած և Հայաստանում ադրբեջանական շահերի դեսպանի դեր կատարող կոլաբորացիոնիստ Նիկոլ Փաշինյանը չխորշեց անգամ հայոց պատմությունը կեղծելուց ու հայ հոգևորականությանն անուղղակի մեղադրեց Պապ թագավորի սպանության մեջ. «Պապ թագավորը այլևս չի սպանվելու, և ես, որպես ՀՀ վարչապետ, երաշխավորում եմ, որ Պապ թագավորը չի սպանվելու, Հայաստանը չի սպանվելու, ինչ վեղար էլ հագնեն, քանի կիլոյանոց խաչ ուզում են դոշներից կախեն: Պապ թագավորը չի՛ սպանվելու: Այսօրվա ՀՀ-ն իրագործումն է Պապ թագավորի երազանքի, ու այդ երազանքը այլևս որևէ մեկը չի կարող սպանել[8]»:

Ստացվում է, ըստ Հայաստանում Ալիև-Էրդողան զույգի դաշնակցի՝ Պապ թագավորը 371 թ. Պարսկաստանի դեմ պատերազմում էր, որ Արցախը հայաթափվի ու միացվի Ադրբեջանի՞ն, Կիրանցն ու Գեղարքունիքի գյուղերն էլ դառնան «Ադրբեջան» և վե՞րջ, թե՞ իրեն մերթընդմերթ Հիսուս Քրիստոսի ու Հռոմի պապի հետ համեմատող կոլաբորացիոնիստը համարում է, որ ինքը Հայաստանի մի շարք տարածքներ ազատագրած ու Մեծ Հայքը հզորացրած Պապ թագավորն է:

Բայց մեկ րոպե… Պապ թագավորը «պատմական Հայաստանի» թագավորը չէ՞ր, ա՛յն Հայաստանի, որն, ըստ պետական դավաճանի, սպառնալիք է «իրական» Հայաստանի համար:

Թուրքական շահերի սույն դեսպանի մեկնաբանությամբ Հայոց ցեղասպանության մեղավորը ոչ թե Թուրքիան է, այլ պատմական Հայաստանը, այդ մասին է վկայում՝ հայոց հայրենիքին տրված նրա հետևյալ բնորոշումը. «Պատմական Հայաստանն, ի դեպ, առանցքային նշանակություն ունի մի շարք երկրների հետ մեր հարաբերությունների համար: Այն երկրների մի խմբի հետ մեր հարատև թշնամանքի երաշխիք է և երաշխիք է, որ այդ երկրները մեր նկատմամբ ագրեսիվ քաղաքականություն վարելու պատճառաբանություն և բացատրություն կունենան: Պատմական Հայաստանը նաև երաշխիք է, որ մենք մեր միջավայրում առանց կողմնակի օգնության ապրելու հնար և գիտելիք չենք ունենա, և, հետևաբար, միշտ հովանավորի, ավագ ընկերոջ կարիք կունենանք: Սա էլ երաշխիք է, որ մենք չենք ունենա իրական պետություն, իրական անկախություն, որովհետև պատմական Հայաստանի իրական տեսլականը մեզ միշտ կառաջնորդի դեպի ցեղասպանության թակարդը, որում հայտնվելով՝ մենք փրկչի ու հովանավորի կարիք կունենանք, առանց որի գոյատևել, գոյություն ունենալ չենք կարող: Եվ ցեղասպանության վախը մեզ կպահի ֆորպոստի կարգավիճակում: Ֆորպոստը ո՛չ սահմանի, ո՛չ տարածքային ամբողջականության, ո՛չ ինքնիշխանության, ո՛չ անկախության կարիք չունի, նա կարիք ունի միայն հովանավորության[9]»: Այսինքն Հայաստանի ու հայության նկատմամբ թուրքերի թշնամական վերաբերմունքի ու պանթյուրքիզմի քաղաքականության համար, փաստորեն, մեղավոր են ոչ թե թուրքական պետությունն ու երիտթուրքական կառավարությունը, այլ «պատմական Հայաստանը», ահա թե ինչու են Փաշինյանն ու իր կոլաբորանտների խմբակը շարունակ գրոհում Նեմեսիսի ու «Գինի լից»-ի կամավորի, հայդուկի կերպարի ու ազգային բանակի դեմ:

Այսինքն, ըստ սույն դավաճանի, անկախություն ու պետություն ունենալու համար ոչ թե ուժեղ բանակ ու ազգային նպատակ է պետք, այլ հազարամյակների հայրենիքն ուրանալ ու ցեղասպանության պահանջատիրությունը մոռանալ, որովհետև ցեղասպանությունը «թակարդ» է ու «վախ» է, ոչ թե տեղի ունեցած փաստ, որի համար, ըստ Փաշինյանի սիրած միջազգային օրենքների՝ Թուրքիան պարտավոր է հատուցել:

Եվ դեռ զարմանալի է, նմանատիպ «աշխարհացունց» մտքերի համար, Փաշինյանին Թուրքիայում ու Ադրբեջանում դեռ ազգային հերոսի կոչում չե՞ն ցանկանում շնորհել, որպես վերջին հարյուրամյակի երրորդ մեծագույն պանթյուրքիստի (Քեմալից ու Լենինից հետո):

Հայ ժողովրդի ազգային խորհրդանիշները պղծելու այս շքերթի զոհը դարձավ նաև Հայոց Սրբազան լեռը՝ Արարատ-Մասիսը, որը տարիներ շարունակ Հայաստանում իշխող թուրքահպատակ վարչախումբը փորձում է օտարել Հայաստանից: Այն դեպքում, երբ ամբողջ աշխարհի համար՝ քրիստոնեական աշխարհն ու Աստվածաշնչյան դրախտը խորհրդանշող Արարատը հայկական լեռ է, Փաշինյանն այնպիսի հիվանդագին վախ ունի Արարատից, որ ապագայում Էրդողանին հաճոյանալու համար սկսելու է իրական հայոց ամենաբարձր ու Սրբազան լեռն անվանել Աղրիդաղ…..

Սողոմոն Թեհլիրյան

Պետական խորհրդանիշների՝ դրոշի, զինանշանի ու օրհներգի դեմ վեցամյա հարձակումից էլ չենք խոսում, նյութը շատ չծանրաբեռնելու համար:

Փաշինյանը հոգու խորքում ամենաշատը սարսափում է Դաշնակցությունից, որի ստեղծած պետության օրհներգի մեջ շոշափվում են **ազատություն** և **մահ** բառերը՝

Ամենայն տեղ **մահը** մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի,
Ազատության կը զոհվի….

Հետևաբար, կապիտուլյանտ օտարահպատակը վախ ունի նաև օրհներգի հատկապես վերջին հատվածից, որն ամեն կերպ ջանում է փոխել, որպեսզի մոռացության տա ՀՅԴ-ի առաջնորդությամբ Հայաստանի Հանրապետության հիմնադրված լինելու փաստը: Էլ չենք ասում, որ բոլոր տեսակի մահերից՝ հայրենիքի համար զոհաբերվելը՝ երանություն ու օրհնություն համարելու դաշնակցականի գաղափարը՝ (որը խարսխված է հին և միջին դարերում հայ զինվորականության վարքականոնի վրա՝ Մանվել Մամիկոնյանը ողբում էր, որ մահանում է անկողնում, հանգիստ մահով, ոչ թե պատերազմի դաշտում հայրենիքը պաշտպանելիս, Նիկոլ Դումանը ինքնասպան եղավ առաջին աշխարհամարտի ժամանակ, երբ հասկացավ, որ հիվանդության պատճառով ի զորու չէ օգտակար լինելու իր հայրենիքին) հոգեհարազատ ու հասկանալի չէ, իշխանության և նյութական շահի համար հայրենի հողը թշնամուն նվիրող Փաշինյանի համար:

Ինչևէ, այսքանով գուցե վերջակետ դնենք ազգային ու պետական խորհրդանիշների վրա գրոհող թրքահպատակի մտքերին անդրադառնալուն ու կրկնենք այն, ինչ ասել ենք բազմիցս՝ հայ զինվորականությունն ու ժողովուրդը պետք է որոշեն, ի վերջո պարարտ հո՞ղ են դառնում պանթյուրքիզմի համար ու «խաղաղության» անվան տակ, վերջնականապես բնաջնջվո՞ւմ, թե՞ դուրս են գալիս փաշինյանական հիպնոսից և ձևակերպում ազգային նպատակ ու գաղափար, **Մեծ և Միացյալ Հայաստան** և համազգային պայքար սկսում այդ նպատակի համար, նախ և առաջ Հայաստանի այս հատվածը ազատագրելով թուրքական շահերի հավատարիմ պահապան Նիկոլ Փաշինյանի ու ՔՊ-ի օկուպացիայից:

Ինչպես ասել ենք, հայ ժողովուրդը մեծ ընտրություն չունի ***վահանով կամ վահանի վրա….***

Ծանոթագրություններ

1. https://www.aysor.am/am/2024/10/31/%D6%81%D5%A5%D5%B2%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/2347658
2.https://factor.am/830622.html
3. Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերն ըստ օսմանյան մամուլի, Եր., 2011., էջ 51
4. https://www.azatutyun.am/a/hayastani-ankakhoutyan-hrchakagribovandakutyunn-ayn-masin-e-or-hh-n-chi-karogh-goyutyun-unenal-pashinyan/33201882.html
5. https://www.aztagdaily.com/archives/269228
6. https://www.youtube.com/watch?v=SYEc2432qfE
7.https://www.tert.am/am/news/2024/05/28/baregin-b/4130797
8. https://www.aravot.am/2024/05/22/1420989/
9. https://infocom.am/hy/article/126100

Օգտագործված գրականության ցանկ

ա) Գրականություն

1. Անումյան Մ., Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Եր., 2011

բ) Մամուլի նյութեր

1. https://www.aysor.am/am/news/2024/10/31/%D6%81%D5%A5%D5%B2%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/2347658
2. https://factor.am/830622.html
3. https://www.azatutyun.am/a/hayastani-ankakhoutyan-hrchakagribovandakutyunn-ayn-masin-e-or-hh-n-chi-karogh-goyutyun-unenal-pashinyan/33201882.html
4. https://www.aztagdaily.com/archives/269228
5. https://www.youtube.com/watch?v=SYEc2432qfE
6. https://www.tert.am/am/news/2024/05/28/baregin-b/4130797
7. https://www.aravot.am/2024/05/22/1420989/
8. https://infocom.am/hy/article/126100

Կանգնած ենք ճակատագրական գալիքի առջև

Զրույց գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արվեստի վաստակավոր գործիչ Դավիթ Գասպարյանի հետ

Արտաշես Շահբազյան – Պարո՛ն Գասպարյան, մի քանի տասնամյակ դուք աշխատել եք մեր երկրի կրթական, գիտական ասպարեզներում, առնչվել եք մշակույթի ոլորտին: Ձեր դիտարկմամբ անկախությունից հետո գիտական, բարոյական և այլ առումներով, ի՞նչ փոփոխություններ են կրել տվյալ համակարգերը և մեր հասարակական կյանքն առհասարակ:

Դավիթ Գասպարյան – Հարգելի՛ Արտաշես Շահբազյան, դուք ինձ զրույցի եք հրավիրել «**Դրօշակ**»-ի բարձր ամբիոնում, կփորձեմ լինել առավել ինքս ինձ նման՝ անկեղծ ու բաց:

Խոսքս սկսեմ մի պարզ թվաբանությամբ. իմ գիտակցական կյանքը խորհրդային և անկախության շրջաններում բաժանվում է գրեթե հավասար՝ 35-ական տարիների, որոնց նախորդում են գիտակցության գալու առաջին 7 տարիները: Այս երկու շրջաններն էլ աչքիս առջև են՝ իրենց թերություններով ու առավելություններով:

Անկախությունը մեր երազանքն էր դեռևս առաջին հանրապետության շրջանից, խորհրդային տարիներին՝ ի դեմս Չարենցի ու մյուսների, սակայն անկախությունն ու ինքնուրույն պետականության երազանքները մնացին սերունդներին: 1988 թվականի ոգևորությունը, որը մեզ դուրս բերեց հրապարակ, ունեցավ արդյունքներ, ձեռքբերումներ, սակայն վերջնարդյունքում հայտնվեցինք կոտրած տաշտակի առջև: Անկախություն ձեռք բերած երկիրը գոնե մեկ քայլ առաջ պետք է գնար իր նախկին վիճակից, փոխարենը՝ գլխիվայր անկում՝ մութ ու ցուրտ, ունեզրկում, աղքատություն և մի ազգային խայտառակություն, որը կոչվում է արտագաղթ, ինքնահիասթափություն և անճարակությունից ծնված անտարբերություն: Ըստ էության, հայն սկսեց վերածվել հակահայի, սերունդները սկսեցին կորչել տեսադաշտից, օտարանալ սեփական ինքնությանը:

Պետք է խոսենք կրթության, գիտության ու մշակույթի մասին, սակայն այդ ամենի հիմքը նախևառաջ տնտեսությունն է: Խորհրդային շրջանում աշխատող տնտեսություն գոյություն ուներ, եղած գործարաններն ու մյուս ձեռնարկություններն արագորեն սեփականաշնորհվեցին, փակվեցին ու փոշիացվեցին, որպեսզի աշխատավորն աշխատավարձ չստանա, պետությունից ակնկալություն չունենա, պետությունն ինքն իրեն ազատի քաղաքացիական պարտականությունից:

Այդ ամենի ետևում օտարի ձեռքն էր, նրանց, ովքեր շահագրգռված էին, որ Հայաստանը թուլանա, չդառնա ինքնուրույն: Եվ այս ամենին հետևեց բարոյական անկումը, որի հետևանքները տեսանք կրթության, գիտության, մշակույթի ասպարեզներում ու կենցաղում:

Այն մակարդակը, որին հասել էինք այդ ասպարեզներում, շատ արագ կորցրինք: Ռաբիսը, գոռհկությունը, ամենացածրաճաշակ զվարճալի ծրագրերը դարձան իշխող և գրավեցին իրական արժեքների տեղը: Եկավ գիտության ընթացքի կասեցման ժամանակը, գիտական հիմնարկները պահպանվեցին, բայց չզարգացան: Անկախությունից հետո իշխանության եկածները տնտեսական, քաղաքական, գիտամշակութային ասպարեզներում ներգրավելու, առաջ քաշելու իմաստով հենվում էին միջինից ցածր որակ ունեցող կադրերի վրա, որոնք կորցնելու բան չունեին, բայց գտնելու բան ունեին: Ամեն ինչ գլխիվայր շուռ եկավ, նա, ով պետք է ղեկավարեր և զարգացման ընթացքը կանխորոշեր, ինքը դարձավ ենթակա, և ուրիշները պետք է որոշեին, թե զարգացման ընթացքի մեջ նա պե՞տք է մնա արդյոք: Կադրային քաղաքականության փոփոխության հետ ինստիտուտների վիճակը վատացավ: Ես, օրինակ, 30 տարի աշխատել եմ Գրականության ինստիտուտում, լաբորանտից հասել գիտական գծով փոխտնօրենի աստիճանի, ամենաերիտասարդ տարիքում պաշտպանել դոկտորական ատենախոսություն: Ամեն տարի մոտ 15-20 անուն գիրք էինք հրատարակում՝ 3, 5, 10 հազար տպաքանակով: Հովհաննես Թումանյանի «Երկերի լիակատար ժողովածու»-ի տասը հատորյակն սկսեցինք տպագրել 70.000 տպաքանակով: Սա քիչ էր, պահանջարկ կար, կառավարությանը հայտ ներկայացրինք, որպեսզի տպաքանակը հասներ 100.000:

Ա. Շ. - Հանրագիտարանը տպագրվում էր 100 հազար օրինակ, 20, 30, 50 հազար տպաքանակով դասական ու նույնիսկ ժամանակակից գրողների գործերն էին տպագրվում:

Դ. Գ. – Այո՛, բայց Թումանյանի վերջին հատորն արդեն անկախության շրջանում տպագրվեց 500 օրինակով և երկար մնաց գրախանութների դարակներին, փոշիների մեջ: Այդպես եղավ, որովհետև, հոգեբանորեն մարդուն փոխեցին, շեղեցին իր առանցքից: Այս ընթացքում գիտության ասպարեզում ծաղկեց ոչ արհեստավարժ մոտեցումը: Գիտական հաստատություններում, որպես տնօրեններ, փոխտնօրեններ, գիտական ղեկավարներ հայտնվեցին պատահական մարդիկ: Օրինակ, երբ անդրադառնում ես, թե ինչ թեռուններ են ղեկավարել ասպիրանտներին, այդ երիտասարդները մեղքդ գալիս են:

Դպրոցի կառուցվածքը փոխվեց, գիտական համակարգը խեղվեց: 12-ամյա կրթական համակարգն աղետ դարձավ: Հիմա ի՞նչ վիճակ է՝ ավարտական դասարանի աշակերտը մեկ ոտքով դպրոցում է, մյուս ոտքով կրկնուսույցների դռանն է և այս ընթացքում էլ պետք է պարբերաբար ներկայությունը հաստատի զինկոմիսարիատներում: Աղետ դարձան վերջին շրջանում կրթական ոլորտում կատարված փոփոխությունները: Դասագրքերի նոր սերունդն է ընթացքի մեջ, ինչ էլ լինի՝ ամեն ինչ պետք է անենք, որպեսզի դպրոց մտնեն հնարավորինս վստահելի գրքեր, և դպրոցը հեռու պահենք անհարկի ցնցումներից: Աշակերտին լավ դասագիրք է անհրաժեշտ, իսկ թե վերևներում ինչ են վիճում ու բանավիճում, նրա համար չէ, այլ կրթության ոլորտի չինովնիկների:

Ա. Շ. – Ասում են՝ անգամ Ռաֆֆին է հանվել դպրոցական ծրագրերից:

Դ. Գ. – 8-րդ դասարանի դասագրքում Ռաֆֆին ներկայացված է «Խենթը» վեպով, իսկ 10-րդի ծրագրում «Սամվել»-ը ներառված է լրացուցիչ կարգով՝ QR կոդի տեսքով, որը գործնական և արդյունավետ չէ: Այլ օրինակ՝ 9-րդ դասարանի դեռևս գործող, բայց հաջորդ տարվանից նախկին դարձող դասագրքում կա Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբան»-ը, նոր ծրագրով «Աբովյան» թեման ընդհանրապես հանվել է 9-րդ դասարանի ծրագրից: Համաշխարհային գրականությունից նույն 9-րդ դասարանի գործող դասագրքում կա Շեքսպիրի «Համլետ»-ը, նոր ծրագրում Շեքսպիրն ընդհանրապես հանված է:

9-րդ դասարանի «Գրականության» նոր դասագրքում երեք մեծ թեմաներ են՝ առաջինը՝ առասպելներ, վիպերգեր, էպոս: Այստեղ պետք է սկսել Մաշտոցից, անցնել Խորենացի և հասնել մինչև էպոս: Երկրորդը՝ հայ միջնադարյան տաղերգությունն է, երրորդը՝ կատակերգությունն է՝ ներկայացված Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար»-ով: Մինչդեռ ժամանակագրական կարգով Դեմիրճյանն ուրիշ տեղ է, ուրիշ կառուցվածքի մեջ:

Անկախ ժամանակի փոփոխություններից՝ աշակերտը մնում է աշակերտ և անհրաժեշտ է, որ նա գրականությունից չհիասթափվի: Ոչ թե չոր, անհոգի, անկենդան դասագիրք պետք է տալ աշակերտին, այլ հոգի դնել դասագրքի մեջ: Բանավեճերի և պարզաբանումների փուլը թեև չի փակվել, բայց պետք է առաջ նայել: Դրա համար նեղացած, խռոված մարդու պես պետք չէ երես թեքել այդ գործից, այլ անհրաժեշտ է շարունակել ստեղծել նոր որակյալ դասագրքեր և դրանով կանխել այդ գործում աշխուժացած բազմաթիվ պատահականությունների վտանգավոր գործունեությունը: Այն տպավորությունն է, թե բոլորը դասագիրք են գրում:

Առհասարակ, կրթությունը, գիտությունը, մշակույթը թանկ հաճույք են, որոնց համար պետք է վճարել, որոնց համար պայմաններ պետք է ստեղծել, պետք է աչքի լույսի պես պահպանել, իսկ մենք շատ անփույթ վարվեցինք: Երկրորդ համաշխարհայինի տարիներին, 1943 թվականին հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, իսկ 80 տարի անց հարց է դրված այն փակելու մասին:

Ա. Շ. – Եվ պատրանք չունենանք, թե, ինչպես ներկայացվում է, ակադեմիան փակելուց հետո նրա գործունեությունը և գիտական հանրույթը ներգրավվելու են բուհական համակարգի մեջ: Տեղի ունեցողն այլ բան չի նշանակում, քան ակադեմիական գիտական համակարգի փոշիացում: Այսինքն՝ խնդիրը բոլորովին էլ շենքերին, նյութատեխնիկական բազային կամ աշխատակազմերին չի վերաբերում:

Դ. Գ. – Իրավացի եք, մեր իրականության մեջ եթե մի բան փոխվում է, ապա ոչ թե կատարելագործում, զարգացում է տեղի ունենում, այլ հետքայլ, անկում կամ ոչնչացում: Երբ, օրինակ, ասում են գիտական քաղաք, ես դրան չեմ հավատում: Չեմ հավատում նաև

գիտությունը համալսարանական կենտրոնների հետ միավորելու նախաձեռնությանը, ըստ որի՝ արտասահմանում այդպես է: Բայց սա գիտությունը կազմակերպելու, կառավարելու արդյունավետ ձև է, որն իրեն արդարացրել է նախկինում: Բացի դա, բուհական համակարգը ներկայումս լավ վիճակում չէ: Այս տարի միայն ուսանողների 6 հազարից ավելի տեղ թափուր մնաց՝ դիմորդ չունենալու պատճառով: Սա մեծ աղետ է: Մենք շատ սթափ պետք է նայենք այս հարցերին և կրթությունն ու գիտությունը չոչնչացնենք:

Նաև մեկ ուրիշ միտում է նկատվում՝ իբր հեղափոխական ալիքի վրա եկած երիտասարդությունն այնքան խոշոր գիտական մտքի տեր է, որ ավագ տարիքի մասնագետներն արդեն պետք է արհեստականորեն հեռանան: Ըստ նրանց՝ ավագները չեն կարող լինել գիտական թեմաների ղեկավարներ, չեն կարող հայտ ներկայացնել և գիտական խմբեր ղեկավարել: Արդեն երիտասարդ նորերը պետք է ղեկավարեն, իսկ գիտնականն այն մարդն է, ով տարիների ընթացքում անընդհատ գիտելիքներ է կուտակում: Այսինքն՝ այս մոտեցումն իր հերթին գիտության մահն է գուժում:

Նաև հայտարարել են, որ գիտական չեն համարվելու հայերեն տպագրված գրքերն ու հոդվածները. Ըստ այդմ՝ գիտական կարող են համարվել միայն օտար լեզուներով օտար, անմատչելի և հայ գիտնականի համար թանկ վճար պահանջող ամսագրերում տպագրածը: Սա ծաղր չէ՛, հապա ի՞նչ է: Սա, ըստ էության, ոչ այլ ինչ է, քան գիտության գաղութացում:

Ա. Շ. – Այսինքն՝ եկել է մի սերունդ, ավելի ճիշտ սերնդի մի շերտ, որը բառացիորեն իշխելով մեր կյանքի բոլոր բնագավառներում, որոշում է, որ օրինակ, ակադեմիա մեզ պետք չէ, ուսումնական, գիտական ու մշակութային հաստատություններ է փակում կամ միավորում, որոշում է, որ բուհերը մայրաքաղաքից պետք է դուրս բերվեն և կուտակվեն մեկ այլ տեղում, փոխում է տասնամյակների կրթական, գիտական, մշակութային, քաղաքական, տնտեսական և այլ հայեցակարգեր և դրանց փոխարեն ուզում է ստեղծել նորերը: Չգիտեմ՝ հրաշամանուկներ են սրանք, թե ինչ են, որ այսքան անսխալական են համարում իրենց, չեն խորհրդակցում, հաշվի չեն առնում կարծիքներն այն մարդկանց, հաստատությունների և հանրույթների, որոնք ամբողջ իրենց գործունեության ընթացքում զբաղվել են այդ հարցերով: Ապշեցուցիչ է ազգի, պետության գործերը, ճակատագիրը հեղափոխական այսպիսի հախուռնությամբ, թեթևորեն տնօրինելու ինքնավստահությունը, որը, չգիտես, իրենց արածը խորությամբ չհասկանալու հետևա՞նք է, բացարձակ անպատասխանատվության դրսևորո՞ւմ, թե՛ արտաքին թելադրանքի հլու կատարում, կամ գուցե այս ամենն իրար հետ:

Դ. Գ. – Գլոբալիզմի ձեռքը սերունդներին հակադրում է իրար: Ամեն երկիր գնում է բարեփոխումների, առաջին հերթին ազգային ավանդույթները պահպանելու, ազգային շահը կենսագործելու ճանապարհով, մենք շատ հեշտությամբ մեր ունեցածը տալիս ենք ուրիշներին: Հայաստանի բուհերում ընդունելության քննություններին առաջարկվում է՝ ուզում ես հայոց լեզու հանձնիր, ուզում ես՝ անգլերեն: Այդպես չպետք է լինի. մեր բուհերում հայոց լեզուն պետք է հանձնեն պարտադիր, իսկ անգլերենը՝ որպես օտար լեզու: Սա նշանակում է հային փոխել, դարձնել այլ, այսպես չպետք է լինի:

Ա. Շ. – Այսինքն, եթե ընդունենք անգամ, թե վաղը այս սկզբունքներով մարդիկ կդառնան լավ ֆիզիկոսներ, քիմիկոսներ, արվեստագետներ, բայց իրենց էությամբ հայ չեն լինի՝ արդեն հարց է առաջանում՝ էլ ո՞ւմ են պետք այդպիսի մասնագետները: Մի պահ ետ գնանք մեր կողմից իրավացիորեն քննադատվող խորհրդային ժամանակի կադրերին: Մեծ գիտնականներ Վիկտոր Համբարձումյանը, Մերգելյանը, Ալիխանյան եղբայրները, մեր լավագույն գրողներն ու արվեստագետներն իրենց էությամբ, ուղն ու ծուծով հայ մարդիկ էին, Հայաստանի քաղաքացի, նրանց գործունեության հիմնական իմաստն իրենց ժողովրդին ու իրենց երկրին ծառայելն էր:

Դ. Գ. – Այս նոր ալիքը եկավ ընդդեմ ազգային շահի, ընդդեմ ազգային արժեքների, ընդդեմ հայրենիք ու հայրենասիրություն հասկացությունների, և սրա հետևանքները դրսևորվեցին Արցախի կորստի, Հայաստանի պատառոտվելու, մեր մյուս-մյուս կորուստների ձևով: Այսպես չի կարող շարունակվել՝ մենք տարածքներ ենք կորցնում, ժողովրդի ինքնավստահությունն ենք կորցնում, հայի հայ կոչվելու հպարտությունն ենք կորցնում: Այսպես մենք պետականությունն ենք կորցնելու: Ժամանակին խոսակցություն եղավ ազգային հպարտության ու ազգային սնապարծության մասին: Ազգային հպարտություն ունեցող ղեկավարությունն ամեն ինչ պետք է աներ թշնամու զնդաններից ազատելու հայ գերիներին: Իսկ Արցախի բռնագաղթն այնպես եղավ՝ կարծես ամեն ինչ այդպես էլ ծրագրվել էր և շատ արագ տրվեց մոռացության և դուրս մղվեց քաղաքական օրակարգից: Իսկ աշխարհի արձագանքը՝ քար լռություն: Եթե մեր ցավից պաշտոնական ամբիոններից մենք չենք խոսում և անգամ արդարացնում ենք թշնամու գործողությունները, ուրիշն ինչո՞ւ պիտի խոսի:

Ա. Շ. – Սևակն էլ ժամանակին հոդված գրեց ազգային արժանապատվության և ազգային սնապարծության մասին:

Դ. Գ. – Ես հենց դա եմ ակնարկում: Մեզ ոչ թե ազգային սնապարծություն է պետք, այլ ազգային ինքնագիտակցություն, որը և ազգային արժանապատվության հիմքն է և մղում է ազգային հոգեկերտվածքի պահպանման: Այս հողի վրա հայ մարդը պետք է ամուր կանգնի, բազմանա, ոչ թե փախչի և դրսում «փիքր անի» հայրենիքում կորցրած տարիների մասին: Մենք վատ միջավայր ու մթնոլորտ ստեղծեցինք հայրենիքի, հայրենի արժեքների, հայոց լեզվի ու գրականության, հայկականության, հայ ավանդույթների շուրջ:

Մենք մեր իրատեսությունը կորցրել ենք. կա՛մ չպատճառաբանված լավատես ենք, կա՛մ մահացու հոռետես:

Վերադառնանք գիր-գրականությանը: Ի՞նչ կատարվեց. այն ժողովուրդը, որը հերթ էր կանգնում, հերթում առաջացած հրմշտոցից ցուցափեղկի ապակիներ էր կոտրում գիրք գնելու համար, իր անձնական գրադարանը հանեց թափեց փողոց կամ կոպեկներով տվեց գրավաճառներին:

Ա. Շ. - Տուն չկար, որ գրադարան չունենար, պարզ մարդիկ պատմավեպերն անգիր հատվածներով գիտեին, ընտանիքի անդամներով նստում կարդում էին: Ոչ միայն դասական, այլև անգամ ճանաչված կենդանի գրողների գործերը, անկախ տպաքանակից, արագորեն սպառվում էին, շատերը նախօրոք բաժանորդագրվում էին, որ անպայման կարողանան ձեռք բերել:

Դ. Գ. - Մի՛ մոռացիր, տանը կուտակած ավելորդ թուղթ էինք հանձնում և դրա դիմաց գիրք գնելու արտոնություն ստանում: Աչքիս առաջ է, թե ինչպես էին բակերում, տաղավարներում, այգիներում տարիքն առած մարդիկ հավաքվում և մեկը մյուսին լրացնելով պատմում իրենց ծննդավայրից գաղթի, փախեփախի և հերոսական դիմակայության դրվագները, պատմում կարդացած պատմավեպը, կարդում և գիրքը մեկ-մեկու փոխանցում: Եվ այս կենդանի գրադարանը մեր պատմությունն էր, ազգային հիշողությունն էր պահպանում, ազգային հեգեկերտվածք էր ձևավորում:

Հետո պետական հրատարակչությունների գործունեությունը մարեց, նրանց փոխարինելու եկան մասնավոր հրատարակչությունները: Ի՞նչ տեղի ունեցավ գրահրատարակչության ասպարեզում: Իմ օրինակով ասեմ: «Ողբերգական Չարենցը» գիրքս խորհրդային վերջին տարում՝ 1990 թվականին, հրատարակվեց 15.000 տպաքանակով: Գրականագիտական բնույթի այս գիրքը սպառվեց մեկ շաբաթվա ընթացքում: Իսկ 2020-ականներին լույս տեսած իմ վերջին գրքերը տպագրվում են 200-300 տպաքանակով, այդքանն էլ չի սպառվում: Գրքի սպառման հոգսը մնացել է հեղինակի վրա, ընդամենը մի գրախանութ կա, միայն «Բուկինիստ»-ը, որ հավատարիմ մնաց գրքին: Երևանում կար 75 գրախանութ՝ ի՞նչ եղան:

«Գարուն» ամսագիր ունեինք, որը ժամանակին լույս էր տեսնում 140 հազար տպաքանակով: «Գրական թերթ»-ը լույս էր տեսնում 40 հազար տպաքանակով: Իմ «Փակ դռների գաղտնիքը» հոդվածաշարից հետո, որ «Գրական թերթ»-ում տպագրվեց 1990 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, թերթի տպաքանակը հասավ 120.000-ի: Մարդիկ կարդում էին, նրանց առջև բացվում էին ճշմարտության դռները:

Այսօր այդպիսի բան չկա: «Հայոց լեզու և գրականություն» ամսագիր կար կրթական ոլորտին, դպրոցներին հասցեագրված՝ դա էլ չկա: Շատ ուրիշ մասնագիտական թերթեր ու ամսագրեր կային, բոլորը փակվեցին:

Ա. Շ. – Իհարկե չի կարելի ժխտել, որ այսօր բազմաթիվ մասնավոր հրատարակչություններ կան, որոնք գրքեր ու որոշ ամսագրեր են տպագրում, բայց ինչ է նրանց տպագրածը: Առաջնորդվելով բիզնես շահերով, նրանք հիմնականում տպագրում են այն, ինչը եկամուտ կբերի՝ կարևոր չէ, թե ինչ է: Պետության դերն այն է, որ առաջնորդվելով հասարակությանը կրթելու, դաստիարակելու, լուսավորելու, ազգային ոգի ներարկելու և նման նպատակներով թե՛ գրատպության, թե՛ ցանկացած այլ բնագավառում իրականացնում է պետական քաղաքականություն, ինչպես և ուղղորդում է ընդհանուր գործընթացը՝ անգամ եթե այդ քաղաքականությունը ոչ թե շահ է բերում այլ հավելյալ նյութական ներդրում է պահանջում: Պետությունը նախկինում իրականացնում էր պետական քաղաքականություն,

մանուկների համար, երիտասարդության համար, հասարակության մյուս խավերի համար: Այդ իմաստով այսօր բարձիթողի վիճակ է, իսկ Ադրբեջանը անցնող տասնամյակներին վարել է այդ քաղաքականությունը, մանկապարտեզից սկսած իր ժողովրդին ներարկել է, օրինակ, թե Արցախն իրենց հարազատ հողն է, որը հայերը խլել են: Այդ պատճառով էլ մի ադրբեջանցի չգտնվեց, ով հրաժարվեր Ղարաբաղից, և ասեր՝ չպատերազմենք, մենք էլ հանգիստ ապրենք ու բարգավաճենք: Հարյուր տարվա ընթացքում չգտնվեց մի թուրք, ով ասեր, թե իրենք ցեղասպանություն են իրականացրել, և այդ հողը պատկանել է հայերին՝ եկեք վերադարձնենք: Ազգային, գաղափարական, ռազմավարական խնդիրներից պետությունն իրավունք չունի ձեռքերը լվանալու և ասելու, թե ամեն ինչ մասնավոր է, այս մեկն էլ թող մասնավորն անի:

Դ. Գ. - Դժբախտաբար, մենք կորցրինք շատ արժեքներ՝ ընտանիք, հայրենիք, հայրենասիրություն, հավատարմություն ազգային արժեքներին, լեզվի հանդեպ հատուկ վերաբերմունք չմշակեցինք: Այսօր լեզվի նկատմամբ վերաբերմունքը շատ վատ է ամենուր՝ դպրոցներում, բուհերում, հեռուստատեսությամբ ու մամուլում, համացանցում: Գրքեր են տպագրվում չխմբագրված, առանց մասնագիտական վերահսկողության: Խորհրդային, ստալինյան բռնաճնշումներից հետո բավական բան էր փոխվել: Լավ, և շատ գրականություն տպագրվեց 1980-ականների հրապարակայնության շրջանում:

Ա. Շ. - Կարելի է ասել, որ այս գործընթացը սկսվեց 1960-ականներից: Ազգային հարցի հետ կապված բավականին ընդլայնվեցին ազատությունների սահմանները: Ջոն Կիրակոսյանի և ուրիշների ցեղասպանության մասին աշխատությունները մի՞թե այդ ժամանակաշրջանում չեն լույս աշխարհ եկել: Փաստացի 1960-ականներին վերածնունդ եղավ մեր երկրում և ոչ միայն գիր-գրականության ասպարեզում: Հիշենք՝ ինչ վերելք ապրեցին ճարտարապետությունը, թատրոնը, կինոն, երաժշտության բնագավառը, և, իհարկե, սրան զուգահեռ, գիտությունը, գիտական հաստատություններ հիմնվեցին ու գործեցին, որոնք, առանց չափազանցության, համաշխարհային ճանաչում և հռչակ ունեին:

Դ. Գ. - Ազգային ինքնագիտակցության վերելք եղավ, որն սկսվեց 1965 թվականին՝ առիթը ցեղասպանության 50-րդ տարելիցն էր: Ես ինքս էլ, դեռևս դպրոցական, մասնակցել եմ այդ ցույցին: Լավ հիշում եմ, սև հագուստներով ուսանող աղջիկներ ու տղաներն կային, շատ հզոր երթ եղավ, որն ուղղվեց «Կոմիտասի» այգի:

Մինչ այդ, ազգային վերելքի առիթ էր ծառայել Տիգրան Պետրոսյանի աշխարհի չեմպիոն դառնալը: Հայ մարդը դարձել էր համաշխարհային դեմք: Սա հային հայ դարձրեց. ա՛յն հային, որի ներսում մինչ այդ իշխում էր ջարդված, կոտրված, ծեծված գաղթականի, հիվանդի, արտագաղթողի հոգեբանությունը: Մեր փոքրաքանակ ժողովրդի զավակն աշխարհի շախմատի չեմպիոն էր դարձել, և սա ազգային ինքնագիտակցության, հպարտության հսկայական ալիք բարձրացրեց:

Հպարտության մի նոր ուժ արթնացրին Արամ Խաչատրյանը, Վիլյամ Սարոյանը... Հետո տպագրվեցին Շիրազի գրքերը, Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմը, Սահյանի բանաստեղծությունները: Սա ժողովրդին համախմբեց, միավորեց այս ամենի շուրջ:

Ա. Շ. - 1988 թվականին հրապարակ դուրս եկած սերունդը, որն այնուհետև գնաց Արցախն ազատագրելու, հենց այդ մշակույթով, այդ մթնոլորտով դաստիարակված, կրթված սերունդն էր:

Դ. Գ. - Դա ոգեղեն տարերքի սերունդն էր, որի մեջ էինք նաև մենք:

Ա.Շ - Հակառակ այսօրվա սերնդի մի հատվածի, որն ամբողջովին հեռացած է այդ արժեքներից, այդ ոգու կրողը չէ, խորթ է ազգային բարձր ու կենսական նպատակներին: Երբ անդրադառնում ես, թե անցնող տասնամյակներին ինչ տեղի ունեցավ մեր կրթության, գիտության, մշակույթի հետ, հասկանում ես, որ մեր այսօրվա վիճակն ուղղակի հետևանքն է տեղի ունեցածի:

Դ. Գ. - Գլոբալիզացիայի ձեռքը մեր իշխանությունների աջակցությամբ սերնդին ուղղորդում է դեպի համաշխարհայնացում: Մենք չափազանց բարդ իրավիճակում ենք, եկեք մեր շուրջը նայենք. մեր հարևանները 80, 90 միլիոն են դարձել, տնտեսապես, քաղաքականապես ամուր են, ուժեղ են: Ինչո՞վ են զբաղված մեր շուրջը, և մե՞նք ինչ ենք անում, ում ինչ ենք ուզում ապացուցել: Մենք պետք է ունենանք մեզ պաշտպանող դիվանագիտություն, որը զրոյական կետում է: Կարո՞ղ է ամեն պատահական մարդ բանակ ղեկավարել, պաշտպանության նախարար նշանակվել, երկրի դիվանագիտությունն իրականացնել:

Իսկ գլոբալիստներին մեր երկիրը պետք է ընդամենը երկու բանի համար՝ տարածություն և շուկա: Եվ այս տեսանկյունից, ըստ նրանց, մեզ էլ ինչ գիտություն, մշակույթ, կրթություն, տնտեսություն, ռազմական ուժ: Ինչ հայրենիք, ինչ ազգային արժեքներ, ինչ ազգային շահ… Այսպես գալիս է մեծ այլասերման ժամանակը, ամեն ինչ պետք է ենթարկվի դեգեներացման: Ամեն ինչ տրորելով՝ մեծ քայլերով առաջ է գալիս դեգենեռատը:

Ա. Շ. - Նրանք, ովքեր քիչ թե շատ փորձ ունեին, դուրս մղվեցին: Բոլոր թերություններով հանդերձ, ձևավորվել էր կադրային մի համակարգ, որը դժվար ժամանակների միջով էր անցել, փորձ էր ձեռք բերել: Այս շերտը դուրս մղվեց, որովհետև մեղադրվեց, թե ծառայել է նախորդ վարչակազմին: Նրա փոխարեն եկավ կադրային ու կենսափորձի առումով չհասունացած մի տեսակ, որը առնչություն չէր ունեցել պետականաշինությանը, երկրի պաշտպանության գործին, և իր միակ չակերտավոր առաքինությունը եղավ այն, որ իշխող թիմի մաս էր կազմել, այսպես ասած, «Թավշյա հեղափոխության» ծնունդն էր:

Գլոբալիզացիայի առումով հետևյալն ասեմ: Սորոսը ամբողջ աշխարհում սնկի պես աճեցրել է «Բաց հասարակություն» անունով հասարակական կազմա-

կերպությունների ցանց: Անունը, այս դեպքում, ուղղակիորեն արտահայտում է այդ կազմակերպության և՛ էությունը, և՛ նպատակը: Բառացիորեն նշանակում է բացել հասարակությունները, կոտրել նրանց հոգեկերտվածքի, արժեքային համակարգի, պատմական հիշողության ու նպատակների պաշտպանող պատյանը և ներխուժել դրա մեջ ու տարածել իր վերազգային, գլոբալիստական ու հասարակությունները քայքայող, այլասերող «արժեքները»: Այդպիսի հազարավոր գրասենյակներ էին գործում Ռուսաստանում՝ բոլորը փակեցին: Սորոսի և սորոսականության վարակի դեմ իրենց դռները փակեցին բոլոր առողջ հասարակությունները, փակեցին նրա ծննդավայր երկրի՝ Հունգարիայի դռները, փակ են նրա առաջ նաև իր պատմական հայրենիքի Իսրայելի դռները:

Բայց նա, հանձինս մեր երկրում և դրսերում համապատասխան մշակում անցած սորոսաճտերի, իր ավերիչ գաղափարներն ու նպատակները հաջողությամբ արմատավորեց մեզանում: Բերեմ մեկ օրինակ այդ ազդեցության. վերջերս մեր երկրի ղեկավարն ասաց, թե ժողովուրդը չի ցանկանում տառապել, պայքարել, կրել անցյալից ժառանգություն հասած բեռը՝ իր ճակատագրի խաչը, ցանկանում է բարեկեցիկ ապրել ու բազմանալ: Սա այլ բան չէ, քան գլոբալիզմի կամ, այսպես կոչված, «ոսկե միլիարդի» նպատակը: Այսինքն՝ մարդկության «ընտրյալ» միլիարդի մեջ չմտնողներին վերածել մարդկային տեսքով կենդանու, որը կապրի միայն ուտելու և բազմանալու բնազդներով: Փոքր պետություններն ու ազգերը պետք է ոչնչանան, կորցնեն սեփական ինքնությունը, ձուլվեն անդիմագիծ, սպառող զանգվածի մեջ: Իսկ ահա մեր պետության այսօրվա իշխանությունն այսպիսի քարոզ է անում, խաչակրաց արշավանք է իրականացնում կրթության, գիտության, ազգային հիշողության և ազգային իդեալների դեմ, ցանկանում է ձևավորել հենց այն հողը, որտեղ ծիլ կտա այդ զոմբիացած հասարակությունը: Եվ, ցավով պետք է արձանագրենք, որ նրանց ազգակործան ծրագիրն արդեն երկփեղկել է մեր հասարակությունը, ձևավորել է անտարբերների, սեփական ինքնության կողմնորոշիչները կորցրած զանգված: Ի՞նչ է նշանակում, օրինակ, դառնալ թուրքասեր կամ թուրքական գերիշխանությունը ընդունող հայ: Սա նույնն է, թե որսը կամովին գնա մտնի իրեն հոշոտել ցանկացող գիշատիչ գազանի երախը:

Զարմանալի է թվում, սակայն, տեսնում ենք՝ ինչպես մեզանից շատ անգամ մեծ ու հզոր երկրներ մտահոգություն են հայտնում, թե սպառնալիք է կախված իրենց պետականությունների գլխին: Էլ ինչ խոսք կարող է լինել փոքր պետությունների ու փոքրաթիվ ժողովուրդների դեպքում: Իսկապես էլ այդպիսի ծրագիր ունի գլոբալիզմը, ըստ որի մեծ շռայլություն է, որ ինչ որ փոքրաթիվ ժողովուրդներ ունենան պետություն, ինքնուրույնություն, սեփական մշակույթ ու նպատակներ և խնդիրներ ստեղծեն մեծերի կամ, այսպես ասած, իրեն ընտրյալ համարող «ոսկե միլիարդի» համար:

Դ. Գ. - Այո՛, մենք այսօր կանգնած ենք ճակատագրական գալիքի առջև: Ամեն ինչ արվում է ժողովրդի մեջ մեռցնելու հողի, հայրենիքի գիտակցությունը: Անկախությունից հետո մեր ժողովուրդը լավ չէր ապրում, սակայն քանի կար ազատագրված Արցախը, մենք մեր նեղություններին շատ ուշադրություն չէինք դարձնում: Բայց հիմա, երբ Արցախը չկա, մեր կրած դժվարությունները, մեր կորցրածը, մեր կիսատ թողածը, մեր չստեղծածը շատ ավելի ակնհայտ են երևում: Եվ առավել ծանր ձևով է մեր առջև ծառանում ազգի վիճակը:

Պատահական մարդը, երբ ստանձնում է իր հնարավորություններից շատ մեծ պատասխանատվություն, դառնում է չարիք: Հիմա ինչ պիտի անենք, որպեսզի կասեցնենք դեպի կործանում տանող այս գահավիժումը:

Մենք պետք է պահպանենք մեր երկիրը, պետք է վերականգնենք մեր տնտեսությունը, հայի մեջ վերականգնենք ազգային արժանապատվությունը, հայ լինելու հպատությունը, ինքնահարգանքը, պայմաններ ստեղծենք, որպեսզի մարդիկ ոչ թե թշնամանան իրար հետ, այլ սիրեն ու հարգեն իրար, բազմանան այս հողի վրա՝ շատանան:

Ա. Շ. - Մեր հասարակությունը պառակտվել է հենց այն պատճառով, որպեսզի հնարավոր լինի հեշտ կառավարել և տանել այն ուղղությամբ, ուր տանում են: Միասնական հասարակության հետ հնարավոր չէ այդպես վարվել: 1988 թվականին ինչպե՞ս մենք դարձանք միասնական՝ ազգային գաղափարը միավորեց: Գաղափարն է, որ մարդկանց կարող է միավորել, իսկ վատ գաղափարը բաժանում ու քայքայում է հասարակությունները...

Պարո՛ն Գասպարյան, մեր զրույցի ընթացքում ներկայացված բոլոր վատ և մտահոգիչ արձանագրումներից հետո ուզում եմ խոսակցությունն ամփոփել կրկնելով ու շարունակելով ձեր վերջին մտքերը երկիրը պահպանելու, տնտեսությունը ոտքի կանգնեցնելու, հայ մարդու արժանապատվությունն ու ինքնահարգանքը վերականգնելու անհրաժեշտության մասին: Այլապես հոռետեսությունն այն հոգեվիճակն է, որին, թերևս, մեզ ցանկանում են մղել այս երկիրն ու պետությունը քանդել ցանկացողները, որպեսզի հանգիստ պայմաններում ավարտին հասցնեն իրենց սև գործը:

Եզրափակենք, ասելով, որ, այո՛, պիտի գործ անել, պայքարել ինքներս մեզ այս անդունդից դուրս բերելու և գրավելու համար այն լուսավոր բարձունքը, որին արժանի է հայ ժողովուրդը: Շնորհակալություն հետաքրքիր զրույցի համար:

Զրույցը վարեց «Դրօշակ» պաշտոնաթերթի
գլխավոր խմբագիր
Արտաշես Շահբազյանը

Ինչո՞ւ չի կենտրոնանում մեր հանրությունը

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս



Համաշխարհային, տարածաշրջանային և ներքաղաքական պրոցեսներն առժամանակ շրջանցենք, ավելի շուտ՝ մեզ հետաքրքրող հարցը քննենք այդ զարգացումներին զուգահեռելով: Հայաստանը վերջնականապես վերածվել է արտաքին կառավարման երկրի, սա այլևս կասկածի տեղ չի թողնում: Թվում է, աշխարհում տեղի ունեցող, ինչպես հաճախ ասվում է՝ «տևտոնական» ցնցումները պիտի որ առավել զգոն և պատասխանատու դարձնեին մեր հասարակությանը: Ուշագրավ իրողություն է նաև այն, որ մեր քաղաքական գործիչներն ու վերլուծաբանները հասնելով այս կետին՝ մի տեսակ կարկամում ու դառնում են անօգնական, որովհետև եթե աղետներին դեմառդեմ կանգնած կոնկրետ մարդն իրեն այս կամ այն չափով հաշիվ է տալիս և ձեռնարկում առավելագույնը վիճակը շտկելու համար, ապա ինչո՞ւ նույնը չի ուզում կամ չի կարողանում անել հանրությունը: Վերլուծաբանները գրեթե անթերի բացահայտում են այս ամենի պատճառները, դրածո իշխանության մեկը մյուսից վտանգավոր քայլերը, բայց, ավա՜ղ, չունեն այն հարցի պատասխանը, թե ինչու դրանց գիտակցումը չի հասնում հասարակության գիտակցությանը, չի ակտիվացնում ինքնապաշտպանական բնազդը և չի մղում նրան համարժեք գործողությունների: Ենթադրենք ծանր բեռնատարը գալիս է մարդու վրա, ի՞նչ է անում մարդը. պարզ է, ցատկում է մի կողմ՝ անիվների տակ չճզմվելու համար: Կամ՝ մարդու ճանապարհին օձ է հանդիպում, մի՞թե նա չի խուսափում թունավոր սողունի հետ հանդիպումից: Փաստ է, որ գոյաբանական աղետի առջև կանգնած հանրությունը չի հրաժարվում սին պատրանքների մեջ ապրելուց, նախնտրում է զբաղվել ինքնախաբեությամբ, լավ իմանալով, որ այս ընթացքը միմիայն նոր արհավիրքի է տանում: Ու՞ր է անհետանում ինքնապաշտպանական բնազդը, էլ չենք խոսում ողջամտության և հանրային նորմալ գիտակցության մասին: Ըստ ֆիզիոլոգների՝ բնազդը բթացնելու փորձված միջոց կա, և դա հաստատվել է գորտերի վրա արված գիտափորձով: Եռացած ջրով լի կաթսայի մեջ զցում են գորտին: Գորտն ակնթարթորեն արձագանքում է ջերմությանը և արագ դուրս է ցատկում կաթսայից: Այնուհետև, գորտին զցում են սառը ջրի մեջ ու մարմանդ կրակով եռացնում ջուրը: Ջրի ջերմաստիճանը հասնում է եռման վիճակին, բայց գորտը որևէ հակազդեցություն չի ցուցաբերում, այսինքն՝ դանդաղ համակերպվում է նոր իրողությանը: 2018 թվականից ի վեր, թուրքական շահերը սպասարկող դուրսպրծուկների իշխանությունը դանդաղ հասարակությանը վարժեցնում է նորանոր խայտառակ վիճակների, իսկ մարդիկ այդպես էլ չեն հասկանում, թե ինչ խաղ են խաղում իրենց գլխին: Տեղին է մտաբերել մի մի միտք, որն առիթ ենք ունեցել արտահայտելու մեր հրապարակումներից մեկում. «**Հսկային երկար ժամանակ պահիր նկուղում, և նա կդառնա թզուկ»:** Մի վերլուծաբան սրամտել էր՝ «**Հայտնի սուբյեկտին տերերը ժամանակ առ ժամանակ միացնում և անջատում են»:** Ահա այդպիսի միացված վիճակում նա զառանցում է՝ «**Մեր անկախության հռչակագիրը պետություն չունենալու մասին է»:** Ու թվում է, թե անմիջապես դրան պիտի հաջորդեն համաժողովրդական բողոքի ցույցերը: Բայց դա տեղի չի ունենում, քանի որ երկրում բոլոր տեսակի խզումները հասել են իրենց բարձրակետին: Մի տեսակ ցնցումների մեջ է հայկական ինքնությունը: Խզվել է կապը ժողովրդի և ղեկավարության միջև, խզված է կապը հասարակության և պետության միջև, լուրջ խզում կա նաև ընդդիմության և ժողովրդի միջև, իրավունքների և պատասխանատվության միջև, խզվել է մարդկաց կապն իրենց ներկայի և ապագայի միջև, և այլն: Իսկ նման խզումներ հնարավոր են դառնում, երբ հասարակությունը ընտրում է ոչ թե իշխանությանը վռնդելու, այլ քաղաքական գործընթացներից օտարվելու, պատասխանատվությունից հրաժարվելու ուղին: Հանրային ընդվզումներն իմաստ ունեն, եթե կա հնարա-

վորություն և հույս, որ կարելի է բողոքելով բան փոխել: Եվ նաև համոզմունք, որ իշխանության գլխին նստած մարդն ունի թեկուզ տարրական ինքնահարգանքի, արժանապատվության զգացում, և նա կտեսնի ու կլսի, թե ինչքան հիմնովին է մերժված ինքը, հետևություններ կանի և կհեռանա: Նաև կա քաղաքական ճիշտ գործիքակազմ՝ խնդիրը լուծելու համար: Հասարակությունն այստեղ արդեն հայտնվում է կատարյալ փակուղում, որովհետև գոյություն չունի ոչ ինքնահարգանք և ոչ էլ արժանապատվության չնչին իսկ զգացում, և իհարկե՝ բան փոխելու իրավական բանական ուղի: Սրա ականատեսն ենք արդեն քանի տարի: Իզուր չէ ժողովրդական իմաստությունը ասում՝ «**ամենադժվար բանը աշխարհում տհասին բան հասկացնելն է»:** Ի վերջո, տեսնում ենք չէ՞, որ խոսելու, բան ասելու ցանկությունն օրեցօր պակասում է: Այսպիսի խոսք կա՝ «**Եթե ես լռում եմ, դա չի նշանակում, թե դու ճիշտ ես, պարզապես քեզ որևէ բան հասկացնելն անիմաստ է»:** Եթե սրան ավելացնենք այն, որ իշխանազրկումից հետո պատասխանատվության ենթարկելու հեռանկարն անխուսափելի է, իսկ իշխանության բերած բարիքներից հրաժարվելու փաստը՝ սարսափ ու տառապանք այս «բիրդան աղաների» համար, ապա պարզ կդառնա, թե ինչու վախը սրտներում նրանք, թաքնվելով լավ վճարվող բերետավորների և մյուս ուժայինների թիկունքում, անկախ երկրի ծանր վիճակից, պիտի քարշ գան իրենց «առաջնորդի» հետևից՝ անվերապահորեն սատարելով նրան: Ահա այստեղ է, որ վարչապետ կոչվածը վերածվում է «**քրչապետի»:** ՔՊ-ական դրոշով ինչպես քոսոտ, վիզները ծուռ եկել են պետական համակարգ, այնպես էլ դեն են նետվելու անհրաժեշտ պահին: Օրերս «քրչապետը» իր իսկ խոսքով ասած՝ սկսեց «**կադրային ճոիկ-վոիկներ»** անել: Այս վիճակը թակարդ է ոչ միայն ընդդիմադիր ուժերի, հանրային խմբերի, ժողովրդի, այլ նաև հենց իրենց համար: Գուցե սա՞ էր այն լուրջ նպատակներից մեկը՝ իրար դեմ հանել հայ հանրության բոլոր շերտերին: «**Հաց և տեսարաններ»** խաղում հացը պակասում է, հետևաբար պետք է ավելացնել տեսարանների քանակը և հաճախականությունը: Ի դեպ, այստեղ ևս խորամանկ տեխնոլոգիա կա. պաշտոններից հանում ես զզվանքի արժանացած մարդկանց մի խմբաքանակի և առաջ մղում նորերին: Ամբոխը զբաղվում է նորերով: Ատելությունը, վրեժխնդրությունն ու քառսն իբրև գործիք օգտագործելու հնարքը նոր չէ մեծ ու փոքր բռնապետների համար, բայց մի բան անվիճելի է՝ դրանց հետևանքները միշտ էլ սոսկալի են ողջ ժողովրդի համար: Լուրջ հիմքեր կան կասկածելու, որ օտարերկրյա գործակալական ցանցերն ամենատարբեր ձևերով այնքա՜ն ուժեղ են ներդրված Հայաստանում, որ կարող են ապահովել լավ կառավարելիություն ի շահ իրենց նպատակների: Սովորաբար, տրամադրությունները խմորվում են հասարակության ընդերքում: Ընդդիմադիր ուժերն ու նրանց առաջնորդները սկսում են ձևակերպել քաղաքական պահանջները և, ըստ դրանց, առաջ մղել պայքարը: Բոլորն էլ գիտեն, որ դատարկ տարածքում պայքարը հեռանկար չունի, այսինքն՝ եթե ներքևներից չկա պահանջ, ապա ընդդիմադիր շարժումը չի կարող ունենալ բավարար ուժ և կառավարելիություն: Սրանք աքսիոմատիկ ճշմարտություններ են: Մեր հանրությունը խճճվել է նաև այս կետում, չհասկանալով, թե դրանց բացակայության դեպքում ինչ նորանոր աղետների է դեմ առնելու: Եթե հասարակության քաղաքական գիտակցությունը այսչափ տկար չլիներ, նման հարցեր չէին ծագի: 2018 թ. և ապա՝ 2021 թվականից հետո իշխանությունը տեսավ, որ իր արածների հանդեպ հանրային հակազդեցությունը բավական թույլ է և է՛լ ավելի լկտիցավ: Նա տեսնում է, որ տրամադրությունների առումով վիճակը գուցե շատ լուրջ է, բայց հակազդելու, պայքարելու հարցում՝ տկար ու անկազմակերպ: Ասել է թե՝ «**մտածիր իմ մասին ինչ ուզում ես, ես թքած ունեմ քո կարծիքի վրա, բայց չփորձես ինձնից խլել իշխանությունը, ես ամեն ինչի ընդունակ եմ»:** Հիրավի խելագարի վարքագիծ: Արարքի ողջ այլանդակությունը խորությամբ գիտակցում է ժողովրդի խելացի հատվածը, դա տեսնում է մարդկանց մեծ մասը, բայց ահա, պարզամիտ ու կարճատես զանգվածը, որը



փոքր չի, շարունակելու է մնալ իշխանության մանիպուլյացիաների տիրույթում: Կադրային թվացյալ «ջարդի» հետևում, ամենայն հավանականությամբ, արտահերթ ընտրությունների գնալու ծրագիրն է, որը Նիկոլն առաջ կմղի Ադրբեջանի և հատկապես Թուրքիայի քավորությամբ, նրանց խորհրդատվական և գուցե նաև ֆինանսական աջակցությամբ՝ «**ես ձեզ խաղաղություն բերեցի»** կարգախոսի ներքո: Հաշվարկների հիմքում կրկին կլինի խեղճ, վախկոտ և անհեռատես հայը, որի պատկերացումներն ամեն ինչի վերաբերյալ չեն անցնում իր անձնական ու ընտանեկան շահերից այն կողմ: Մտաբերենք այն մարդկանց, ովքեր դեռ համակրում են այս իշխանություններին, նրա «առաջնորդին»: Ցավոք, կտեսնենք, որ մեծ հաշվով հարցը միայն թուրքական դուրսպրծուկի անձը չէ, ոչ էլ նրա քստմնելի գործերը: Ամեն բան ապականող, ավերող այս մարդը հենարան ունի հասարակության այս հատվածի գիտակցության մեջ: Այս տեսակը կարտասանի քարոզչության կողմից իր գլխում մեխված մի քանի հերթապահ բառեր, որոնք առավելապես կվերաբերեն նախկինների գործերին, նրանց ագահությանը և այլն: Նրա խոսքում դուք չեք լսի պետություն, հայրենիք, Արցախ, անվտանգություն բառերը, փոխարենը կլսեք բառեր ասֆալտապատման, մանկապարտեզներ կառուցելու և նորոգելու ու նմանատիպ բաների մասին: Սույն խեղճուկրակ անձնավորությունը գուցե ինչ-ինչ բաներ նույնիսկ կռահում է, բայց քանի որ նրա կյանքի բանաձևը «եղունգ ունես, գլուխդ քորիր»-ն է, այդպես էլ չի հասկանա, որ ասֆալտ ու մանկապարտեզ ունենում են, եթե կա հայրենիք ու պետություն: Եթե փորձես նրան բացատրել, որ Նիկոլը սկսել է հայության արմատները կրծել, ևս անիմաստ կլինի: Նա այդ գիտակցության կրողը չէ: Հայրենիք, ինքնություն, պետություն, համազգային միասնություն և այլ հասկացողություններից պոկված նա իր առօրյա հացին կպած թշվառականն է, որը, սակայն, վաղը, ցավոք, գնալու է նաև ընտրատեղամաս: Այն, ինչ ես ասում եմ, օդից վերցրած բաներ չեն, շատ եմ խոսել մարդկանց այս խմբի տարբեր «նմուշների» հետ, անկեղծացրել նրանց և ձեզ վերջնականապես չհուսահատեցնելու համար, շատ դրվագներ շրջանցում եմ: Վստահ եղեք, նրանք նույնքան մեծ եռանդով հայրենիք հանձնող-վաճառականներ են, որքան իրենց առաջնորդը: Ուշագրավ է, որ նման սողունային պահվածք ունի նաև իբրև թե «քաղաքական չեզոքություն» պահպանող սեգմենտը: Սրանք հիմնականում լուռ են, բայց որպես կանոն նույնիսկ տարրական ինքնազոհության պատրաստ չեն: Կհայհոյեն թե՛ նիկոլին և թե՛ ընդդիմադիրներին ու ամեն ինչին կնայեն իրենց մանր շահերի տեսանկյունից: Մեծ հաշվով սրանք վտանգավոր տեսակ են, այն առումով, որ իրենց չեզոքությամբ «աննկատ» ճանապարհ են հարթում ապազգային տարրերի համար: Ու նաև վարակում շրջապատին, քանի որ նման պահվածքը շատերին դուրս է դնում երկրի հանդեպ պատասխանատվության տիրույթից: Եթե մեր այս ներքին կնճիռներին ավելացնում ենք գերտերությունների տեսանելի և անտես սակարկությունները մեր տարածքի հարցում, ապա կարծես պարզ է դառնում, թե ինչու է մեր հանրության համար այսքան դժվար կենտրոնանալը իր գոյաբանական խնդիրների վրա: Բավարարվենք այսքանով ու ասենք ամենակարևորը. սրանց բոլորին միավորում է իրենց արմատից զուրկ լինելու իրողությունը: Կարելի է միամտաբար մոլորվել, շփոթվել, կարելի է ընկնել թյուրըմբռնումների մեջ, բայց եթե մարդն արմատներից զուրկ չէ, նա ի վերջո կվերադառնա իր մարդկային և ազգային ճշմարիտ էությանը: Տեսեք, թե ինչպես է թուրքահպատակ դուրսպրծուկը սկսել կրծել հայության ինքնության արմատները՝ Արարատ լեռ, զինանշան, Պետականություն, Սահմանադրություն, Հայոց պատմություն, կրթահամակարգ, և այլն: Էլ չենք խոսում Սփյուռքի մասին: Ունենալ արմատներ, նշանակում է գիտակցել սեփական ինքնությունը, նշանակում է երազել, աճել, վեր խոյանալ, ձգտել բարձր բաների: Որքան կաղնու արմատները խորն են մխրճված հողում, այնքան կաղնին վեր է սլանում: Ճապոնիայում մի թուփ կա, որը 400 տարեկան է: Կարող է զարմանալի թվալ, բայց դա հաստատված է: Այս թուփը աճում է սենյակային ոչ մեծ ծաղկամանի մեջ և ունի ամենաշատը 30-40 սմ բարձրությամբ ցողուն: Արմատների հատվածում կա ցանց, որտեղից պարբերաբար կտրում են արմատները: Ու էսպես, այս ծառը, (ճապոնացիները դրան ծառ են անվանում) վեր չի խոյանում, թեև իրականում 400 տարեկան է: Պատահական չէ, որ ճապոնացիները այդքան ավանդապաշտ են: Ահա, թե ինչ է լինում, երբ արմատ չունես: Նայելով այս իշխանությանը կարող եք **ԱՐՄԱՏԻ** հետք ցույց տալ, իրենք դա չունեն և անում են այնպես, որ ողջ հայությունը արմատախիլ արվի:

Պարոնայք, սա լուրջ պատերազմ է, ավելի լուրջ պատերազմ, քան մեզ կարող է թվալ: Այս պատերազմում չի կարելի պարտվել:

44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 3)

Սարգիս Սարգսյան
Մոսկվայի Վ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպիական տարածաշրջանի ինստիտուտի առաջատար գիտաշխատող

Սույն հոդվածի առաջին մասը (տես՝ Դրօշակ»ի 2024 թ., իններորդ համարը, սեպտեմբեր, 2024 թ., Սարգիս Սարգսյան 44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 1) (էջ 20-31), հիմնականում նվիրված էր 2005-2020 թվականների միջև ընկած ժամանակահատվածում աշխարհի տարբեր երկրների հետ Հայաստանի և Ադրբեջանի ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական համագործակցությանը: Հոդվածի երկրորդ մասը (տես՝ Դրօշակ»ի 2024 թ., տասներորդ համարը, հոկտեմբեր 2024 թ., Սարգիս Սարգսյան 44-օրյա պատերազմի արյունոտ դասերը (Մաս 2) (էջ 10-22), նվիրված էր մարտական գործողությունների ընթացքին, կողմերի զինված ուժերի քանակին, մարտավարությանը, տեղադրությանը, ինչպես նաև պատերազմում Թուրքիայի ուղղակի ներգրավվածությանը: Հոդվածի այս մասում ներկայացնելու ենք այլազգի, հիմնականում արևմտյան ռազմական, անգլիալեզու մասնագետների տեսակետները: Նշենք, որ 44-օրյա պատերազմի թեմային անդրադարձել են լուրջ հետազոտական, ֆուտուրոլոգիական կենտրոններ, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ աշխարհի առաջատար երկրներում, որոնց շարքում են՝ Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնը (CSIS) (https://missilethreat.csis.org/the-air-and-missile-war-in-nagorno-karabakh-lessons-for-the-future-of-strike-and-defense/, ԱՄՆ բանակի ռազմական քոլեջը (USAWC), որը հրատարակել է գնդապետ Ջոն Անթալի «7 վայրկյան մահանալու համար. Լեռնային Ղարաբաղի Երկրորդ պատերազմի ռազմական վերլուծություն և պատերազմների ապագան» (Ֆիլադելֆիա, ՊԱ: Casemate Publishers 2022, գլ. 1.) աշխատությունը: Թեմային բազմիցս անդրադարձել է բրիտանական «Գարդիան» (The Guardian) ամենօրյա ձախ-լիբերալ թերթը: «War on the Rocks»(«Պատերազմ ժայռերի վրա»), ռազմավարության, պաշտպանության և արտաքին գործերի վերաբերյալ վերլուծությունների և բանավեճի հարթակը տպագրել է Մայքլ Ռ. Ռեյնոլդսի աշխատությունը, որն անվանել է՝ «Վստահություն և աղետ. Հայաստանը և Լեռնային Ղարաբաղի Երկրորդ պատերազմը», 11 հունվարի, 2021 թ.: Թեմային անդրադարձել է «The National Interest»-ը («Ազգային շահ»), որն առցանց հրատարակություն է, և կենտրոնանում է պաշտպանության խնդիրների, ազգային անվտանգության, ռազմական գործերի և տեխնիկայի, արտաքին քաղաքականության ոլորտում ԱՄՆ քաղաքականության վրա, և որի թղթակից Սեբաստյան Ռոբլենը շատ ակտիվ էր արցախյան պատերազմը մեկնաբանելու առումով: Հետաքրքրություն է ներկայացնում

ռազմավարական գործողությունների վերլուծաբան, Ֆիլիպ Էնդրյուսի «Դասեր Լեռնային Ղարաբաղի 2020-ի հակամարտությունից» հոդվածը:

«Հայաստանի սխալները և Ադրբեջանի հաջողությունները» վերտառությամբ հոդված է տպագրել թուրքական «Շաբաթաթերթ» հանդեսը («Journal of Turkish Weekly» Թուրքիա): «The Defense Post»-ը («Պաշտպանական դիրք») անվտանգության և պաշտպանության հարցերին նվիրված առաջատար լրատվական անկախ հրատարակություն է, որը ներկայացնում է պաշտպանական խնդիրներին վերաբերող նորություններ, զեկույցներ Միացյալ Նահանգներից և ամբողջ աշխարհից: «The Defense Post»-ը զգալի միջազգային լսարան ունի, մասնավորապես Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և Հարավային Ասիայում https:(//thedefensepost.com/about/): Յուրահատուկ մոտեցում կա նաև տեղեկատվական պատերազմում Հայաստանի պարտության առումով: Այն մասին, թե ինչպես են տեղեկատվական անհամաչափությունները կանխում հակամարտությունների խաղաղ լուծումները, տես՝ Ջեյմս Դ. Ֆեարոն, «Ռացիոնալիստական բացատրություններ պատերազմի համար», Միջազգային կազմակերպություն, 49-ը թիվ: Թեմային բազմիցս անդրադարձել է **Ալ-Ջազի-**

րա (արաբ.՝ الجزيرة) հեռուստատեսային ցանցը, որի գրասենյակը գտնվում է Դոհայում: «Կենտրոնական Ասիա-Կովկաս ինստիտուտը» և « Մետաքսի ճանապարհի ուսումնասիրության» ծրագիրը միավորված են, որպես համատեղ անդրատլանտյան հետազոտությունների և քաղաքականության կենտրոն:

Արևելյան ուսումնասիրությունների կենտրոնը (OSW) ստեղծվել է 1990 թվականին Վարշավայում՝ որպես հասարակական հաստատություն: Այն ստեղծվել է Խորհրդային Միությունում, իսկ ավելի ուշ՝ դրա փլուզումից հետո առաջացած գործընթացների վերաբերյալ դեմոկրատական Լեհաստանի վերլուծական հետազոտության պահանջը բավարարելու համար: Ներկայումս OSW-ի պորտֆելը ներառում է Ռուսաստանը, Արևելյան և Կենտրոնական Եվրոպան, Կովկասը և Կենտրոնական Ասիան, Բալկանները, Գերմանիան, Բալթյան և Հյուսիսային երկրները, Չինաստանը, Թուրքիան և Իսրայելը. (https://www.diploweb.com/Geopolitique-de-la-Seconde-Guerre-du-Haut-Karabakh-27-septembre-9-novembre-2020.html): «Ժամանակակից պատերազմի ինստիտուտը» (MWI), որը կից է ԱՄՆ –ի West Point- ռազմական ակադեմիային, ուսումնասիրում է վերջին և շարունակվող հակամարտությունները (https://mwi.westpoint.edu/about-3/): Մեզ համար լուրջ հետաքրքրություն է ներկայացնում «Missile Threat»(անգլ. թարգմանաբար՝ «Հրթիռային սպառնալիք») կայքը, որը համախմբում է բաց կոդով հեղինակավոր և արդի տեղեկատվություն և վերլուծություն ամբողջ աշխարհում՝ բալիստիկ և թևավոր հրթիռների և դրանցից պաշտպանվելու համար նախատեսված համակարգերի մասին https://missilethreat.csis.org/about/:

Որոշ մեջբերումներ պետք է արվեն այս կայքից մի շատ պարզ պատճառով: Եթե բացառենք ռուսական աղբյուրները, որոնց կանդրադառնանք հոդվածի չորրորդ մասում, ապա Արցախյան երկրորդ պատերազմի ամենալուրջ և հայկական կողմի համար ուսանելի հետազոտությունը և վերլուծությունը, մեր կարծիքով, իրականացրել են այս կայքի մասնագետները: Մեզ համար կարևոր է ուսումնասիրել տարբեր աղբյուրներ, քանզի, հաճախ մեկը հերքում է մյուսին: Նույն «Missile Threat» կայքը կասկածի տակ է առնում «Oryxspioenkop» հայտնի բլոգի հեղինակավոր մասնագետ Սթայն Միտցերի որոշ տեղեկատվությունը, նշելով, որ վերջինս դյուրահավատորեն արձանագրել է հայկական, և՛ տեխնիկայի, և՛ բնակավայրերի կորուստներ, շատ հաճախ հաշվի առնելով ադրբեջանցիների քարոզչական ապատեղեկատվությունը:

«Missile Threat» կայքի հեղինակը սեպտեմբերի 27-ին Հորադիզ գյուղի մոտ ադրբեջանական գրոհը որակում է, որպես անհաջող, չնայած «Oryxspioenkop»-ը՝ հետևելով ադրբեջանական լրատվությանը, այն համարել էր հաջողված: Այդ օրն ադրբեջանցիները կարողացել են գրավել որոշ դիրքեր Հորադիզ գյուղից հյուսիս, սակայն չեն կարողացել ճեղքել ճակատը և իրագործել գյուղի գրավման խնդիրը: Այդ մասին են

վկայում և՛ որոշ բլոգերների տեսանյութերը, որոնք նկարահանվել են Հորադիզ գյուղից հյուսիս մոտակա թիկունքում մեկ շաբաթ անց՝ հոկտեմբերի առաջին տասնօրյակում, և՛ սեպտեմբերի 30-ի պատկերով երևում է հայկական որևէ նոր դիրքի գրավման բացակայությունը:

Ըստ կայքի, հոկտեմբերի 6-ին կամ 7-ին, երբ ադրբեջանցիները ճեղքեցին Ձեբրայիլի ուղղությամբ, հայերը որոշեցին անցնել հակահարձակման: Ծրագիրը, ըստ երևույթին, շատ հավակնոտ էր՝ «կտրել» և շրջապատել թշնամու զորախումբը, որը հարված էր հասցրել հայկական ուժերի թևին և թիկունքին՝ Հորադիզ գյուղից մինչև Արաքս գետն ընկած տարածքի ամենացածր կետում: Հայերը տանկերով, հետևակի մարտական մեքենաներով և, չգիտես ինչու, բեռնատարներով հարձակվել են Հորադիզ գյուղից Հորադիզ քաղաք տանող ճանապարհի երկայնքով: Հակառակ Փաշինյանի պարծենկոտ հայտարարության՝ հարձակումն հայերի համար ավարտվել է աղետով: Հայերը կարողացել են հասնել միայն առաջին ադրբեջանական հենակետին և այնտեղ պարտվել: Ոչնչացվել է մինչև 5 տանկ, ևս 5-ը լավ վիճակում բաժին է հասել հակառակորդին, նաև կորել են հետևակի 2 մարտական մեքենաներ և մինչև մեկ տասնյակ բեռնատար: Այս ճակատամարտի հետևանքները ցուցադրվել են հոկտեմբերի 8-ի և հոկտեմբերի 11-ի AzMO-ի տեսանյութերում (որոնցում հայկական տեխնիկան դեռ ծխում էր): Սակայն, այս տեսանյութերը վերջնականապես թաղեցին սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Հորադիզ գյուղի գրավման վարկածը. պարզ է, որ եթե ադրբեջանցիները տիրեին գյուղին, ապա հայերը չէին կարողանա ճեղքել այն առանց կորուստների: Գյուղում (հոկտեմբերի 11-ի տեսանյութերի համաձայն) այրված տեխնիկա բացարձակապես չկա: Իրականում Հորադիզը վերցվեց միայն հոկտեմբերի 7-ին կամ 8-ին, և դրանում ակնհայտորեն էական դեր խաղաց հայկական հակահարձակման ձախողումը: Կայքի հեղինակը հատուկ անդրադարձել է Արաքսի հովտում ընթացած մարտական գործողություններին:

Արաքս գետի հովիտը 4-5 կմ լայնությամբ հարթ հարթավայր է, որը ձգվում է գետի հետ հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք և հարավ-արևելքից

սահմանափակվում է բուն գետով և նրա երկայնքով անցնող Իրանի սահմանով, իսկ հյուսիս-արևմուտքից ցածրադիր լեռնաշղթայով՝ հովտից բարձրանալով 50-70 մետրով: Ի տարբերություն ճակատի մյուս հատվածների, հարթավայրը հատվում է ջրանցքների ցանցով՝ բավականին խիտ բուսականությամբ ծածկված և շատ խիտ կառուցված գյուղերով (ավելի ճիշտ՝ դրանց ավերակներով): Այս ամենը հեշտացնում է պաշտպանության գործը: Միևնույն ժամանակ, լեռների վրա դիրքերը թույլ են տալիս դիտել նեղ հարթավայրը զգալի խորության վրա և, հետևաբար, առանձնահատուկ նշանակություն ունեն այս տարածքում: Տարօրինակ կերպով չկա մի տեսանյութ այս տարածքից, որի մարտերը վճռորոշ եղան վերջին պատերազմի համար, և ինչը վստահորեն կարելի է վերագրել սեպտեմբերի 27-ին: Ուստի այնտեղ տեղի ունեցած իրադարձությունների մասին պետք է դատել հաջորդ օրերին հայտնված քիչ թվով տեսանյութերով: Սեպտեմբերի 27-ին ժամը 14.00-ին Ադրբեջանի ՊՆ-ն հայտարարեց, որ, ի թիվս այլոց, գրավվել են Արաքսի հովտում գտնվող Բոյուկ-Մարջանլի՝ առաջնագծի ետևում 3-4 կմ հեռավորության վրա գտնվող մեծ գյուղը և Նյուուզգեր փոքր գյուղը, որը գտնվում է դեպի հյուսիս՝ ձորում: Սակայն տեսագրությունները խիստ կասկածի տակ են դնում այս տեղեկատվությունը: Այս հատվածի մարտական գործողությունների առաջին տեսանյութերը հայտնվեցին Արաքսի մյուս կողմից՝ իրանցիներից, ովքեր հանկարծ հնարավորություն ունեցան դիտել պատերազմը առաջին գծից՝ առանց մեծ ռիսկի դիմելու: Սեպտեմբերի 29-ին հրապարակված տեսանյութում (վայրը՝ www.google.com/maps/place/39.343355,47.278895) երևում է, թե ինչպես է համազարկային կրակի հրթիռային համակարգը (ՀԿՀՀ) ծածկում դաշտը Իրանի սահմանի անմիջական հարևանությամբ: Այնտեղից մինչև Բոյուկ-Մարջանլի դեռևս 1,5 կմ է: Դատելով բռնկման տևողությունից, զուգակցված հարվածներից և լավ ճշգրտությունից՝ սա SOU-1Ա «Սոլնցեպյոկի» աշխատանքն է, որն այս հակամարտությունում հուսալիորեն և առավել ևս շատ ակտիվ օգտագործվեց միայն Ադրբեջանի կողմից: Եթե նույնիսկ կան հայկական SOU-եր, ապա կարելի է վստահորեն ենթադրել, որ պատերազմի առաջին օրերին նման դասակարգված զենքեր հայերը չեն օգտագործել: Հետևաբար, գնդակոծության վայրը վերահսկվում էր հայերի կողմից, և եթե նույնիսկ ադրբեջանցիները առաջ շարժվեին, այն շատ ավելի հեռու չէր հայկական առաջին գծից և հնարավոր չէր Բոյուկ-Մարջանլի մտնել այս ուղղությամբ:

Սեպտեմբերի 29-ին համացանցում տեղադրվեց մի քանի կիլոմետր դեպի հյուսիս-արևելք տեղի ունեցող իրադարձությունների վերաբերվող տեսանյութերի շարք: Առաջին տեսանյութում (նկարահանման վայրը www.google.com/maps/place/39.377582,47.332929) կարող ենք տեսնել, թե ինչպես է տեղատարափ կրակ տեղում ադրբեջանական Ղազախլար գյուղի մոտ գտնվող դիրքից մոտ 5,5 կմ հեռավորության վրա գտնվող սարի վրա: Բոլոր ցուցումներով սա նույնպես SOU-1Ա-ի աշխատանքն է: Սա նշանակում է, որ լեռներում Ադրբեջանի առաջխաղացումը շատ փոքր է եղել, եթե ընդհանրապես եղել է: Եվ վերջապես, երրորդ տեսանյութը, որը նկարահանվել է գրեթե նույն տեղում, ինչ երկրորդը (www.google.com/maps/place/39.387956,47.334417, տեսանելի է նույն շենքը), ցույց է տալիս հայկական արձագանքը, ըստ երևույթին, հայկական «Գրադը» մոտակա դաշտում է աշխատել: Նույն աղբյուրը հետևյալ հետևություններն է անում.

Ա1. Եվ Հայաստանը, և՛ Ադրբեջանը ներդրումներ են կատարել իրենց բանակների արդիականացման համար, այդ թվում՝ ավելի առաջադեմ օդային և հրթիռային համակարգեր ձեռք բերելու համար: Ադրբեջանը համարվում է առավել բազմազան և որակապես գերազանցող զինական ուժ ունեցող կողմ: Հայաստանի հրթիռային զինանոցն ամբողջությամբ կազմված էր ռուսական հրթիռներից: Հայաստանը Խորհրդային Միության փլուզումից հետո ժառանգել է «Տոչկա-Ու» և «Սկադ» հրթիռները, իսկ 2016 թվականին Ռուսաստանից գնել է «Իսկանդեր» (Արևմուտքում հայտնի է որպես SS-26 Stone) կարճ հեռահարության գերճշգրիտ բալիստիկ հրթիռային համակարգ և հրթիռներ: Հայաստանի հրթիռային հրետանին նույնպես հիմնականում ռուսական է, բացի չինական WM-80 բազմակի արձակման հրթիռային համակարգից (ԲԱՀՀ): Հայաստանի անօդաչու թռչող սարքերի նավատորմը բաղկացած է ավելի փոքր, տեղական արտադրության համակարգերից, որոնք կենտրոնացած են հետախուզական գործունեության վրա: Ընդհանուր առմամբ, նրանք ճանաչվում են որպես ավելի քիչ պիտանի, քան Ադրբեջանի ձեռք բերած արտասահմանյան անօդաչու թռչող սարքերի պարկը: **Այնուամենայնիվ, չնայած անօդաչու սարքերը մեծ դեր են խաղացել այս հակամարտությունում, նրանց հնարավորությունները չպետք է չափազանցնել,** դրանք խիստ խոցելի են նորմալ հակաօդային պաշտպանություն ունենալու պարագայում: Պարզապես Հայաստանը չուներ դրանց հակազդելու լուրջ հնարավորություն՝ հատկապես քանակի առումով: Հայաստանի հակաօդային պաշտպանության հիմնական մասը բաղկացած էր

խորհրդային ժամանակաշրջանի հնացած համակարգերից, ինչպիսիք են 2Կ11 «Կրուգ», 9Կ33 «Օսա», 2Կ12 «Կուբ» և 9Կ35 «Ստրելա-10» ՀՕՊ համակարգերը: «Բայրաքթարները» չափազանց բարձր էին թռչում, որպեսզի այս համակարգերը դրանց խոցեին, նույնիսկ եթե հնարավոր լինի հայտնաբերել այդ, համեմատաբար փոքր, անօդաչուները: Ռուսաստանից մատակարարված «Պոլյե- 21» էլեկտրոնային պատերազմի համակարգերը խափանել են ադրբեջանական անօդաչու թռչող սարքերի գործողությունները, բայց միայն չորս օր: Հասկանալի չէ, թե ինչու այս համակարգի կիրառումը դադարեցվեց: Ֆորմալ առումով համալիրը միայն ապակողմնորոշում է, բայց իրականում հրթիռները, անօդաչու թռչող սարքերը և օդային ռումբերը, որոնք զրկված են կապից և կառավարումից, չեն կարողանում լուծել առաջադրված խնդիրները: Նրանք չեն հասնում իրենց թիրախներին և ընկնում են: Արբանյակային և ռադիոնավիգացիոն համակարգերին միանալու սարքավորումների շահագործումը կաթվածահար է լինում «Պոլյե-21» -ում ընդգրկված ռադիոմիջամտության այուների պատճառով: Ընդհանուր առմամբ դրանք կարող են լինել մինչև հարյուրավոր: Ռադիոմիջամտության մոդուլի կողմից ընդունիչների ճնշման միջակայքը 25 կիլոմետր է: Նման պոստերի օգնությամբ մեկ համալիրը տեղադրում է էլեկտրոնային «հովանոց» մինչև 150 կիլոմետր շառավղով: Նույնիսկ ՀՕՊ պատնեշը հաջողությամբ անցնելուց հետո հրթիռը, անօդաչու թռչող սարքը կամ կառավարվող օդային ռումբը չեն կարողանում հաղթահարել էլեկտրոնային պատերազմի պատնեշը: Հայաստանի «Բուկ» և «Տոր-Մ2Կ» հակաօդային պաշտպանության համակարգերը, հավանաբար խոցել են մի քանի անօդաչու թռչող սարք, սակայն դրանք տեղակայվել են հակամարտության վերջում, քանակով սահմանափակ են եղել և խոցելի են որպես թիրախ: Հայաստանի հակաօդային պաշտպանության ավելի մեծ համակարգերը, ինչպիսիք են U-300-ը, նախատեսված չեն անօդաչու թռչող սարքերի դեմ պայքարելու համար և հակամարտության սկզբում թիրախավորվել են ադրբեջանցիների կողմից՝ իսրայելական արտադրության զինամթերքի օգնությամբ: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի խոսքով, ադրբեջանական զինուժը ոչնչացրել է թվով 7 U-300 փոխադրիչ, ուղղորդման երկու կայան և մեկ ռադիոտեղորոշիչ: Այս հարվածներն էլ ավելի ակնհայտ են դարձրել հակաօդային պաշտպանության համակարգերի խոցելիությունը, նույնիսկ եթե այդ թվերը չափազանցված են կամ համակարգերն ամբողջությամբ չեն ոչնչացվել: (https://missilethreat.csis.org/the-air-and-missile-war-in-nagorno-karabakh-lessons-for-the-future-of-strike-and-defense/):

Ա2. Չնայած մտավախություններին, որ հակամարտող կողմերը կարող էին մեծ ծավալներով թիրախավորել քաղաքացիական ենթակառուցվածքները, ինչպես երևում է, Հայաստանը և Ադրբեջանը սահմանափակել են ավելի մեծ հեռահարության հրթիռնե-

րի օգտագործումը: Հակամարտության ընթացքում միայն մի քանի անգամ է արձանագրվել բալիստիկ հրթիռների արձակում: Հայտնի է, որ առնվազն մեկ անգամ Հայաստանը կիրառել է «Տոչկա-ՈՒ» և «Սկադ» հրթիռներ՝ Ադրբեջանի բնակչության թվով երկրորդ քաղաքի՝ Գյանջայի դեմ հարձակումների ժամանակ: Ադրբեջանը հոկտեմբերի 2-ին կիրառեց իսրայելական արտադրության «LORA» օպերատիվ-տակտիկական հրթիռային համակարգի կարճ հեռահարության բալիստիկ հրթիռը՝ թիրախավորելով Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող կամուրջը: Այս սահմանափակ օգտագործման հնարավոր բացատրություններից մեկը Հայաստանի և Ադրբեջանի հրթիռների փոքր պաշարներն են: Ի տարբերություն, ասենք, Եմենի հութի ապստամբների, որոնք ապավինում են իրանական աջակցության կայուն հոսքին Սաուդյան Արաբիայի դեմ երկար բալիստիկ հրթիռային պատերազմը շարունակելու համար, և՛ Ադրբեջանը, և՛ Հայաստանը, թվում էր, ցանկանում էին ռազմական գործողությունների սկզբում պահպանել իրենց սահմանափակ զինամթերքի պաշարները: Երկու երկրներն էլ Խորհրդային Միությունից ժառանգել են բալիստիկ հրթիռների փոքր պաշարներ, և յուրաքանչյուրն այդ զինանոցը համալրել է ավելի ժամանակակից հրթիռներով: Հայաստանը Ռուսաստանից գնել է «Իսկանդեր» հրթիռներ, իսկ Ադրբեջանը՝ Իսրայելից՝ LORA: Այս գնումները չեն ներառում հրթիռների զգալի քանակություն, որոնք անհրաժեշտ են ընդլայնված հրթիռային պատերազմի համար: Չնայած հայկական մշտական սպառնալիքներին՝ օգտագործելու իր ավելի առաջադեմ «Իսկանդեր» հրթիռները, Գյանջայի վրա օգտագործվել է ավելի հին խորհրդային արտադրության հրթիռ՝ («Սկադ», խորհրդային 9K72 «Էլբրուս» բալիստիկ հրթիռը ավելի հայտնի է Արևմուտքում, որպես «Սկադ»: Այն նախատեսված է թշնամու կարևոր ռազմավարական օբյեկտները, ինչպիսիք են օդանավերի թռիչքադաշտերը, ոչնչացնելու համար): Միայն նոյեմբերի 9-ին՝ խաղաղության համաձայնագրի ստորագրումից անմիջապես առաջ, հայտնվեցին հայկական «Իսկանդերի» արձակման կադրերը Շուշիի ուղղությամբ: Թվում է, որ այս փոքր զինանոցները

ստիպել են կողմերից յուրաքանչյուրին խնայողաբար օգտագործել բալիստիկ հրթիռները՝ նկատի ունենալով, որ հակամարտությունը կարող է ավելի երկար տևել: Հակամարտությունը շատ չծավալելու ցանկությամբ կարելի է բացատրել նաև ավելի մեծ հեռահարության բալիստիկ հրթիռներ օգտագործելուց խուսափելը: Երկու կողմերն էլ կարող էին որոշել, որ քաղաքների կամ կենսական ենթակառուցվածքների վրա հարձակումները կարող են էսկալացիայի պատճառ հանդիսանալ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանից դուրս: Ավելին, Հայաստանն ու Ադրբեջանն ի վիճակի էին խոցելու տարածաշրջանի թիրախների մեծ մասը՝ հեռահար հրթիռային հրետանու միջոցով, այդպիսով սահմանափակելով ավելի թանկ և սահմանափակ բալիստիկ հրթիռների օգտագործման արժեքը: Հայկական բալիստիկ հրթիռների հարվածները Գյանջայում, որը գտնվում է Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս, այս առումով, սակայն, կարծես թե արտառոց է, չնայած ադրբեջանական կողմը իր հերթին հարվածներ էր հասցնում հայկական բնակավայրերին, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտին:

Բաքուն հատուկ օգտագործեց LORA-ն Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող կամուրջին հարվածելու համար՝ փորձելով դադարեցնել հայկական ուժերի տեղաշարժն ու մատակարարումները: Հարվածից հետո, ստացված պատկերների համաձայն, հրթիռի հարվածը չփլուզեց կամուրջը, ինչը փաստում է նույնիսկ ամենաճշգրիտ բալիստիկ հրթիռների թերությունները: Հաշվի առնելով բալիստիկ հրթիռով նպատակին հասնելու ակնհայտ ձախողումը, նրա սահմանափակ զինանոցը և ավելի էժան հրթիռների և անօդաչու սարքերի այլընտրանքը, զարմանալի չէ, որ Ադրբեջանը նախընտրեց սահմանափակել բալիստիկ հրթիռների օգտագործումը հակամարտության ողջ ընթացքում:

Ա3. Ադրբեջանական անօդաչու սարքերն այս պատերազմում ուշադրության կենտրոնում էին: Թեև Հայաստանն օգտագործեց սեփական արտադրության անօդաչու թռչող սարքերից մի քանիսը, և հետագայի կադրերը ցույց են տալիս, որ հայերն օգտագործել են նաև ռուսական արտադրության ավելի բարդ «Օրլան-10» անօդաչու թռչող սարքը, սակայն Ադրբեջանն էր, որ պատերազմի ամբողջ ընթացքում վերահսկում էր երկինքը: Ինչպես պնդում են բազմաթիվ միջազգային մասնագետներն իրենց զեկույցներում, անօդաչուները ժամանակակից պատերազմներում արմատապես փոխում են խաղի կանոնները: Ադրբեջանական անօդաչու թռչող սարքերը զգալի առավելություններ են ապահովել, հատկապես հեռահար հարվածների դեպքում: Դրանք ադրբեջանական ուժերին հնարավորություն են տվել գտնելու, ֆիքսելու, հետևելու և խոցելու թիրախները առաջնագծից հեռու գտնվող տարածքներում՝ ճշգրիտ հարվածներով: Անօդաչու թռչող սարքերն օպերատիվ կերպով ինտեգրված էին կառավարվող ինքնաթիռների և ցամաքային հրետանու կրակի հետ: Սակայն հաճախ ինքնուրույն էին ոչնչացնում տարբեր բարձրարժեք ռազմական ակտիվներ: Բաց կոդով հաղորդագրությունները փաստում են, որ անօդաչու թռչող սարքերը նպաստել են հսկայական քանակությամբ հայկական տանկերի, մարտական մեքենաների, հրետանային ստորաբաժանումների և հակաօդային պաշտպանության միջոցների խափանմանը: Նրանց ներթափանցումը Լեռնային Ղարաբաղի խորը թիկունք թուլացրեց նաև հայկական մատակարարման գծերը և նյութատեխնիկական ապահովումը, ինչը նպաստեց Ադրբեջանի հետագա մարտական հաջողություններին: Հատկապես թուրքական արտադրության Bayraktar TB2-ը դրսևորեց անօդաչու թռչող սարքերի պլատֆորմների բազմակողմանիությունը: Թուրքիան նախկինում այդ անօդաչու սարքերը մեծ հաջողությամբ կիրառել է Սիրիայում և Լիբիայում: Լեռնային Ղարաբաղում TB2-ը նույնպես լավ է գործել հայկական պաշտպանությունը թիրախավորելու և ոչնչացնելու հարցում: Ի լրումն նույնականացման և թիրախավորման տվյալների տրամադրման, TB2-ները նաև կրում էին խելացի, միկրո կառավարվող զինամթերք՝ թիրախները ինքնուրույն խոցելու համար: Ադրբեջանը նաև օգտագործել է բարձրորակ տեսախցիկներ, որոնք ունեն TB2-ները, բազմաթիվ քարոզչական տեսանյութեր պատրաստելու համար: Հայկական տեխնիկայի վրա հարձակումներ ցուցադրող տեսանյութերը տեղադրվել են առցանց և հեռարձակվել Բաքվի թվային գովազդային վահանակների վրա:

Ա4. Լեռնային Ղարաբաղի շուրջ օդային պատերազմի առաջնային դասը՝ ամբողջական սպեկտրի հակաօդային պաշտպանության կարևորությունն է: Թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի փոքր հեռահարության հակաօդային պաշտպանության (SHORAD) զինանոցները չափերով և որակով սահմանափակ էին: Ադրբեջանը կարողացավ օգտագործել այս բացը իր բարդ անօդաչու թռչող սարքերի մեծ նավատորմի շնորհիվ: Մի փոքր շեղվելով «Missile Threat» կայքի վերլուծությունից, նշենք, որ վերջին մի քանի տասնամյակում թռչող սարքերի (ԹՍ) կիրառության մեջ անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) դերն անընդհատ մեծանում է: Ժամանակակից ԱԹՍ-ներն

ունեն տարատեսակ կառուցվածք, դրանցից ամենահզորներն ընդունակ են օդում, մոտ 20 կմ բարձրության վրա, մնալ ավելի քան 40 ժամ: ԱԹՍ-ները հեռակառավարմամբ և ծրագրով ինքնուրույն կատարում են բազմազան մարտական խնդիրներ: Համաշխարհային շուկայում նման սարքերի պահանջարկը 2004 թ. կազմել է $6,87 մլրդ, այն դեպքում, երբ վեց տարի առաջ այն հազիվ էր անցնում $2 մլրդի սահմանը: Միայն ՆԱՏՕ-ի երկրներում կիրառվում է մոտ 60 հազար ԱԹՍ, ինչը կազմում է վերջին 15 տարում աշխարհում արտադրված նման սարքերի մոտ 80%-ը: Ներկայումս զարգացած պետությունների ԶՈՒ կազմում Ռազմաօդային ուժերը (ՌՕՈՒ) ավելի զգայուն են արդի գիտատեխնիկական զարգացումների նկատմամբ: Օրինակ՝ 1982 թ., Բեքաայի հովտում իսրայելցիները գործում էին ավելի կազմակերպված: Նրանք ԱԹՍ-ներով նախ հայտնաբերում էին սիրիական զորքերի տեղակայումները, մեկ այլ տեսակի ԱԹՍ-ները, լինելով կեղծ թիրախներ, ստիպում էին միացնել սիրիական ռադիոլոկացիոն կայանները (ՌԼԿ)՝մատնելով դրանց դիրքերը: Հանգամանք, որն օգտագործում էին իսրայելական ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցները և հարվածային ինքնաթիռները: Առանց ժամանակ կորցնելու դրանք խլացնում կամ ոչնչացնում էին ՌԼԿ-ները: Հակառադիոլոկացիոն հրթիռների հիմնական աղբյուրի՝ ՌԼԿ անջատման դեպքում նորից ԱԹՍ-ները լազերային լույսով ուղղորդում էին ինքնաթիռներից արձակված այլ տեսակի հակառադիոլոկացիոն հրթիռներ: Օդային իրադրության ամբողջ տեղեկատվությունը ստանում և հստակ վերահսկում էին ամերիկյան հեռակա հայտնաբերման և ղեկավարման «Ե-28 Հոկայ» ինքնաթիռները: Մինչ օրս մասնագետների կողմից դեռ հստակ հաստատված չեն ԱԹՍ-ների դասակարգումը և նրանց ներկայացվող պահանջները: Ըստ քաշի, թռիչքի բարձրության, հեռավորության և ժամանակի՝ընդունված է ԱԹՍ-ները բաժանել. «Միկրո» (մինչև 10 կգ ընդհանուր քաշ, 1 կմ թռիչքի բարձրություն, 1-ժամյա թռիչք) «Մինի» (մինչև 50 կգ ընդհանուր քաշ, 3-5 կմ թռիչքի բարձրություն, միքանիժամյա թռիչք) «Միդի» (մինչև 1000 կգ ընդհանուր քաշ, 9-10 կմ թռիչքի բարձրություն, 10-12-ժամյա թռիչք) «Ծանր» (մինչև 20 կմ թռիչքի բարձրություն, մինչև 24-ժամյա թռիչք): Ներկայումս ԱԹՍ-ների կողմից լուծվող տարատեսակ մարտական ու ոչ մարտական խնդիրները կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին և հիմնական խնդիրն ամենաբազմազան հետախուզությունն է, երկրորդը՝ մարտական հարվածների լայն ոլորտը (մեծ հեռանկար ունի այս երկու խնդիրների մեկտեղումը) և վերջապես երրորդ խումբը՝ ամենատարբեր խնդիրների լուծման ապահովումը: Մինչ օրս ԱԹՍ-ների լայն կիրառությունը հիմնականում հարուստ է հետախուզական կենսագրությամբ: Համակարգային կիրառության դեպքում ԱԹՍ-ն հետախուզական թռիչքը կատարում է միաժամանակ մի քանի օղակների համար, կամ նրա տված տեղեկատվությունը



միաժամանակ ստանում են տարբեր համակարգեր ու գերատեսչություններ: Տեղեկատվության ստացման միջոցները կարող են ունենալ տարբեր նպատակներ և խնդիրներ, կարող են լինել առանձին սարքեր՝ հանդիսանալով մեկ համակարգի բաղկացուցիչ մասնիկներ: Դրանք կարող են համագործակցել, և այդ համագործակցությունը կարող է մեծապես կախված լինել ԱԹՍ-ների հաղորդած տեղեկություններից: Օրինակ՝ ԱԹՍ-ները, հետախուզելով տեղանքը, տվյալները միանգամից հաղորդում են և՛ կենտրոնական, և՛ հարվածային ԹՍ-ներին: ԱԹՍ-ների համակարգային կիրառության համար ներգրավվում են ավելի մեծ քանակությամբ համալիրներ՝ իրենց ԹՍ-ներով և կառավարման ավելի բարդ տեխնոլոգիաներով: Համակարգային կիրառման ժամանակ խնդիրն արդեն միայն հետախուզումը չէ, նույնիսկ հետախուզված տեղեկությունները մշակելը և հասցեատիրոջը հասցնելը բավարար չէ: Հայտնաբերված նշանակետերին հարվածելու համար կոորդինատների մշտական ապահովումը, արդյունքների ստուգումը բարդ համակարգ է, սակայն անվիճելիորեն ավելի հուսալի և արդյունավետ: Նման համակարգային կիրառումը, թվարկված բարդություններով հանդերձ, հրամանատարությանը թույլ է տալիս լուծել համակարգային խոշոր խնդիրներ: Նմանատիպ խնդիրների լուծման ժամանակ առանցքային դեր են խաղում ԱԹՍ-ները: 44-օրյա պատերազմի հետևանքներից ելնելով միանշանակ է, որ ՀՀ ԶՈՒ-ին անհապաղ հարկավոր են ԱԹՍ-ներ, և ոչ մեկ-երկուսը: Մեր տարածաշրջանի համար առանձնահատուկ կարևորություն ունեն ԱԹՍ-ների որոշակի բնութագրեր: Օրինակ՝ հարկավոր է, որ ԱԹՍ-ն ունենա ոչ պակաս, քան 6 կմ թռիչքային բարձրություն, լինի կատապուլտային արձակմամբ, անկարգելով կամ հատուկ հարմարանքով վայրէջք կատարող: Սովորական թռիչքուղուց թռչող և նույն տեղում վայրէջք կատարող ԱԹՍ-ները մեզ մեծ ծառայություններ չեն կարող մատուցել: ՀՀ ԶՈՒ համար շատ կարևոր է զարգացնել նաև այլ տեսակի ԱԹՍ-ները, մասնավորապես՝օդապարիկներ: Օդային սահմանի վերահսկողության, օդուժի կիրառման և անգամ խաղաղ թռիչքների կազմակերպման գործում

այս սարքերի դերը շատ կարևոր է: Առանձնահատուկ նրբություններ շատ կան: Թեման, առհասարակ, պետք է լինի ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի ուշադրության կենտրոնում, հատկապես, երբ մեր հարևան երկրներն ակտիվորեն զարգացնում են այս տեխնոլոգիաները: Այսինքն՝ այստեղ կա նաև մրցակցության խնդիր: Ժամանակակից ՕՀՄ-ների զանգվածային կիրառմամբ հենց մարտական գործողությունների սկզբից հնարավոր է առավելության հասնել: Ադրբեջանի ԶՈՒ կողմից դրանց զանգվածային կիրառման երևույթն աննախադեպ էր: Ինչ կատարվեց: Առաջին էշելոնի հայկական ուժերն այնքան արագ շարքից դուրս եկան, որ երկրորդ էշելոնը, կամ ռեզերվը չհասցրեց միջամտել: Խրամատային ամուր, կրավորական պաշտպանությունը, որը խորհրդային բանակի կարծրատիպ է, արդեն չապահովեց հուսալի պաշտպանություն: Հարձակողական տրամաբանությունը հակամարտության ժամանակ դառնում է գերակայող: Զրահատեխնիկան և այլ ծանր ցամաքային ստորաբաժանումները, ամենայն հավանականությամբ, խոցելի կմնան այնքան ժամանակ, մինչև շարժական SHORAD համակարգերը բարելավվեն: Հակամարտությունը ևս մեկ հիշեցում է կրավորական պաշտպանության կարևորության մասին: Խիստ տարածված սենսորների և հրաձիգների դարաշրջանում զինվորականները պետք է մտածեն իրենց ուժերը քողարկելու և թաքցնելու նոր ձևեր: Ցամաքային զորքերի քողարկման մարտավարությունը պետք է թարմացվի: Համացանցում հասանելի տեսանյութերն ու պատկերները հուշում են, որ ոչ հայկական, ոչ էլ ադրբեջանական ուժերը չեն ունեցել համապատասխան ռեսուրսներ, կամ կրավորական պաշտպանության վերաբերյալ լիարժեք պատկերացում: Մենք դա տեսնում ենք կրկին ու կրկին, երբ երկու կողմերն էլ գործում են բաց, ստատիկ, խիստ դանդաղ, վատ քողարկված: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը նաև ցույց տվեց, որ թեև առանձին սպառազինության համակարգերը չեն փոխի պատերազմի բնույթը, նոր զենքերի կիրառումը ժամանակակից մարտադաշտն ավելի մահացու է դարձնում: Ադրբեջանի անօդաչու թռչող սարքերի և հրետանու համակցումը արդյունավետորեն կիրառվեց Հայաստանի բարձրարժեք ռազմական ակտիվների, հատկապես T-72 տանկերի և U-300 ՀՕՊ համակարգերի վրա հարձակումների ժամանակ: Մասնավորապես, հակաօդային պաշտպանության ստորաբաժանումներին հասցված հարվածները սահմանափակեցին Բաքվի անօդաչու թռչող սարքերին հակազդելու Հայաստանի հնարավորությունը՝ ուժեղացնելով դրանց արդյունավետությունը: Այստեղ դասերը նոր չեն: ԱՄՆ-ի ԶՈՒ համար ամբողջ սպեկտրի հակաօդային պաշտպանության և թե կրավորական պաշտպանության կարևորությունը դրսևորվել է Մերձավոր Արևելքի մարտերում, և Ռուսաստանի ու Չինաստանի հետ հնարավոր հակամարտությունների պլանավորման ժամանակ: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը փոքր, բայց կարևոր դրվագ է ժամանակակից օդային և հրթիռային պատերազմի բնույթն ուսումնասիրելու առումով: ԱՄՆ բանակի ռազմական քոլեջը (USAWC), հրատարակել է գնդապետ Ջոն Անթալի «7 վայրկյան մահանալու համար. Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի ռազմական վերլուծություն և պատերազմների ապագան» (Ֆիլադելֆիա, ՊԱ: Casemate Publishers 2022, գլ. 1.) աշխատությունը: Հեղինակը համոզված է, որ Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը պատմության մեջ առաջին պատերազմն էր, որը շահել են հիմնականում անօդաչու համակարգերը: Այս 44-օրյա պատերազմը հանգեցրեց Ադրբեջանի վճռական ռազմական հաղթանակին: Հայաստանը պայքարում էր թվաքանակով գերակշիռ ուժերի դեմ: Անթալը նշում է, որ թեև հայերը վերահսկում էին լեռնային շրջանի բարձրադիր գոտին, որը նպաստում էր ավանդական պաշտպանությանը, սակայն Թուրքիայի հետ Ադրբեջանի դաշինքը, և Իսրայելի սերտ տեխնոլոգիական աջակցությունը՝ ռազմավարական առումով մեկուսացրին Հայաստանը: Բացի այդ, ըստ Անթալի, Թուրքիայի կեցվածքն ազդեց, որպեսզի ռուսները չմիջամտեն՝ Հայաստանին աջակցելու համար:

Այն, որ Ադրբեջանը հարձակվել էր Հայաստանի վրա համաճարակի ժամանակ, լրացուցիչ գործոն էր: Այն, որ Ադրբեջանը հաղթեց պատերազմում, արտառոց չէ՝ հաշվի առնելով Հայաստանի դեմ հավաքված ուժերի հարաբերակցությունը: Բացառիկն այն է, որ սա առաջին ժամանակակից պատերազմն էր, որի ելքը հիմնականում որոշվեց անօդաչու զենքի միջոցով:

Այս պատերազմում թուրքական արտադրության «BAYRAKTAR TB2» անօդաչու օդային մարտական մեքենան (UCAV) և իսրայելական արտադրության HAROP Loitering զինամթերքը (LM) գերակշռում էին մարտերում և Ադրբեջանին տրամադրում պատերազմական առավելություն: Պակաս հետաքրքրություն չեն ներկայացնում Վարշավայի Արևելյան ուսումնասիրությունների կենտրոնի (OSW) մասնագետ Վոյցեխ Գորեցկու «Կովկասն ապակարգավորվեց. տարածաշրջանը՝ Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ավարտի տարեդարձին» հոդվածում տեղ գտած տեսակետները: Հեղինակը գտնում է, որ

Ղարաբաղյան վերջին պատերազմը նաև էականորեն փոխեց Հարավային Կովկասի համատեքստը: Տարածաշրջանային անվտանգության խնդիրները կարգավորող հիմնական մեխանիզմները կասկածի տակ են դրվել. փոխվել են և՛ Ռուսաստանի, և՛ Թուրքիայի, և՛ Իրանի դերերը: Մինչև 2020 թվականը Ռուսաստանի գերիշխանությունը տարածաշրջանային անվտանգության առումով անվիճարկելի էր: Նույնիսկ, եթե Մոսկվան չէր կարողանում ուղղակիորեն պարտադրել իր կամքը տարածաշրջանում, նա դեռ պատրաստ էր և կարող էր արգելափակել իր շահերի դեմ ձեռնարկվող ցանկացած գործողություն (օրինակ՝ 2008 թվականին Հարավային Օսիայի նկատմամբ վերահսկողությունը վերականգնելու Վրաստանի փորձը): Ինչ վերաբերում է ղարաբաղյան հակամարտությանը. մինչև 2020 թվականի սեպտեմբեր այս գերիշխանությունն ամրապնդված էր հետևյալ գործոններով. Ռուսաստանի ռազմական դաշինքը Հայաստանի հետ, նրա ռազմական ներկայությունն այս երկրում, Հայաստանի և Ադրբեջանի միջև ուժերի հավասարակշռության վրա ազդելու նրա կարողությունը՝ երկու երկրներին էլ զենք մատակարարելու ճանապարհով, և, վերջապես, արդյունավետ գործիքները, որոնք Ռուսաստանը կարող էր օգտագործել տեղական էլիտաների և հասարակությունների վրա ճնշում գործադրելու համար (ներառյալ Ռուսաստանում ապրող նրանց սփյուռքի և փափուկ ուժի ներուժի միջոցով): Ավելին, Ռուսաստանն այս վեճում հանդես եկավ որպես ֆորմալ միջնորդ (որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, բայց նաև եռակողմ ձևաչափով): Արևմուտքը, որը տարբեր ձևաչափերով ներկա էր առանձին երկրներում, նույնպես կարևոր տարր մնաց տարածաշրջանային հավասարակշռության պահպանման գործում, արդյունավետ կերպով վերաձևելով ողջ տարածաշրջանը, և մեղմացնելով ռազմական լարվածությունը, ինչպես նաև ներգրավված էր ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում (ներառյալ՝ Մինսկի խմբի կազմում): Միևնույն ժամանակ, պատերազմը, որը երկար ընթացավ ռուսական պասիվության պայմաններում, ապացուցեց, որ Ադրբեջանը ցանկանում էր և ի վիճակի էր ռազմական ճանապարհով փոխել ուժերի հավասարակշռությունը՝ անտեսելով նախկինում որդեգրված մեխանիզմները: Դա լուրջ հարված էր Մոսկվայի՝ որպես կայունության «երաշխավորի» և Հայաստանի դաշնակցի հեղինակությանը: Ուժերի հավասարակշռության փոփոխության հիմնական գործոնը, սակայն, թվում է, թե Թուրքիայի ռազմավարական դիրքի և տարածաշրջանային հավակնությունների բացահայտումն էր: Թուրքիան 30 տարվա ընթացքում շատ սերտ կապերի ցանց է մշակել Ադրբեջանի հետ, և հենց դրանք՝ հատկապես Անկարայի անմիջական քաղաքական և ռազմական աջակցությունը (գոնե տեխնիկայի և խորհրդատուների մակարդակով), Բաքվին թույլ տվեց ռիսկի դիմել՝ համեմատաբար երկարատև ռազմական արշավը սկսելու և հասնելու իր հաղթանակին: Այսպիսով, և՛ 2020 թվականի պատերազմը, և՛ դրա ավարտից անցած տարիները մեծապես արտացոլում են ղարաբաղյան հակամարտության և, ընդհանուր առմամբ, տարածաշրջանի պատմության նոր փուլը, որտեղ այժմ առանցքային է դառնում ռուս-թուրքական մրցակցությունը: Մայքլ Ռ. Ռեյնոլդսն իր աշխատությունն անվանել է «Վստահություն և աղետ. Հայաստանը և Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը» (https://warontherocks.com/2021/01/confidence-and-catastrophe-armenia-and-the-second-nagorno-karabakh-war/?fbclid=IwAR3XjJovllfoSMWe8p51EwJ9JbIyzOKQ83dPnyZDeTqXfcu8LghyYMXDwk)1:

Հեղինակը գտնում է, որ Ղարաբաղում կրած պարտությունը ապշեցրել է Հայաստանին: Հայկական զենքի, ժողովրդավարական Արևմուտքի բարի կամքի և Ռուսաստանի խնամակալության երաշխիքները և ակնկալիքները փշրվել են: Ադրբեջանն ուներ Թուրքիայի նման դաշնակից, իսկ հայերի դաշնակից Ֆրանսիայի Ազգային ժողովում ընդունված խորհրդանշական բանաձևերը, հօգուտ Արցախի Հանրապետության ճանաչման, ոչ դաշինք կհանդիսանան, ոչ էլ կվերադարձնեն Հայաստանի մարտադաշտում կրած կորուստները: 2020 թվականի նոյեմբերի 9-ը ևս մեկ դառը օր է դարձել հայերի համար: Քաղաքագետը զգուշացնում է, որ քանի դեռ հայերը չեն օգտագործի պարտության այս պահը սթափ կերպով վերագնահատելու իրենց ուժեղ և թույլ կողմերը, այն վերջինը չի լինի: Այնուամենայնիվ, «Հայկական հարցի» ջատագովների այն համոզմունքը, որ հայկական ինքնիշխանության վերականգնումը պատմական Հայաստանի ողջ տարածքում և՛ արդարացի է, և՛ իրագործելի և շարունակում է գերիշխել հանրային քննարկումներում: Հայերն «ստեղծել են իրականության պատկեր, որն արտացոլում է ոչ թե իրականությունը, այլ իրենց ցանկություններն ու նախապաշարմունքները»: Այն, որ պետությունները ձգտում են առավելագույնի հասցնել իրենց իշխանությունը՝ ի շահ ինքնապահպանման, ռեալիզմի տեսության կենտրոնական դրույթն է: Հայաստանի օրինակը, հավանաբար, հուշում է, որ պատմական տրավման՝ զուգորդված ինքնիշխանության սահմանափակ

փորձի հետ, կարող է պետություններին կամավոր կերպով մղել դեպի ինքնակործանարար քաղաքականություն: Հայաստանի ապագան, ինչպես ցանկացած այլ երկրի, գտնվում է նաև իր հարևանների ձեռքերում: Ադրբեջանի զինված ուժերը Բաքվի համար ավելի շատ տարբերակներ են շահել արտաքին քաղաքականության համար, քան նա երբևէ ունեցել է: Հայաստանն այլևս գոյություն չունի նույնիսկ Ռուսաստանի ստվերում: Թուրքական օգնությունն ադրբեջանական բանակին պատրաստելու և զինելու հարցում վճռորոշ նշանակություն ունեցավ Ադրբեջանի հաղթանակի համար, սակայն, պարադոքսալ կերպով, Ադրբեջանն, իր նպատակների մեծ մասին հասնելով Ղարաբաղում, այլևս Թուրքիայի կարիքը չունի, ինչպես որ ուներ: Թե ինչպես կձգտի Բաքուն օգտագործել իր նոր անկախությունը, մնում է սպասել: Ավելին, Ալիևի՝ Երևանի, Զանգեզուրի և Գյոյչայի (Սևան) շարունակական բնութագրումները որպես «մեր պատմական հողեր», Հայաստանում միայն զզվանք կառաջացնեն, իսկ դրանից դուրս՝ անկայունություն և ռևանշի ցանկություն հայերի մոտ: Ավելի խոստումնալից կլինի Ալիևի կողմից ապագայում խաղաղության, համագործակցության և զարգացման հնարավորությունների ճանաչումը: Ինչպես Ղարաբաղյան առաջին պատերազմը, այնպես էլ երկրորդն ավարտվել է հրադադարով, ոչ թե խաղաղության պայմանագրով, ընդ որում՝ տարրական զինադադարով: Գերմանացի ռազմական տեսաբան, պատմաբան, պրուսական գեներալ-մայոր Կարլ Կլաուզևիցի հորդորն այն մասին, որ պատերազմում «արդյունքը երբեք վերջնական չէ»՝ 2020 թվականին Ադրբեջանի համար նույնքան կարևոր է, որքան 1994 թվականին Հայաստանի համար էր, և ինչը հայերի կողմից չգիտակցվեց: Ալ-Ջազիրա հեռուստատեսային ցանցն արձանագրում է, որ «Թուրքիան խրախուսում էր Ադրբեջանին ավելի ինքնավստահ լինել», Թուրքիան խոստացել էր «անվերապահ» աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին: Ադրբեջանն ու Թուրքիան 2020-ի հուլիս-օգոստոս ամիսներին համատեղ զորավարժություններ են անցկացրել, իսկ Թուրքիան իր F-16 կործանիչներից երկուսը թողել է ադրբեջանական Գյանջա քաղաքում: Մինչդեռ Թուրքիայի կողմից Ադրբեջանին զենքի վաճառքն այս տարի աճել է վեց անգամ: Վաճառքները ներառել են թուրքական արտադրության Bayraktar TB2 բարդ անօդաչու թռչող սարքեր: Թուրքիայի աջակցությունը Ադրբեջանին դուրս է եղբայրական սիրուց. Ադրբեջանը վճռորոշ նշանակություն ունի Թուրքիայի էներգետիկ անվտանգության համար և հիմնական ներդրող է թուրքական հիվանդ տնտեսության համար: Անկարայի գազի ներկրումն Ադրբեջանից 2020 թվականի առաջին կիսամյակում աճել է 23 տոկոսով: Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը՝ SOCAR-ը, դարձել է Թուրքիայում ամենամեծ օտարերկրյա ներդրողը: Թուրքիան նաև նպատակ ունի դառնալու ազդեցիկ տարածաշրջանային տերություն և ցանկանում է, որ ավելի շատ մասնակցություն ունենա Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ապագա քաղաքական կարգավորման գործում:

Անկարան ԵԱՀԿ Մինսկի միջնորդական խումբը համարում էր անարդյունավետ: Թուրքիան Կովկասում իր ազդեցությունը մեծացնում է Ռուսաստանի վրա ազդեցություն ձեռք բերելու համար, Թուրքիան ցանկանում է Ռուսաստանի նկատմամբ ձեռք բերել լծակներ, որոնք նա կարող է օգտագործել Սիրիայում կամ Լիբիայում: Թագավորական ռազմաօդային ուժերի լեյտենանտ Քրենուել քոլեջի օդային և տիեզերական պատերազմի դպրոցի հրահանգիչ **Քրիս Ուելանը, իր «Օդային և տիեզերական հզորության վերանայում» հոդվածում** (https://www.raf.mod.uk/what-we-do/centre-for-air-and-space-power-studies/aspr/aspr-vol25-iss2-3-pdf/) գրում է, որ հիմնականում իսրայելական և թուրքական հետախուզական և գրոհային տեխնիկայի միջոցով թիրախավորելով հայկական հակաօդային պաշտպանությունը, ադրբեջանցիները կիրառեցին նոր մոտեցումներ, օրինակ՝ խորհրդային ժամանակաշրջանի Antonov AN-2 գյուղատնտեսական ինքնաթիռները վերափոխվել էին որպես անօդաչու համակարգեր, որոնք թռչում էին, որպես մեծ, դանդաղ շարժվող խաբեբաներ՝ գայթակղելու համար հայկական հակաօդային պաշտպանությանը, ու ակտիվացնելու և բացահայտելու հայկական դիրքերը: Գործողությունը ադրբեջանցիներն անվանել են «Վայրի աքիս»: Հայկական ՀՕՊ համակարգերը ոչնչացվում էին օդից: Տանկերը և այլ զրահամեքենաները ամրացված ծածկոցներում եղել են հեշտ թիրախներ, և տասնյակներով ոչնչացվել են մինչև հակամարտության ավարտը: Լեռնային տեղանքը, որը հսկայական առավելություն էր տվել հայ պաշտպաններին Լեռնային Ղարաբաղի նախկին հակամարտություններում, սկսեց աշխատել նրանց դեմ: Մի քանի ոլորուն լեռներով անցնող ճանապարհները Հայաստանին մաններելու սահմանափակ հնարավորություններ էին տալիս: Հակահարձակման նպատակով զորքերի զանգվածային տեղափոխության հայկական փորձերը խափանում էին օդից կամ օդից ուղղորդված հրետանու միջոցով: Եվ վերջապես անդրադառնանք West Point- ռազմական ակադեմիային «Ժամանակակից պատերազմի ինստիտուտի» (MWI) մասնագետներ Ջոն Սփենսերի և Հարշանա

Գուրհուի «Շուշի քաղաքի մարտերը և 2020 թ. Լեռնային Ղարաբաղյան պատերազմի բացած դասերը» (https://mwi.westpoint.edu/the-battle-of-shusha-city-and-the-missed-lessons-of-the-2020-nagorno-karabakh-war/) աշխատությանը, որը վերաբերվում է պատերազմի ամենածանր արարին՝ Շուշիի անկմանը:

Ջոն Սփենսերը ժամանակակից պատերազմի ինստիտուտի քաղաքային պատերազմի ուսումնասիրությունների ղեկավարն է, MWI-ի Urban Warfare Project-ի համատնօրենը և Urban Warfare Project Podcast-ի հաղորդավարը: Նախկինում նա ծառայել է որպես բանակի ռազմավարական հետազոտությունների խմբի շտաբի պետ: Նա քսանհինգ տարի ծառայել է որպես հետևակային զինծառայող, որը ներառում է երկու մարտական գործողություն Իրաքում: Հարշանա Գուրհուն միջազգային հարաբերությունների ոլորտում գիտական բակալավրի կոչում է ստացել Սեթոն Հոլ համալսարանի դիվանագիտության և միջազգային հարաբերությունների դպրոցում: Հարշանան ժամանակակից պատերազմի ինստիտուտում հետազոտող պրակտիկանտ է և ներկայումս հետազոտություն է անցկացնում, որը գնահատում է, թե ինչպես է AI (արհեստական բանականություն) համակարգերի նկատմամբ վստահության մակարդակն ազդում մարտադաշտում մարտավարական պատրաստվածության վրա: Բարեխիղճ հեղինակները ներկայացնում են Շուշիի անկման ժամանակագրությունը, հոկտեմբերի 28-ից սկսած: Նրանք արձանագրում են, որ «հոկտեմբերի 28-ից հոկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի հատուկ նշանակության ջոկատները գործողություններ են իրականացրել Շուշին մեկուսացնելու և քաղաքի պաշտպանությունը խափանելու համար: Ըստ որոշ տեղեկությունների՝ ադրբեջանական այս ուժերից չորս հարյուրը հինգ օր շարունակ քայլել են անտառներով ու ձորերով՝ հատկապես զգույշ լինելով և խուսափելով խիստ հսկվող Լաչինի միջանցքից և շրջակա գյուղերից: Նրանք բաժանվել են հարյուր հոգուց բաղկացած խմբերի, ըստ տեղեկությունների, որպեսզի կարողանան քաղաքին մոտենալ բազմաթիվ կողմերից և տարբեր նպատակներով: Հատուկջոկատայիններից շատերը, առանց կրակային աջակցության, բարձրացել են անպաշտպան մնացած զառիթափ ժայռերի վրա: Հայերին թվում էր, կամ թե համոզված էին, որ ադրբեջանական ուժերը հիմնականում հարձակվելու են գլխավոր ճանապարհների ուղղությամբ: Մթության ծածկը, Լաչինի շարունակվող գրոհը և պաշտպանների անփութությունը թույլ տվեցին ադրբեջանական հատուկ գործողությունների ջոկատներին իրենց վճռական քայլը կատարել՝ անանցանելի թվացող անտառներով և լեռնային տեղանքով գաղտնի խոցել Շուշիի պաշտպանությունը: Հոկտեմբերի 30-ին ռազմական բախումներ են գրանցվել Շուշիից ընդամենը հինգ կիլոմետր դեպի արևելք: Սակայն, հեղինակները գտնում են, որ կռվի այս փուլում պաշտպանվող հայկական ուժերը դեռևս պահպանում էին մարտավարական առավելությունը,

քանի որ վերահսկում էին Շուշին շրջապատող լեռները: Ադրբեջանական ուժերը դարանակալվել և մեծ կորուստներ են կրել քաղաք տանող ձորերում, և երբ փորձել են ճանապարհով մոտենալ քաղաքին, հաճախակի ենթարկվել են հրետանու, հրթիռների և հեռավոր դարանակալումների: Նոյեմբերի 4-ի ուշ երեկոյան տեղեկություններ ստացվեցին, որ ադրբեջանական թեթև հետևակները կռվում են Շուշիի հարավային ժայռերի ստորին հատվածում գտնվող Դաշալթի գյուղի մոտ գտնվող ճանապարհի համար: Այդ օրն ադրբեջանական ուժերը գրավեցին նաև Շուշիից հարավ գտնվող լեռնաշղթան և Շուշին Լաչին քաղաքին կապող միջանցքի առանցքային հատվածները: Ադրբեջանական զինուժը նաև ականանետերով ուժեղացրել է քաղաքը շրջապատող հայկական պաշտպանական դիրքերի գնդակոծությունը: Նոյեմբերի 5-ի ուշ երեկոյան ադրբեջանական հատուկ նշանակության ստորաբաժանումների մի մասը հասել էր գլխավոր ճանապարհ և կարողացել էր արգելափակել Շուշիի պաշտպանությանը օգնելու փորձ կատարող ուժերին: Սա, զուգակցված Հաքարի գետի վրա գտնվող առանցքային կամրջի կործանման հետ, նշանակում էր, որ Շուշիին քիչ օգնություն կհասցվի, քանի որ քաղաքն ակնհայտորեն շրջապատված էր առնվազն երեք հիմնական ուղղություններից: Նոյեմբերի 6-ին ադրբեջանական զորքերը հասել են քաղաքի ծայրամասեր: Վաղ առավոտյան տեղեկություններ հայտնվեցին, որ Հայաստանի ԱԱԾ նախկին պետ Արգիշտի Քյարամյանը, ով նշանակվել էր Շուշիի պաշտպանության կազմակերպման համար պատասխանատու զինվորական հրամանատար, լքել է քաղաքը: Քյարամյանի հեռանալու մասին լուրերը տարածվելուց շատ չանցած՝ ադրբեջանական ուժերը ներթափանցեցին Շուշի: Երբ ադրբեջանական ուժերը սկսեցին մուտք գործել քաղաք, նրանք մոտ տարածությունից ներքաշեցին պաշտպանվող հայերին փողոցային ծանր մարտերի մեջ: Հաղորդվում էր, որ քաղաքի ներսում հայկական ուժերը բաղկացած են ավելի քան երկու հազար զորքից՝ զրահատեխնիկայի և ծանր հրետանու հետ միասին: Ադրբեջանական զինուժը հրթիռահրետանային նռնակների և շարժական հակատանկային կառավարվող հրթիռների միջոցով ոչնչացրել է մի քանի տանկ և հետևակի մարտական մեքենաներ: Ըստ տեղեկությունների, օգտագործվել

են ՀԱՊԿ-ում Հայաստանի դաշնակից Բելառուսի տրամադրած «Պոլոնեզ» բազմակի հրթիռային համակարգերը և հրետանին, որոնք այդ պահին տեղափոխվել են քաղաքի սահմաններին ավելի մոտ: Նոյեմբերի 7-ին տարածքը պատել է մառախլապատ եղանակը: Սա զգալիորեն սահմանափակեց ադրբեջանական ուժերի կողմից օդային դիտորդական և հարվածային միջոցների օգտագործումը, ինչը նրանց նման առավելություն էր տվել պատերազմի ողջ ընթացքում: Անբարենպաստ եղանակը խոչընդոտեց TB2 Bayraktar անօդաչու թռչող սարքերի կիրառմանը, ինչը հնարավորություն տվեց հայկական ուժերին առավելագույնս օգտագործել իրենց զրահատեխնիկան՝ T-72 տանկերը և հետևակի մարտական մեքենաները, հակահարձակման համար քաղաքի ներսում: Չնայած հայերի հակահարձակմանը, ադրբեջանական ուժերը պահպանել են իրենց դիրքերը: Նրանք պաշտպանական գիծ կազմեցին Շուշիի անտառներում և հետ մղելով հայկական երեք հակագրոհները, վերադարձան հարձակման՝ գրավելով Շուշիի գործադիր իշխանության շենքը և սկսեցին դուրս մղել հայկական ուժերին, դիտավորյալ մաքրելով քաղաքի շենքերն ու ավելի մեծ տարածքները: Շուշիի համար մղվող ճակատամարտը ի վերջո հանգեցրեց շենք-շենք մերձամարտի: Նոյեմբերի 8-ի առավոտյան Արցախի պաշտպանության նախարարությունը հայտնել էր, որ ամբողջ գիշեր շարունակվում են ինտենսիվ մարտեր Շուշին շրջապատող առաջնագծի երկարությամբ: Հայաստանը նաև պնդում էր, որ իր ուժերը խոցել են ադրբեջանական երեք անօդաչու TB2 Bayraktar թռչող սարքեր և օրվա ընթացքում ոչնչացրել քսան զրահամեքենա և չորս տանկ: Նոյեմբերի 9-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց Շուշիի նկատմամբ լիակատար հաղթանակի և վերահսկողության մասին, ինչն, ի սկզբանե հերքվեց Հայաստանի կողմից: Ամբողջովին կիսում ենք հեղինակների հետևյալ տեսակետը. «Լեռնային Ղարաբաղի 2020 թվականի պատերազմի դասերը դեռ պետք է ամբողջությամբ բացահայտվեն: Այս վերլուծությունը պահանջում էր բազմաթիվ արտասահմանյան զեկույցների և լուրերի թարգմանություն, սոցիալական մեդիայի հայտարարությունների և տեսագրությունների վավերացում, և ճակատային գծերի մասնակի և երբեմն հակասական զեկույցների ճշգրիտ պատկերի հավաքում: Ռազմական վերլուծաբանները, միջազգային հարաբերությունների մասնագետները և այլ խմբեր սկսել են ընդգծել պատերազմի եզակի կողմերը՝ սկսած արդիականացված ադրբեջանական զինուժի գերակայությունից, որը հագեցած է նորագույն տեսակի անօդաչու թռչող սարքերով և կրակային աջակցության հարթակներով, մինչև այս պատերազմի՝ Ռուսաստանի և Թուրքիայի իրականացված աշխարհաքաղաքական պրակտիկան: Այս պատերազմը նաև ընդգծեց քաղաքային պատերազմի հիմնական դասերը, որոնք արժանի են ուշադրության: Այս դասերը ներառում են հետևյալը. քաղաքները պատերազմի ժամանակ ունենում են գործառնական, ռազմավարական և օպերատիվ նպատակներ: Նրանք ազգերի քաղաքական և տնտեսական ուժի կենտրոններն են: Քաղաքային որոշիչ տեղանքը գրավելու և պահելու համար անհրաժեշտ է ժամանակակից, համատեղ ուժային կարողությունների ամբողջական փաթեթ: Օդային գերազանցությունը, ռմբակոծությունները, հեռահար ճշգրիտ հարվածները և անօդաչու ինքնաթիռների համակարգերը բոլորն էլ հնարավորություն են ընձեռում մարտական գործողությունների ճիշտ կազմակերպմանը: Միայն հարձակողական անօդաչու սարքերը չէին, որ հաղթեցին Լեռնային Ղարաբաղի պատերազմում: Քաղաքային պատերազմը նաև միայն հետևակային կռիվ չէ: Պատերազմի վճռական գործողությունը՝ Շուշիի ֆիզիկական գրավումը, պահանջում էր սպառազինության համակցված հնարավորություններ, որոնք կիրառում էին հատուկ գործողության ուժերը, կրակի, զրահատեխնիկայի, և համազորային հետևակի օգնությամբ: Շուշիի համար երկու մարտերն էլ ցույց են տալիս, որ քաղաքային տեղանքը պաշտպանելիս պաշտպանը պետք է ունենա շերտավոր պաշտպանական պլաններ, որոնք ներառում են ռազմական երևակայություն և պատերազմական խաղեր: Եվ ադրբեջանական (1992 թ.), և՛ հայկական (2020 թ.) ուժերը քաղաքը շրջապատող ժայռերը թողել են անպաշտպան՝ ենթադրելով, որ դրանք անանցանելի են: Մինչ վերլուծաբաններն ու հետազոտողներն ուսումնասիրում են 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի պատերազմը, նրանք կշարունակեն արժեքավոր և լայնածավալ դասեր բացահայտել ապագայի պատերազմների համար: Արդյո՞ք կարճատև հակամարտությունը ազդարարում է պատերազմի բնույթի փոփոխություն, գուցե դեռ պարզ չէ: Բայց մի բան, անշուշտ, պարզ է, որ զինվորականները պետք է պատրաստ լինեն կռվելու, և առաջին հերթին կռվելու քաղաքների համար: Աշխարհի գերհզոր տերությունների «ուղեղային կենտրոնները» հետևություններ են անում մեր պարտությունից: Մնում է, մենք կարողանանք հետևություններ անել:

Հաջորդիվ, հավանաբար շարքի վերջին հոդվածում, կներկայացնենք ռուս ռազմական վերլուծաբանների տեսակետները և մոտեցումներն Արցախյան երկրորդ պատերազմի վերաբերյալ, որոնց մի մասը նրանց հետ հեղինակի անձնական զրույցների հանրագումարն է:

Համշենահայության ինքնապաշտպանական մարտերը 1915-1923 թթ. (1915-16 թվականներ. մաս առաջին)

Հայկազուն Ալվրցյան
Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր

Համշենահայության դիմադրության պատմությունը քիչ ուսումնասիրված, բայց հայ ժողովրդի դիմադրական պայքարի ամենահերոսական էջերից է: Նա անդադար է նաև այն առումով, որ, սկսվելով 1915-ի ամռան ամիսներին, շարունակվեց ութ երկար տարիներ. նախ՝ երիտթուրքական իշխանությունների, ապա՝ նրանց ազգային քաղաքականությունը որդեգրած Մուսթաֆա Քեմալի իշխանության դեմ:



1. Հակահայկական տրամադրությունների բորբոքումը

Բարենորոգումների ծրագիրը[1], որը Օսմանյան կայսրությունը միշտ դիտել էր որպես եվրոպական պետությունների կողմից կայսրության ներքին գործերին միջամտելու քաղաքականություն, հաստատվելուց հետո ընդունվեց որպես թշնամական քայլ. «…մանավանդ երբ ցարական Ռուսաստանը եղաւ զայն գլխաւորողը: Թուրքերը հայ ժողովուրդին վրայ սկսան նայիլ իբրև ներքին թշնամիներ: Լեզու գտնելու որևէ ճամբայ չկար այլևս»[2]:

Արդեն 1913 թ. արևմտահայության հասարակական-քաղաքական շրջանակները զգում էին թուրք-մուսուլմանական հանրության ընդերքում խմորվող հակահայկական տրամադրությունները, որոնք շուտով վերածվելու էին ճնշումների, հալածանքների, բանտարկությունների և ջարդերի:

Մթնոլորտն առավել շիկացած էր Արևմտյան Հայաստանի գավառներում, քան քաղաքական կենտրոններում, ինչպիսին Պոլիսն էր կամ այլ քաղաքներ: 1914 թ. հունիսին Սամսունում տեղի ունեցած մի ժողովի ժամանակ այս մտահոգությունների մասին բավական կտրուկ և ազդեցիկ ոճով է արտահայտվում նշանավոր ազգային-հասարակական-կուսակցական գործիչ Հարություն Շահրիկյանը. «Մահուան գերանդին շարժման մէջ է և օր մըն ալ կրնա ձեր ամէնուդ գլուխները թոցնել... Հինգ փարայի արժէք չունին ո՛չ պետութիւններու խոստումները, ո՛չ բարենորոգումներու ծրագիրը, ո՛չ Պոլիս հասած Եւրոպացի բարենորոգիչները... Շատ ջանք թափեցինք այդ ելքերուն հասնելու համար: Յանուն համերաշխութեան մէկ կողմ դրինք մեր բուն հայեցակէտը. մեր հաւատոյ հանգանակը՝ ժողովուրդի ինքնապաշտպանութիւնը»[3]: Նա զգուշացնում է, որ հարմար առիթի դեպքում կառավարությունը աղբանոց կնետի բարենորոգումների ծրագիրը և հաշվի կնստի հայերի հետ: Եվ քանի որ ժողովում քիչ չէին մարդիկ, որոնք չէին կիսում Շահրիկյանի հայացքները, խոսքի վերջում, նա դառնացած հարց է տալիս. «Հիմա հարց կու տամ, պատրա՞ստ էք այդ ահեղ ժամին ձեզ պաշտպանելու...»[4]:

Իրադարձությունները գալիս են հաստատելու այս մտահոգությունները: Շուտով իշխանությունների հրահրմամբ կայսրության տարբեր վայրերում սկսվում են հայերի նկատմամբ բռնություններ, ծեծ ու ջարդ, ունեցվածքի թալան և նույնիսկ սպանություններ, որոնք չեն դադարում մինչև 1915 թ. բռնի տեղահանություններն ու կոտորածները: Բազմաթիվ դեպքերից հիշենք մեկը:

Այսպես՝ Կարնո նահանգի Բաբերդ քաղաքում, որը գտնվում է Կարին-Տրապիզոն ճանապարհի վրա, և շրջակա գյուղերում 1914 թ. սեպտեմբերին՝ նախքան Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելը, իշխանություններն սկսում են զանգվածային բռնություններ, որոնց վերաբերյալ ՀՅԴ արխիվներում պահպանվել են բավականին մանրամասն վկայություններ: Թիվ 769-9 փաստաթղթում ականատեսը պատմում է, որ Կ. Պոլսի և Տրապիզոնի դեպքերից հետո Բաբերդի շրջակա գյուղերում սկսվում են ջարդեր, առևանգումներ և թալան: Քաղաքի բնակիչները փակվում են տներում և դուրս չեն գալիս. «Սեպտ. 30էն մինչև հոկտ. 14ը ստիպուեցաւ ժողովուրդը փակել եկեղեցիները, դպրոցները, վաճառատունները, գործարաններն ու ամէն ինչ և ապաստանիլ տունները»[5]: Քաղաքացիական և ռազմական իշխանություններին հղված բազմաթիվ նամակները մնում են անպատասխան:

Վերջապես հոկտեմբերի 13–ին Երզնկայից ժամանում է մեկ զինվորական վաշտ: Ժողովուրդը կարծում է, որ վաշտը եկել է իրեն պաշտպանելու, ուստի հաջորդ օրը մարդիկ տներից դուրս են գալիս, շատե-

ը գնում են շուկա, բացվում է դպրոցների մի մասը: Երկու շաբաթ շարունակ շրջակա հայկական գյուղերն ավերած և կողոպտած Սալիհ Ձեքի բեյը[6] որոշում է բնաջնջել քաղաքի հայությանը: Նրա հրամանով շրջակա գյուղերից և քաղաքից հավաքված ավելի քան 6000 մոլեռանդներից բաղկացած թուրքական խուժանը կանոնավոր զորքի աջակցությամբ «...մոլեգնաբար յարձակեցաւ անզէն, չդիմադրող և անպաշտպան խեղճ հայերու վրայ, և առտուան ժամը 4էն սկսեալ մինչև հետևեալ առաւոտ անխնայ ջարդեց, աւերեց ու թալլեց տուն տեղ և բոլոր շուկան (հայերունը միայն, յոյներու համար բացարձակ խտրութիւն կար) առանց շիւղ մը իսկ թողնելու»[7]: Այրվում են տներ, մարդիկ են ողջակիզվում հրդեհի մեջ կամ ծխախեղդ լինում: Այդ տներից մեկում պատռում են հղի կնոջ որովայնը և երեխային սվինի ծայրին անցկացնում և բարձրացնելով ցուցադրում, որին ի պատասխան՝ հոշոտված կնոջ (Վարդխաթուն Այվազյան) հարևան Հովհաննես Գյիճյանը իր պատուհանից հրացանազարկ է անում 4 թուրքի ու ինքն էլ հրո ճարակ դառնում իր բոցավառվող տան մեջ: Մյուս անձը, որը դիմադրում է իր վրա հարձակված 20 թուրքի, երեքին վիրավորում է և ինքն էլ սպանվում[8]:

Բաբերդի շուկան ու փողոցները լեցուն էին դիակներով: Իշխանությունն ամեն ինչ արեց դիակները թաքցնելու համար, այդ թվում՝ մեծ մասը թափելով Ճորոխ գետը: Քաղաքը գրեթե պարպվեց հայերից. «Բաբերդի հայութիւնը՝ մանաւանդ երիտասարդութիւնը ի սպառ ոչնչացաւ, ամէն հասակէ և դասակարգէ հարիւրաւոր երիտասարդներ (որոնց 90 %-ը արական սեռի կը պատկանէր, ինչ որ իրենց յատուկ նպատակը կը կազմէր արդէն) զոհ գնացին անգութ և բարբարոս խուժանին վայրագութեանը և խժդժութեանը»[9]:

2. Ինքնապաշտպանության հարցը

Բալկանյան պատերազմներից հետո երկրում իշխող տրամադրությունները լավագույնս արտահայտված են Հայ Յեղափոխական Դաշնակցության Տրապիզոնի կոմիտեի Ինքնապաշտպանության մարմնի մի կոչի մեջ, որով նա դեռևս 1913 թ. փետրվարին անհանգստություն է հայտնում հայ ժողովրդի նկատմամբ իշխանությունների ապագա գործողությունների վերաբերյալ և կոչ անում հայ ժողովրդին՝ գալիք կոտորածներին դիմագրավելու և բնաջնջումից խուսափելու նպատակով մասնակցել ինքնապաշտպանական միջոցառումներին:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ[10]

Վերջերս արագաբար իրարու յաջորդող քաղաքական դէպքերը մեզ հայերուս համար ստեղծեցին այն տեսակ ճգնաժամային դրութիւն մը, որ եթէ այս անգամ ալ՝ չփորձուած անցեալի փխուր դասերէն չշմբռնենք այս պատմական րոպէին նշանակութիւնը եւ անտարբեր մնանք, մենք մեր ձեռքով պատճառ կը դառնանք հայկական հարցի յաւիտենական փակման եւ գուցէ հայ ժողովրդի ֆիզիքական բնաջնջման:

Ներկայացեր է այն տեսակ մի վայրկեան ուր հայ ժողովրդի ամէն խաւերն ալ իրենց հնարաւոր միջոցներով պէտք է լայն չափով իրենց ջերմ աջակցութիւնը ցոյց տան գործնականապէս: Հայկական հարցի վերարծարծումը, կառավարութեան շփոթ կացութիւնը, պատերազմի ճախողութեանց՝ իսլամ հասարակութեան հոգեբանութեան վրայ ի գործ դրած վատթար ազդեցութիւնը, եւ վերջապէս քրիստոնէից հակառակ երեւցած շարժումը ստեղծած են ամբողջ երկրին մէջ հակառակ հոսանք մը որ կրնայ մէկ օրէն միւսը պայթիլ եւ սպառնալ մեր ֆիզիքական գոյութեան:

Հ. Յ. Դաշնակցութիւնը պատմական այս ծանր րոպէին, իրեն պարտականութեան գիտակ, ձեռնարկած է հայկական ինքնապաշտպանութիւնը կազմակերպել: Ինքնապաշտպանութեան պատրաստ ըլլալը լաւագոյն եւ միակ միջոցն է որպէսզի խուժանը դիւրին որսի իր ախորժակը չտրէ:

Ինքնապաշտպանութիւնը ընդհանուր ազգային գործ է, եւ հետեւաբար այս գործին պէտք է նուիրուին բոլոր հայերը անխտիր:

Հ. Յ. Դաշնակցութիւնը կոչ կ'ընէ ներկայ ազդով, որպէսզի լայն չափերով մասնակցինք այն հանգանակութեան, որ այս նպատակով բացուած է:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԾՈՎԱՓԻ[11] ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆ
1913 Փետր. 2

Ցավոք, մարգարեական այս կանխատեսումներին Տրապիզոն քաղաքի բնակչությունը լրջությամբ չի վերաբերվում. նախատեսված էր հանգանակել 5000 ոսկի, «...որ Տրապիզոնի նման բարեկեցիկ համայնքի մը համար համեստ զոհողութիւն մըն էր և սակայն մեծահարուստները խիստ անտարբեր գտնուեցան և հազիւ կարելի եղաւ 130 ոսկի հաւաքել: Մարմինը, նկատի առնելով այս խայտառակ վերաբերումը, հաւաքած դրամը ետ վերադարձուց և հանգանակութիւնը դադրեցուց՝ այս անգամ ազդարարութեամբ մը, որ կը վերջանար սա տողերով.

«Այս ցաւալի և դատապարտելի պատկերին հանդէպ Հ.Յ.Դ. Ինքնապաշտպանութեան Մարմինը որոշեց.

ա. Դադրեցնելով հանգանակութիւնը՝ ետ վերադարձնել ցարդ ստացած գումարները.

բ. Այժմէն յայտարարել, թէ ինք չի կրնար ստանձնել տեղւոյս մէջ հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան պատասխանատուութիւնը.

գ. Ապագա պատմութեան առջև պատասխանատուները ճշդելու համար, հանգանակութիւնը բացող և գոցող երկու տոկումենտները ուղարկել Ժընև, արխիւի մէջ պահելու համար»:

13 Փետր. 1913

Ակնհայտ է, որ այս հայտարարությունը ոչ միայն դառն հիասթափության հետևանք է, այլև անխուսափելի արհավիրքի նկատմամբ մեծահարուստների զգոնությունն արթնացնելու մի վերջին փորձ է, որը դարձյալ մնում է անարձագանք:

ՀՅԴ Ինքնապաշտպանության բյուրոն այս կոչից երկու շաբաթ անց հատուկ նամակով դիմում է Սամսոն քաղաքի ՀՅԴ Կենտրոնական կոմիտեին, որի կազմակերպած հանգանակությունը ինքնապաշտպանական նպատակների համար հաջող ընթացքի մեջ էր: Նամակը, ի թիվս բազմաթիվ հարցերի, անդրադառնում է նաև այս խնդրին: Այն սկսվում է Տրապիզոնի կառույցի ձեռնարկած հանգանակության վերաբերյալ մտահոգությամբ.

«ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՈՅԷՆ ՍԱՄՍՈՆԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷԻՆ[12]

1913 փետր. 15, Պոլիս

Ընկերներ,

Շատ ուրախ ենք որ ինք[նապաշտպանութեան] համար ձեր հանգանակութիւնը յաջող կ՚երթայ. ուրախ ենք մանաւանդ անոր համար, որ ձեր դրացի Տրապիզոնէն այդ հարցի մասին ստացած տեղեկութիւնները շատ անախորժ է:

Ամերիկայի մեր ընկերները մեծ եռանդով սկսած են այդ գործին եւ անոնց ղրկած դրամները այդ նպատակին համար՝ պատրիւ կը բերէ նոյն կազմակերպութեան, եւ իրաւունք ունինք սպասելու որ ծովափնեայ քաղաքները այս գործի մէջ իրենց պատուաւոր բաժինը ունենան»:

Օսմանյան կայսրության մեծ քաղաքների՝ հատկապես Կ. Պոլսի, Զմյուռնիայի (Իզմիրի), Տրապիզոնի, մասամբ՝ Սամսոնի ունևոր հայերը ոչ միայն չէին մասնակցում ինքնապաշտպանության կազմակերպման աշխատանքներին, այլև այդ նպատակի համար կազմակեպվող դրամահավաքներից էին խուսափում: Ծնունդով տրապիզոնցի հայտնի ազգային-կուսակցական գործիչ և արձակագիր Մալխասը (Արտաշես Հովսեփյան) իր հուշերում գրում է, որ հայ ունևորները Սահմանադրության առաջին տարում թիթեռների հույլի նման պտտվում էին Դաշնակցության շուրջ՝ ավելի շատ տուրք տալով օրվա տրամադրություններին, քան առաջնորդվելով ազգային պարտականությունների գիտակցությամբ: Սակայն, մտահոգ սեփական շահի անվտանգության պահպանման խնդրով, նրանք աստիճանաբար անցնում են թուրքական կուսակցությունների հովանու տակ, «...ուր շատ աւելի մեծ հնարաւորութիւն կար իրենց անձնական շահերը պաշտպանելու: Դաշնակցութեան մէջ ու շուրջը դարձեալ մնացին արհեստաւորութիւնը, խիստ սահմանափակ գործաւորութիւնն (բանվորություն– Հ.Ա.) ու գյուղացիական զանգուածը»[13]:

Սահմանադրության առաջին օրերից, գրում է Մալխասը, ազատ շարժի հնարավորության հետ հնարավորություն ստեղծվեց նաև զինելու ժողովրդին: Սակայն այն դեպքում, երբ «Վասպուրականի, Տարոնի, Էրզրումի, Տրապիզոնի նահանգներու ժողովուրդը նիւթական իր ողորմելի միջոցներով կաշխատէր զինուիլ ամէն գնով, մեր մեծապատիւ ունեւորները, իրենց ճարպացած քսակները բոլորովին անմատչելի դարձուցին նման բանի մը համար, մինչեւ որ համազգային ահաւոր աղէտը վրայ հասաւ, երբ մենք

Տրապիզոնը XX դարի սկզբին

անպատրաստ գտնուեցանք: Եւ, ո՛վ հեգնանք, բոցավառուած Իզմիրի մէջ փճացան բազմաթիւ վաճառականական մեծ տներ, որոնցմէ մէկուն կէս կարողութեամբ իսկ կարելի էր զինել նահանգի մը հայութիւնը»[14]:

3. Ինքնապաշտպանական կոիվները Տրապիզոնի գավառում

ա. Տրապիզոն քաղաքը

Տրապիզոն քաղաքի ազգային-հասարակական-քաղաքական կառույցները, գրեթե ողջ հայ բնակչությունը գարնան վերջին-ամռան սկզբին ապրում էին անհանգիստ և տագնապալի օրեր: Ուշագրավ է, որ քաղաքի հայ հարուստները, ովքեր չէին մասնակցել ինքնապաշտպանության կազմակերպման համար դրամահավաքին, ակամա դարձան ինքնապաշտպանության դիմող առաջին զոհերը: Նահանգապետի հանձնարարությամբ նավավարների ղեկավարն առաջարկում է հայ հարուստներին գաղտնի կերպով Ռուսաստան տեղափոխել: 1915 թ. հունիսի 20-ին պայմանավորված ժամին 38 հայ երևելի հարուստների, որոնց խմբում պատահաբար հատնվում են երկու ոչ հարուստներ՝ յոմուրիացի Ադամ Հովսեփյանը և շապինգարահիսարցի զինվոր Անդրանիկը, նստեցնում են նավակ և իբր գաղտնի դուրս գալիս բաց ծով: Շարքով նստած քառասուն հայի դիմաց նստում են քառասուն թուրք հրացանավոր զինվորներ, որոնք որոշ ժամանակ անց հրաման են ստանում սպանել հայերին: Հայերը, որ բոլորն էլ գաղտնի կերպով ատրճանակներ էին վերցրել իրենց հետ, զգալով վտանգը՝ միաժամանակ կրակում են զինվորների վրա: Բոլորն սպանվում են՝ բացի Ադամից և Անդրանիկից: Նրանք դիակները թափում են ծովը, նավակով գաղտնի վերադառնում քաղաք: Անդրանիկի ճակատագիրը հայտնի չէ, բայց Ադամը միանում է լեռներում ապաստանած փախստականներին. «Ադամ մինչև 1943 թ. ողջ էր»[15]: Սա, կարելի է ասել, տրապիզոնցիների առաջին ակամա ըմբոստությունն էր:

Ուշագրավ է հնչակյաններ Գուրգեն (ոստիկան) և Պարույր (բանակի սպա) Սարգսյան եղբայրների և նրանց հայր Հարությունի՝ նահանգապետին սպանելու փորձը: Նրանք ծրագրել էին հրդեհել քաղաքի տեղահանված հայերի տները՝ այսպիսով ողջ քաղաքը հրի մատնելով, ապա թնդանոթով ռմբակոծել քաղաքը: Քաղաքում տիրող խառնաշփոթի և զանգվածային ձերբակալությունների պատճառով ծրագիրը խափանվում է. երկու եղբայրներն էլ ձերբակալվում են: Որդիների ազդանշանի ուշանալը տեսնելով՝ հայրն այրում է սեփական տունը[16]:

Զինված դիմադրություն ցույց տվող հաջորդ անձը Տրապիզոնում բնակվող զեֆանոսցի Թոնեալիի Մկրտիչն է, որը պայմանավորվում է մի խումբ դաշնակցականների գաղտնի տեղափոխել Շանա՝ միանալու համար դաշնակցական խմբերին: Սակայն վերջին պահին խմբի անդամները մտափոխվում են և որոշում են մնալ քաղաքում: Մկրտիչը կարող էր միայնակ հեռանալ, բայց որոշում է մնալ և դիմադրություն ցույց տալ: Մի քանի ժամ նա դիմադրում է ժանդարմներին՝ սպանելով նրանցից հինգին: Հաջորդ օրը ժանդարմները թնդանոթ են մոտեցնում Մկրտիչի տանը և այն հիմնահատակ կործանում: Փլատակների տակ զոհվում են նաև Մկրտիչի ընտանիքի անդամները:

Տեղահանության առաջին օրը դաշնակցականներ Շեյրանլիի Սեդրակը և Քերեսթեջիի Երվանդը որոշում են դիմադրել իշխանություններին: Նրանք երկու ընտանիքով դիրքավորվում են Սեդրակի տանը և մի քանի ժամ կռվում տունը շրջապատած թուրքերի դեմ՝ սպանելով շատերին, իսկ վերջին փամփուշտներով սպանում են ընտանիքի անդամներին և միմյանց:

Չի արտագաղթում նաև Ղազար Հարությունյանը, որ մեկ ամիս թաքնվելուց հետո որոշում է հեռանալ քաղաքից, սակայն քաղաքի մատույցներում հանդիպում է ժանդարմների, որոնց հետ կռվի է բռնվում: Մեկ ժամ կռվելուց հետո, երբ մութն ընկնում է, նա աննկատ հեռանում է, թաքնվում հույների մոտ, իսկ ռուսների կողմից Տրապիզոնի գրավումից հետո կամավորականների քառասուն հոգիանոց մի խումբ է ստեղծում և շարունակում պայքարը:

Տրապիզոն քաղաքում, ուր կենտրոնացած էր մեծաքանակ ռազմական ուժ, ժանդարմական ջոկատներ և ոստիկանություն, բնականաբար դիմադրություն կազմակերպելն անհնար էր, հատկապես որ դրա համար անհրաժեշտ մարդուժ և զենք էլ չկար: Տրապիզոնցի մի խումբ հայ երիտասարդներ, հասկանալով, որ քաղաքում որևէ կերպ չեն կարողանա զինված դիմադրություն ցույց տալ, հեռանում են՝ Բաթում հասնելու մտադրությամբ: Սակայն ճանապարհին ստիպված են լինում մի քանի ընդհարում ունենալ զինված թուրքական ջոկատների հետ: Ի վերջո համոզվելով, որ անհնար է Բաթում հասնել, միանում են լեռներում ապաստանած խմբերին:

Տարբեր ճանապարհներով գյուղերից և քաղաքներից փոքրիկ խմբերով կամ առանձնաբար հեռացածները, որոնք կարողացել էին խուսափել տեղահանությունից, նաև բանակից կամ քարավաններից մի կերպ փախած-ազատվածները պատսպարվում են լեռներում կամ անտառներում: Կարճ ժամանակի ընթացքում նրանք միանում են արդեն ձևավորված խմբերին կամ համախմբվելով ստեղծում նորանոր խմբեր:

Նման դեպքերից առանձնանում է Գյումուշխանե-Երզնկա խճուղու Թեքքե կայարանում տեղի ունեցածը. տրապիզոնցի տարագիր 100 տղամարդ, մեծ մասամբ Բարիան գյուղից, հարձակվում են ուղեկցող ոստիկանների վրա, անհավասար կռվում մի քանիսը զոհվում են՝ սպանելով մեծ թվով ոստիկանների: Փրկվածները հեռանում են անտառները[17]:

Հայերի տներում իշխանությունները տեղավորում էին այլ շրջաններից բերված գաղթական թուրք-մուսուլմանների: Հայ մարտիկները շատ բնակավայրերում նաև փչացնում էին իրենց արտերի և այգիների բերքը, որ այն բաժին չհասնի գաղթականներին: Շատ դեպքերում նաև սպանում էին նրանց: Նշենք, որ բազմաթիվ հայեր, չհնազանդվելով տեղահանության հրամանին, զենքը ձեռքերին կռվել են և նահատակվել՝ նախընտրելով մահը տարագրությունից[18]:

բ. Յոմուրիայի գյուղախումբը

Տրապիզոնի գավառի Յոմուրիայի գյուղախմբի մեջ մտնող 20-ից ավելի մեծ ու փոքր գյուղերից զուտ հայաբնակ էր միայն Կյուշանա գյուղը: Գյուղերը գտնվում էին լեռների լանջերին, հիմնականում տարածված էին գետերի երկու ափերի երկայնքով: Տները հաճախ գտնվում էին իրարից կես ժամվա հեռավորության վրա, ինչը թշնամուն հնարավորություն չէր տալիս փոքր ուժերով նվաճել այս գյուղերը: Տրապիզոնին ամենամոտ գտնվող գյուղը Զեֆանոսն էր՝ մոտ մեկ ժամ հեռավորության վրա, ամենահեռավոր գյուղերն էին Ուզը և Սյուրմենեն՝ մեկ օրվա հեռավորության վրա: Համշենահայերը հայտնի էին իրենց քաջությամբ և խիզախությամբ, դարավոր փորձը նրանց սովորեցրել էր միշտ զենք պահել և յուրաքանչյուր պահի պատրաստ լինել թշնամուն դիմագրավելու. «Տղամարդը, տունը թէ դուրսը, առանց զէնքի չէր. տաք կամ պաղ զէնք մը պիտի ունենար անպատճառ»[19]:

Գյուղերից շատերն ունեին դպրոցներ՝ 1-2 ուսուցչով: Գյուղախմբի ինքնապաշպանության կազմակերպմամբ զբաղված էր ՀՅ Դաշնակցության Սարափի կոմիտեն, որն ստեղծել էր զինվորական մարմին: Ուշագրավ է, որ դեռևս 1912 թ. հոկտեմբերին կոմիտեն վերադաս մարմնին հղված տեղեկագրի «Ինքնապաշտպանութիւն» բաժնում արձանագրում է. «Նկատելով որ Թուրքիան անակնկալներով յղի երկիր մ'է և պատերազմի[20] հետևանքով կրնան խռովութիւններ և մասսայական ջարդեր յառաջ գալ, որպէսզի այդ տեսակի անակնկալներ կանխէ՝ շրջանիս ընկերներէն կազմուած է թռուցիկ խումբ մը 30 հոգիէ բաղկացած, որ բաժնուած է 4 տասնեակի, շրջանիս կազմութիւնը և ընկերներու յարմարութիւնը նկատի առնելով: Ընկերներու օժանդակութեամբ կազմուած է նաև պահեստի սնտուկ մը, ուր գնուած են մաս մը ռազմանիւթ»[21]:

Տեղահանության ու կոտորածների նախօրեին այս մարմինը կազմում է մարտական ուժերի և զենքերի մանրամասն տեղեկագիր, որի համաձայն «Սյուրմէ-նէն և Եոմուրիան միասին ունէին առնուազն 300-ի հասնող զինական ոյժ մը լաւագոյն զէնքերով, հինգ հարուածային հրացաններով ու տասնոցներով. Ասոնցմէ զատ պակաս չէին նաև ատրճանակները, ծխարձակ հրացաններն ու պաղ զենքերը»[22]:

Տեղեկագիրը պատրաստվել է Տրապիզոնի (Ծովափի) ԿԿ-ի 8-րդ շրջանային ժողովի համար: Այս ծավալուն փաստաթուղթը մանրամասն տվյալներ է պարունակում շրջանի գյուղերի կազմակերպական, տնտեսական և կրթական վիճակի վերաբերյալ: Փաստաթղթից կարելի է պատկերացում կազմել նաև շրջանի բնակչության արտագաղթի և դրա պատճառների մասին: Սակայն ամենահետաքրքիրն ինքնապաշտպանության համար հայթայթվող և պահեստավորվող զենքի և զինամթերքի տվյալներն են: Եվ ուշագրավն այն է, որ, թեև գործի կազմակերպիչը շրջանի ՀՅ Դաշնակցության կոմիտեն է, սակայն զենքի և զինամթերքի համար միջոցները կամավորության սկզբունքով գոյացնում են իրենք՝ գյուղերի բնակիչները և տրամադրում կոմիտեին[23]:

Տեղահանության նախօրյակին Յոմուրիայի բնակչությունը մյուս շրջանների համեմատ թե՛ բարոյահոգեբանական, թե՛ զինական և թե՛ կազմակերպական առումով անհամեմատ լավ վիճակում էր: Սակայն Ջեմալ Ազմին ժողովրդի մեջ ճանաչված մի քանի մարդկանց (քահանաներ տեր Շղա, տեր Ղևոնդ, Կարապետ Մնացականյան) ուղարկում է Յոմուրիա և այլ շրջաններ՝ «...ժողովուրդը համոզելու համար, որ ապստամբութեան չդիմէ» և վստահեցնում է. «Ուրիշ կերպով ոչ մէկ հայու վտանգ չի սպառնար: Կը խոստանամ բոլոր տեղահանուածները ապահով կերպով մինչև վերջին կայանը հասցնել»[24]:

Յոմուրիայի գյուղացիներից շատերը հասկանում էին, որ նահանգապետը խաբում է, բայց նաև չկարողացան ստեղծել այն կարող ղեկավար ուժը, որը ժողովրդին առաջնորդեր վճռական քայլերի: Մինչև հնգօրյա ժամկետի հրահանգը Տրապիզոն քաղաքից և շրջակա գյուղերից հավաքում են 42 ազդեցիկ հայերի և Սամսոն ուղարկելու պատրվակով նավերով դուրս են բերում ծով և բոլորին ոչնչացնում: Բանն այն է, որ զոհվածների մեջ էին նաև Յոմուրիայի Կյուշանա գյուղից Հակոբ Թոռլաքյանը (Միսաք Թոռլաքյանի հայրը), Սարգիս և Կիրակոս Մալխասյանները, Վարելջյան Գրիգորը, Ծինկիլայից՝ Արշակ Հովակիմյանը, որոնք Յոմուրիայի գյուղերում մեծ հեղինակություն ունեին և, ըստ էության, ժողովրդի առաջնորդներն էին: Իսկ երիտասարդներից ամենաազդեցիկ առաջնորդ Միսաք Թոռլաքյանը ՀՅԴ Բյուրոյի հատուկ հանձնարարությամբ գտնվում էր Բաթումում: Ըստ Հ. Հովակիմյանի, ով Մ. Թոռլաքյանի գործընկերն էր, «Միսաքին բացակայութիւնը ճակատագրական նշանակութիւն ունեցաւ գործին ձախողութեան համար»[25]:

Տեղահանությանը պատրաստվելու համար տրված հնգօրյա ժամկետի նախավերջին օրը գյուղերի ՀՅԴ

Բարոնակ Թոռլաքյան

կազմակերպության ղեկավարները ժողովրդին փորձում են հավաքել գյուղերից մոտավորապես հավասար հեռավորության վրա գտնվող մի անտառի բացատում, որ կոչվում էր Չաշուտ փոս[26]: Հավաքվում է 1500 մարդ, այդ թվում՝ նախօրոք լեռ բարձրացած զինված երիտասարդները: Շատերը չեն ներկայանում հավաքին: Բացակայում էին նաև որոշ գյուղերի պատասխանատուներ: Ամենուր տիրում էր տագնապ և անորոշություն:

Ինչ-որ ելք գտնելու համար հավաքին ներկա պատասխանատու անձինք խորհրդակցություն են գումարում, սակայն ստեղծված իրավիճակում դժվար էր որևէ ելք գտնելը: Հեղինակավոր և տարեց մարդկանցից երկուսը՝ Միհրդատ Մազլումյանը և Արտաշես Էքշյանը, կարծիք են հայտնում, որ եղած ուժերով անհնար է ինքնապաշտպանություն կազմակերպել: Խորհրդակցության մասնակից Հ. Հովակիմյանը գրում է. «Միակ ճամբան էր ձգել ամեն մէկը իր կամքին, - ով կ'ուզէ կ'երթա, ով կ'ուզէ կը մնայ: Այդպէս ալ եղաւ»[27]: Որոշման վրա վճռական ազդեցություն են ունենում նահանգապետի խոստումները, որ փոխանցել էր հայ պատվիրակների միջոցով:

Անտառում մնում է 150 մարդ՝ հիմնականում տղամարդիկ, նաև քիչ թվով կանայք, դեռատի աղջիկներ ու պատանիներ, ովքեր բարձրանում են Շանա գյուղի մերձակա Ուզդաղ լեռը: Տարիներ անց Մ. Թոռլաքյանը, հետադարձ հայացքով քննելով և գնահատելով իրավիճակը, գրում է. «Եթե լեռ բարձրացած հայ մարտիկները չհավատային թուրք ոճրագործի տուած «ազնիւ» խօսքերուն, այսօր Տրապիզոնի շրջանի պատմութիւնը թերևս այլ ձևով գրուէր, ինչպէս գրուեցաւ Մուսա լեռան, Շապին-Գարահիսարի, Վանի և Ուրֆայի հերոսամարտերը»[28]:

Այսպիսի անորոշ ու տագնապալի մի օր՝ 1915 թ. հունիսի 19-ին, հանկարծ Կյուշանա գյուղի Դերեբա-

շի թաղում է հայտնվում բաթումցի ավազակապետ Ասլան բեյը՝ իր 500 չեթեներով: Փոքրաթիվ գյուղացիներն անակնկալի են գալիս՝ չիմանալով անելիքները: Նրանց աղմուկ-աղաղակի ձայները հասնում են լեռան վրա և անտառում պատսպարվածներին. հրամանատարությունը հետախույզներ է ուղարկում՝ վիճակը պարզելու նպատակով: Այդ պահին հանկարծ լսվում է հրացանի կրակոց. կրակողը Կյուշանա գյուղի քահանայի որդին էր՝ 16-ամյա Բարունակ Թոռոլաքյանը՝ ապագա հայտնի ազգագրագետը, «Համշենահայերի ազգագրությունը» նշանավոր աշխատության հեղինակը[29]:

Թուրքերը, կարծելով, որ կրակողը միջադեպի վայր հասած հետախույզներից մեկն է, սկսում են հետապնդել նրանց մինչև դիրքերը: Այդ կրակոցն ազդանշան է հանդիսանում, որ կողմերի միջև սկսվի կենաց-մահու գոտեմարտ: Կռվի մասնակիցն այսպես է նկարագրում միջադեպը. «Կէսօրէն ետք ժամը երկուքն էր, երբ մարդկային բազմութեան մը հառաչանքն ու ողբը հասաւ մեր ականջին: Ցնցուեցանք: Կը տանին, կը թալանեն, կ՛առևանգեն, կը լլկեն, կը սպանեն…Ալ այդ բոպէին վհատութիւնն ու վախկոտութիւնը չքացան: Դիմանալ անկարելի էր: Ամէն կողմէ հրացանաձգութեան ձայներ կը լսուէին, կարծես թէ թրքական հարսանիք մը ըլլար: Ու հանկարծ մեր խմբապետները պոռացին.- «Ոտքի, մեռցնենք և մեռնինք»...

Ու ժամը 3-ին սկսաւ կռիւը, որ կռիւ չէր, այլ ըմբշամարտ»[30]:

Թուրքերը փորձում են հայերին երեք կողմից սեղմել լեռան լանջին և ոչնչացնել: Հիմնական հարվածը հասցնում են կենտրոնից՝ Կյուշանա գյուղի կողմից: Սամիրա գյուղի կողմից շարժվում է աջ թևը, Զոշարա գյուղի կողմից՝ ձախ թևը: Պաշարվածների թիկունքում լեռն էր[31]:

Թուրքերի ճնշումն աստիճանաբար մեծանում է, շրջափակման օղակը՝ սեղմվում: Երեկոյան կողմ, երբ մարտը դադարում է, պարզվում է, որ երկրորդ օրվա համար փամփուշտ գրեթե չէր մնացել: Հայ ռազմիկները տվել էին երեք զոհ, որոնց թվում էին հրամանատարները՝ Արամը և Աբրահամը[32]: Խմբապետների խորհուրդը որոշում է մինչև լուսաբաց բարձրանալ լեռան կատարը և այնտեղից շարժվել դեպի Սպեր (Իսպիր): Լուսաբացին պաշարվածները լեռան գագաթից տեսնում են, որ լեռը շրջապատված է: Բոլորը միասին չէին կարող աննկատ դուրս գալ շրջափակման օղակից, ուստի որոշում են բաժանվել փոքր խմբերի:

Խմբերով շարժվում են տարբեր ուղղություններով և փորձում աննկատ դուրս գալ շրջափակումից: Դեպքերի մասնակիցը, ում խմբին առաջինն է հաջողվում մեկ զոհ տալով ճեղքել թուրքական օղակը և փրկվել[33], իր հուշերում գրում է. «Մեզանից հետո բոլորը Ուզդաղի բարձունքից փոքր խմբերով հեռանում են տարբեր ուղղություններով, բայց քչերին է հաջողվում դուրս գալ շրջափակումից: Լեռան բարձունքում մնացին հինգ վիրավորներ, որոնք չէին կարող տեղաշարժվել և ստիպված մնացին այնտեղ: Լուսաբացին թուրքերը գրոհում են լեռան բարձունքը: Մեր հինգ վիրավորների հերոսական դիմադրությունը երկար չի տևում...., սակայն նրանք ոչնչացնում են թշնամու 28 զինվոր: Այսպես և այս գնով ավարտվեց դիմակայությունը Ուզդաղ լեռան վրա»[34]:

Ամառն անցնում է տարբեր խմբերի և թուրքերի զանազան խմբավորումների և ջոկատների միջև ոչ մեծ ընդհարումներով: Այդ ընթացքում ձևավորվում են նոր խմբեր: 1915 թ. սեպտեմբերին Շանայի լեռներում գործում էր ութ խումբ: Կենտրոնական ապաստարանն անփոփոխ կերպով Արկուլա լեռն էր (Քիլիսե դաղ): Այս շրջանում՝ իրարից ոչ շատ հեռու տեղակայված էին երեք խմբեր.

ա. Ծինկիլա գյուղի խումբը, որ ամենամեծն էր: Խմբապետն էր Արշակ Թերզյանը:

բ. Սարայլարի խումբը, որի հրամանատարներն էին Երվանդ Էքշյանը և Վարդան Վարելջյանը: Նրանց հետ էր Վեցմատ Պետրոսը:

գ. Հովհաննես Տերտերյանի խումբը (Քուրդ): Նրա հետ էր Հայկ Քյոսյանը:

Մյուս խմբերը համեմատաբար հեռու էին տեղակայված: Դրանք էին.

դ. Կյուշանա գյուղի խումբը, որ ձևավորվել էր երկու առանձին խմբերի միավորումից, տեղակայված էր գյուղամերձ անտառում: Հրամանատարներն էին Վրթանես Մալխասյանը և Պողոս Էքշյանը:

ե. Կալաֆկա գյուղի խումբը, որը բաղկացած էր բացառապես երիտասարդներից, և որի կազմում կին չկար: Հրամանատարն էր Հովհաննես Ղուկասյանը:

զ. Ապիոնի խումբը, որ զինական և փորձառության տեսակետից զիջում էր մյուս խմբերին: Բաղկացած էր պատանիներից և աշակերտներից, որոնց հետ էր նրանց ուսուցիչ Գրիգոր Հարությունյանը: Հետագայում Մ. Թոռոլաքյանի հետ Ռուսաստանից վերադառնալուց հետո Փիլիկ Չեփնյանը գտնում է նրանց և ստանձնում հրամանատարությունը, ինչն էապես բարելավում է խմբի մարտունակությունը:

է. Այս խումբն ամբողջությամբ բաղկացած էր Զոշարա գյուղի պատանի տղաներից և աղջիկներից, որոնք բոլորն էլ անփորձ էին: Խումբը պատսպարվել էր մի խորը քարայրում, նրա մասին ոչ ոք տեղյակ չէր: Երբ եղանակը ցրտում է, անփորձ այս պատանիները խարույկ են վառում՝ տաքանալու համար, ինչն էլ մատնում է նրանց տեղը: Կարճ ժամանակ անց թուրքերը շրջապատում են քարայրը: Խմբի անդամներից 16-ը նահատակվում է այդ անհավասար կռվում: Փրկվածները՝ մեծ մասը վիրավոր, ձմեռն անցկացնում են մի նկուղում: Խմբի մասին մյուսներն իմանում են այս միջադեպից հետո:

ը. Տրոնա գյուղում բնակվող 14 հայերից 7 հոգի խումբ են կազմում և քաշվում անտառը: Այս խմբի մասին էլ մյուսներն իմանում են այն ժամանակ, երբ շրջապատվելով՝ բոլորն էլ սպանվում են:

Բացի այս խմբերը՝ ձմռան ամիսներին մի քանի տասնյակ մարդ էլ ապաստանել էր ծանոթ և վստահելի հույների և մի քանի թուրքերի տանը: Սրանք վտանգի պահերին գալիս էին խմբերի ապաստարանները, իսկ «...խումբերը անտառներու կածաններով գիշեր ցերեկ իրարու հետ յարաբերութեան մէջ

էին և վտանգի մը պարագային իրարու օգնելու հնարաւորութիւն միշտ կար»[35]:

Հայերի խմբերն ամռան վերջերին և հիմնականում աշնան ամիսներին ավելի շատ զբաղված էին ձմռան պաշար հայթայթելու գործով: Այդ հարցում նրանք բավականին հաջողության հասան. հայերին թալանած և հարստացած թուրքերի հոտերից ու նախիրներից մեծ քանակությամբ անասուններ էին հափշտակում և տանում իրենց ճամբարները: Հատկապես արդյունավետ էին քարավանների վրա հարձակումները, ինչի շնորհիվ ապահովեցին ձմռան պաշարը և այն թաքցրին Արկուլա լեռան թաքստոցներում: Հոկտեմբերի սկզբին թուրքերը ևս մի փորձ են անում ոչնչացնել լեռան վրա ապաստանածներին: Նրանք մոտենում են լեռան մերձակա անտառին, դիրքեր գրավում և սկսում գնդակոծել այն: Վախենալով անտառ մտնել՝ նրանք մինչև երեկո իրենց դիրքերից դուրս չեն գալիս, իսկ մութն ընկնելուն պես հեռանում են դեպի Կյուշանա գյուղի կողմը: Հայերը նույնպես գիշերը հեռանում են Արկուլայից՝ մտածելով, որ երկրորդ օրը նոր հարձակում կլինի: Բայց իրենց հրամանատարին կորցրած թուրքերը այլևս չեն վերադառնում:

Ռազմական ճանապարհով հայերին ոչնչացնելու հույսը կորցրած թուրքական հրամանատարությունը որոշում է դիմել խորամանկության՝ հայերին ներքաշելով ծուղակի մեջ: Հոկտեմբերի վերջերին Արկուլա է գալիս հայերի երբեմնի բարեկամ Մեհմեդը, որին հայերը կոչում էին Մեհմեդ ջան, քանի որ Ղրիմում ապրել էր հայերի մեջ: Նա առաջարկում է հայերին երկու առագաստանավերով տեղափոխել Ռուսաստան՝ պայմանով, որ իրեն էլ տանեն իրենց հետ: Նավաստիների դրամն էլ տրվելու էր տեղ հասնելուց հետո: Հայերը համաձայնում են, բայց նաև նախազգուշական միջոցներ են ձեռք առնում: Եվ երբ նոյեմբերի կեսին հայտնվում են առագաստանավերը, 150 մեկնողներ 35 զինված մարտիկների ուղեկցությամբ շարժվում են դեպի ծովափ: Նախազգուշական միջոցների շնորհիվ բացահայտվում է ծուղակը, և դարանակալ թուրքերի հետ ընդհարումից առանց կորուստների դուրս գալով՝ հայերը վերադառնում են իրենց ճամբար: Հ. Հովակիմյանը, պատմելով այս ծուղակի բոլոր մանրամասնությունների մասին, խոսքն ամփոփում է այսպես. «Այս ծուղակէն ալ ազատեցանք կորսնցնելով միայն տասնոց ատրճանակ մը, զոր Մեհմէտ ջանը հետը տարաւ: Վախէն ընտանիքով փոխադրուեցաւ ան քաղաք և հոնկէ ալ մուհաճիր գնաց[36]. կ'ըսէին թէ հիւանդացաւ և սատկած է»[37]:

Յոմուրիայի փախստական հայերին և հայկական զինված խմբերը հայտնաբերելու և ոչնչացնելու պատասխանատվությունը դրված էր Հաջի Ալի Հաֆըզ Յոմեր էֆենդու վրա, որը նաև վերոնշյալ անհաջող ծուղակի հեղինակն էր: Նա հանձնարարում է Լութվի չաուշին, որ հայտնի էր դարձել փախստական հայերի դեմ իր դաժան գործողություններով, վերջ տալ Յոմուրիայի զինյալ հայկական խմբերին, որոնք ամրացել էին Արկուլա լեռան վրա և շրջակա անտառներում: Չաուշի հրամանատարության տակ կար 300 ավազակներից ու մարդասպաններից բաղկացած մի զինյալ խումբ: Հաջողության դեպքում Յոմեր էֆենդին

Համշեն

նրան խոստանում է բինբաշու (մայոր) կոչում շնորհել[38]: Նոյեմբերի վերջերին՝ ծուղակի անհաջող գործողությունից մոտ երկու շաբաթ անց, Լութվի չաուշի զորաջոկատը, երկու մասի բաժանված, անսպասելի հարձակվում է հայկական դիրքերի վրա: Մի մասը՝ մոտ 150 զինյալ, հարձակվում է լեռան հարավային կողմից, մյուսը՝ կենտրոնից:

Թուրքերը կռվում են ոգևորված: Այնքան են մոտենում հայկական դիրքերին, որ տեղ-տեղ խառնվում են իրար. ոչ մի կողմը չի ընկրկում: Հայերի պաշտպանությունը եռաշերտ էր: Թուրքերը գրեթե գրավել էին առաջին գիծը: Անգիջում և կատաղի մարտի ընթացքում 16-ամյա Բարունակ Թոռլաքյանը դիմում է մի խորամանկության, որը վճռական ազդեցություն է ունենում կռվի ելքի վրա: Բ. Թոռլաքյանը տեսնում է, որ սողալով իրենց դիրքին է փորձում մոտենալ Լութվի չաուշը: Նա գիտեր, որ վերջինս լավ խոսում է հայերեն, և բարձրաձայն տեղեկացնում է ընկերներին, թե իր հրացանը խափանվել է, և օգնություն է խնդրում: Լութվին անմիջապես վազում է դեպի նրա դիրքը, բայց այդ պահին Բարունակի մտահղացումը հասկացած Պետրոս Օդաբաշյանը հարևան դիրքից դիմահար կրակոցով գետին է տապալում նրան. Լութվին խոցվել էր աչքից[39]:

Այդ կռվում Բ. Թոռլաքյանի ցուցաբերած խիզախության մասին Հ. Հովակիմյանը գրում է. «Հերոսաբար կը մարտնչէր մեր պատանի Բարունակը, որ քիչ մնաց գերի իյնար թշնամիին ձեռքը: Կռիվը այն աստիճան բուռն ու կատաղի էր, որ անկարելի էր տեղի տալ. Պիտի ոչնչանար կամ մէկ և կամ միւս կողմը: Այս կացութեան մէջ էինք, երբ անակնկալօրէն Թուրքերը նահանջեցին, զարմանք պատճառելով մեզի»[40]:

Կռվի անակնկալ ավարտի պատճառը Լութվի չաուշի սպանությունն էր: Կռվից հետո պարզվում է, որ սպանվել էր նաև չաուշի տեղակալը: Անգլուխ մնացած թուրքերը թողնում են կռվի դաշտը և հեռանում: Մյուս դիրքերում, ուր տեղյակ չէին Լութվիի սպանության մասին, մինչև երեկո կռիվը շարունակվում է:

Հայերը, լավ գիտենալով, որ թուրքերը հաջորդ օրը նոր հարձակում կձեռնարկեն, թողնում են ճամբարը՝ Արկուլա լեռը, և բարձրանում Կալաֆկայի սարը: Հաջորդ օրը Կալաֆկայի բարձունքից նրանք տեսնում են, թե ինչպես մի քանի հազար զինվոր «4-5 ժամ

տևած ահռելի կռիվ մը ունեցան անմարդաբնակ սարին հետ: … Ըստ թուրքերու պատմածին, այդ օրը 40 000 փամփուշտ սպառած էին:»[41]: Ի վերջո հասկանալով, թե ինչ իրավիճակում են հայտնվել, հավաքում են իրենց զոհերի դիակները և հեռանում:

Այս կռվում հատկապես աչքի ընկան Բարունակ Թոռոլաքյանը, Պետրոս Օդաբաշյանը, Հովհաննես Տերտերյանը (Քուրդ), Հայկ Քյոսյանը, Միհրդատ Մազլումյանն (Խոջա) ու իր դուստր Ազգանուշը և ուրիշներ:

4. Զինված դիմադրությունը Տրապիզոնի գավառի հարավարևմտյան գյուղերում

Այս շրջանի գյուղերը, ի տարբերություն Յոմուրիայի գյուղերի, ամենատագնապալի ժամանակներում անգամ առանձնապես աչքի չընկան ինքնապաշտպանության մասին հոգալով: Տրապիզոնից 15 կմ դեպի հարավ-արևմուտք ընկած Կրոպի գյուղի ուսուցիչ Ներսես Ֆնտքյանը, որ նաև իրենց շրջանի ինքնապաշտպանական խմբերից մեկի անդամ էր, ուշագրավ տեղեկություններ է հայտնում շրջանի հայկական գյուղերի տնտեսական, կրթական և ինքնապաշտպանությանը վերաբերող կազմակերպական վիճակի մասին[42]: Յոմուրիայի շրջանի գյուղացիների մասին խոսելիս վկայակոչեցինք իր համերկրացիներին լավ ճանաչող, նրանց հերոսամարտի տարեգիր Հ. Հովակիմյանի հետևյալ հաստատումը. «Տղամարդը, տունը թէ դուրսը, առանց զէնքի չէր. տաք կամ պաղ զէնք մը պիտի ունենար անպատճառ»: Այնինչ Տրապիզոնի հարավարևմտյան շրջանի գյուղերի (Տրապիզոնի և Մաճկայի գավառակներ) տարեգիր Ն. Ֆնտքյանը իր համերկրացիների մասին այլ վկայություն է տալիս. «Քրիստոնեան և առաւելաբար Հայը արտոնուած չէր տաք կամ պաղ զէնք կրելու. անսաստողը կը բանտարկուէր, յաճախ կը խոշտանգուէր և զէնքը կը գրաւուէր» (էջ 402):

Ուշագրավ է, որ բավականին բարեկեցիկ կյանքով ապրող այս գյուղերում 1908 թ. Սահմանադրության ընդունումից հետո իշխում էին լավատեսական տրամադրություններ առ այն, որ Հայկական հարցը գտնվում է լուծման ճանապարհին: Ֆ. Ներսիսյանի կարծիքով շրջանի գյուղերում գործող երկու կուսակցություններն էլ՝ ՀՅ Դաշնակցությունը և Հնչակյան կուսակցությունը, մեծ ջանքեր չեն գործադրում շրջանի գյուղերում գաղափարական և ինքնապաշտպանական աշխատանքների ուղղությամբ: Իսկ ժողովուրդը հույսը դրել էր նրանց վրա: Հանրային հավաքներում և ցույցերի ժամանակ մարդիկ ոգևորությամբ երգում էին «Թող Սատկի Սուլթան և Սայիտ փաշան, կեցցէ՛ Խրիմյան, կեցցէ՛ Մարիմեան» (էջ 403):

Սահմանադրությանը հաջորդած տարիներին իշխանությունների հակահայկական տրամադրությունների պատճառով նժարը թեև հակվում է Դաշնակցության կողմը, «բայց կուսակցական քարոզի ձևը չդարձաւ ծրագրային աշխատանք»: Համենայնդեպս այս ոչ մեծ փոփոխությունն անգամ դրական հետևանքներ է ունենում. մի քանի գյուղերում ստեղծվում են 5-6 դաշնակցականներից կազմված զինյալ խմբեր[43]:

Տեղահանությունից առաջ այս շրջանների գյուղերում նույնպես հայտնվեցին «առաջնորդարանի եռյակները»՝ բաղկացած հոգևորականներից և ազդեցիկ հասարակական դեմքերից: Թոց, Աղրիտ, Կրոպի, Վերանա, Նոխածանա, Իզակսա և Ծիֆրիկա գյուղեր ժամանեցին Մատթեոս Տեր Համբարձումյանը, Սահակ էֆենդի Էթմեքչյանը և քաղաքաբնակ մի քահանա: Թուրքերի համար առավել վտանգավոր այս գյուղերում հայկական պատվիրակության՝ հնազանդության քարոզից հետո ժողովուրդը խաղաղվեց: Տեղահանությունից մեկ օր առաջ Կրոպից, Վերանայից, Մանզելերից և Ծիֆրիկայից մի խումբ երիտասարդներ, սրանց հետ՝ 4 պատանի 13-14 տարեկան, որոշում են գիշերը ճանապարհ ընկնել, անցնել լեռները և միանալ Յոմուրիայի խմբերին: Բայց քանի որ բոլոր ճանապարհներն ու կամուրջները խիստ հսկողության տակ էին, նրանք որոշում են պատսպարվել Ջիլդաղ լեռան թաքստոցներում: Նշենք, որ նրանց կարևոր տեղեկություններով և սնունդով օգնում են հույները:

Ամռան ամիսներին զանազան գյուղերից և տարագրվող քարավաններից փրկվածներն ապաստանում են անտառներում և լեռներում: Նրանց թիվն աստիճանաբար մեծանում է՝ հասնելով մի քանի տասնյակի: Հայերի զինված փոքր խմբերի և թուրքական ժանդարմական խմբերի, զինվորական ջոկատների կամ պարեկների միջև տեղի են ունենում բազմաթիվ ընդհարումներ: Ամռան վերջերին արդեն ձևավորվել էին մի քանի տասնյակ ռազմիկներից բաղկացած խմբեր, որոնք կարող էին լրջորեն սպառնալ Տրապիզոն-Օրդու-Սամսոն ճանապարհի անվտանգությունը: Բացի այդ՝ աստիճանաբար մեծացող խմբերը կապեր էին հաստատում տարբեր շրջաններում գործող այլ խմբերի հետ, հաճախ իրար օգնության հասնում, ինչը լրջորեն անհանգստացնում էր նահանգի իշխանություններին:

Նահանգապետ Ջեմալ Ազմին, զգուշանալով անակնկալներից, բաթումցի հրոսակապետ Ասլան բեկին կարգադրում է 500 հոգուց բաղկացած զորաջոկատով վերահսկողության տակ պահել շրջանը և ոչնչացնել հայկական զինյալ խմբերը: Հուլիս-հոկտեմբեր ամիսներին բազմաթիվ մեծ ու փոքր ընդհարումներ են տեղի ունենում թուրքական կանոնավոր զորքերի, ժանդարմական ջոկատների, իշխանությունների ձևավորած և իրենց կողմից ղեկավարվող ավազակախմբերի և օրեցօր մեծացող և հզորացող հայկական մարտական խմբերի միջև: Այդ բախումներն ու կռիվները հիմնականում ավարտվում են թուրքական կողմի պարտությամբ:

Ամռան ամիսներին մեծ ու փոքր խմբերի միավորումից Կոռոպի գյուղի բնակիչ Աղաջան Ֆնտքյանը, որ փախել էր տարագրվող քարավանից, ստեղծում է 100 հոգուց բաղկացած մի զորաջոկատ: Այս ջոկատին ոչնչացնելու նպատակով 1915 թ. սեպտեմբերի վերջերին նահանգապետի հրամանով հազարից ավելի զինվորներից, ժանդարմներից և չեթեներից բաղկացած մի զորաջոկատ՝ հրետանու հզոր աջակցությամբ,



Համշենահայ ֆիդայիներ

շրջապատում է Կոնկայի անտառը, ուր իրենց տեղեկություններով ապաստանել էր Ա. Ֆնտքյանի ջոկատը. «Սակայն իրականին մէջ մերոնք քսան հոգի էին, և իրենց ղեկավարներն էին Յովհաննէս Ֆունտուքեան, Համբարձում Ռահանեան (զիզակսակցի Համբար) և Ներսէս Ֆունտուքեան»[44]:

Քսան հայ մարտիկները քաջության և ճիշտ մարտավարության շնորհիվ ամբողջ մի օր կարողանում են դիմադրել իրենցից հիսուն անգամ մեծաքանակ թշնամուն, նույնիսկ դիրքերից մեկում փախուստի են մատնում նրանց: Երեկոյան մարտը դադարում է: Երկրորդ օրը թշնամին նոր հարձակում է ձեռնարկում, բայց հայ մարտիկները գիշերն աննկատ հեռացել էին: Այդ կռվից հետո կառավարությունը մինչև 1916 թ. սեպտեմբեր այլևս նման խոշոր հետապնդումներ և մարտական գործողություններ չի ձեռնարկում:

Վրա է հասնում 1915-16 թթ. ձմեռը, որը իսկական փորձություն էր լեռներում և անտառներում պատսպարվածների համար:

Նշենք, սակայն, որ մարտնչող պոնտահայության վիճակը յուրահատուկ էր. նրանք ոչ միայն պետք է մտածեին թուրքական կանոնավոր բանակի, ժանդարմական զորամիավորումների կամ չեթեների դեմ պայքարի միջոցներ հայթայթելու մասին (զենք, զինամթերք և սնունդ), այլև հոգային իրենց ընտանիքների գոնե նվազագույն կարիքները, պաշտպանեին նրանց, ստեղծեին քիչ թե շատ տանելի պայմաններով կացարաններ (ի դեպ՝ կացարանների դեր հիմնականում կատարում էին անձավներն ու քարայրները): Դեպքերի մասնակիցն իր հուշերում գրում է. «Լեռներում գտնվող տղամարդիկ ստիպված էին իրենց հետ բերել նաև ընտանիքները: Նրանց լեռներում պահելն ու խնամելը դժվար էր, բայց ուրիշ ելք չկար. ամեն օր այլ շրջաններից ստացվում էին հայ բնակչության տեղահանության և ոչնչացման մասին սարսափելի լուրեր»[45]:

Ընդ որում՝ հաճախ հարկ էր լինում տեղափոխվել տեղից տեղ, որի հետևանքով նոր դժվարություններ էին ի հայտ գալիս: Դժվարությունները շատ էին հատկապես ծերերի, երեխաների, հիվանդների և վիրավորների խնամքի հարցում: Ձմռան ամիսներին այս ամենին գումարվում էր ցուրտը, հարկավոր էր հայթայթել տաք հագուստ, մի կերպ տաքացնել քարայրներն ու անձավները: Այս պայմաններում հաճախ երեխաներ էին ծնվում, որոնք իրենց հետ բերելով նոր հույս և հավատ առ հաղթանակը, բերում էին նաև բազում հոգսեր ու խնդիրներ, որոնք անմիջական լուծումներ էին պահանջում:

Այդ մասին թերևս լավագույն վկայությունը անտառներում ապաստանածների նամակն է՝ գրված 1915 թ. դեկտեմբերի 20-ին (նոր տոմարով՝ 1916 թ. հունվարի 2-ին):

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ ԱՊԱՍՏԱՆԱԾ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՀԱՅԵՐՈՒ ՆԱՄԱԿԸ[46]
(20 Դեկտ. 1915)

Արիփուային այս հազուագիւտ վաւերագիրը կը ներկայացնէ 1915ին Տրապիզոնի կուրորածներէն փրկուած եւ անտառները ապաստանած խումբ մը հայ երիտասարդներու ոդիսականը:

Նամակագիրը մէկն է այն հայ երիտասարդներէն, որոնք մէկ կողմէ կը կռուէին հետապնդող թուրք զօրքին դէմ, միւս կողմէ՝ ջարդերէն ազատուածները կ'առաջնորդէին ապահով վայրեր:

Այս նամակը ուղղուած պէտք է ըլլայ ռազմաճակատի միւս կողմը գտնուող՝ Պաթումի կամ Թիֆլիսի Դաշնակցական մարմնի մը, որմէ օգնութիւն կը սպասէին՝ ապառող զինամթերքը լրացնելու եւ իրենց փրկարար գործը շարունակելու համար:

Նամակը կը գտնուի բաւական գէշ վիճակի մէջ, եւ հարկ եղաւ համակարգչային նկարահանումի արհեստագիտութիւնը օգտագործել, որպէսզի քիչ թէ շատ ընթեռնելի ըլլայ եւ կարենանք վերծանել անոր բովանդակութիւնը՝ անփոփոխ պահելով բնագիրը:

Հաւանաբար արդէն լսած կը լինէք մեր ցաւագին դժբախտութեան մասին. մանրամասնութիւններու մէջ մտնելու կարիք չկայ. ահա հակիրճ կերպով եղելութիւնը:

Յունիսի 18-ին, կառավարութեան կողմէ յայտարարուեցաւ մեզ հինգ օրուայ մէջ պատրաստուիլ աքսորուելու համար ընտանեօք, մեր ցոյց տուած անհաւատարիմ ընթացքի պատճառաւ: Այս հինգ օրուայ մէջ ամէն միջոցի դիմեցինք. ամէն տեսակ երաշխաւորութիւն եւն եւն ցոյց տուինք յայտարարութիւնը եւր առնելու, ամենավերջը գոնէ առնուազն որոշ չափով մեղմացնելու համար, այսինքն միայն յեղափոխական կամ վտանգաւոր ճանչցուած անձերը աքսորելու, իսկ մնացած անմեղները, կին, երեխայ եւն եւն եւր ձգելու:

Քոնսիլներու, կրօնական պատրասիանատու անձերու դիմել, աղաչել, խնդրել ոչ մէկ արդիւնք չունեցաւ, ընդհակառակը մեր դժբախտութեան պատճառներուն նպաստեցին: Որովհետեւ [...] շարունակ յոյս տուին որ կ'աշխատինք մեծ զիջումներ ընել տալու, ու յաջողութեան մեծ յոյս ունինք, ապահով եղէք, մի վախնաք եւն: Թերեւս այս խօսքերը եթէ չլինէին կազմակերպուած ուժի, զէնքի դիմէինք եւ որոշ արդիւնք ձեռք բերէինք. թէեւ խոշոր գործ անկարելի էր ապասել քանի որ 20-25 հոգի, աչքառու ընկերներէն յանկարծակի առաջին օրը ձերբակալելով, ծովամոյն ըրին (ըստ իրենց աքսորեցին), ուրիշներ արդէն զինուորութենէ փախստական ասդին անդին փախած հեռացած էին. այնպէս որ մնացած տղաները երաշխիք չէին ցոյց տար դիմադրելու, բայց եւ այնպէս կ'ըսեմ, եթէ կսկիծի ու այդ տրուած յոյսերու տպաւորութեան տակ չշուարէինք, յիմարացած չըլլայինք, թերեւս նորէն օգտակար բան մը կարենայինք ընել: Սակայն այսպէս թէ այնպէս իրականութիւնը այն եղաւ, որ առանց աննշան զիջումի մը ճիշդ յայտարարութեան համաձայն Յունիսի 23էն սկսած աքսորեցին (որպէս թէ) առհասարակ բոլոր հայերին. մինչդեռ իրականին մէջ ճանապարհին մորթուեցին, կտրտեցին, ականատեսները սարսափելի դէպքեր կը պատմեն, նորածիններ սուինի ծայրը անցնել, ջահել աղջիկներու ու կիներու լկում ու ահռելի տանջանքներ պատճառել սովորական բաներ են եղած. իսկ չափահաս կարգ մը գեղեցիկ աղջիկներ ու կիներ քաղաքին մէջ եւ շրջակաները կնութեան առած են, բռնի իսլամացնելով. կան նոյնպէս բաւականաչափ տղաներ անչափահաս, որոնք նոյնպէս իսլամացնելէ վերջ, որպէս իրենց զաւակը կը պահեն: Դեռ գրոյց կը շրջի թէ մաս մը իսկապէս աքսորուածներ կան, Մուսուլ, Գոնեայի շրջանները, բայց այս բանը հաւատալի չի թուիր մեզ:

Գալով, ինքնապաշտպանութեան դիմելով, փախուստ տուող, եւ անտառը ապաստանողներու մասին: Գլխաւորապէս Շանայի շրջանի հայերը չյանձնուեցան. կ'ըսեն թէ 300-500 անձեր (տղայ եւ կին ալ մէջերը լինելու պայմանով) իրենց անտառները ապաստանած են զէնքով. յաճախ ժանդարմներ կ'ուղարկուին ձերբակալելու. սակայն, առ հասարակ զոհերը թուրքերու կողմէ կը լինին, ձեռնունայն կը վերադառնան. միայն վերջին անգամ 3 զոհ տուին մերոնք, ի դիմաց 9 ժանդարմայի (4-ը մեռած, 5-ը վիրաւոր). ապահովաբար երբեք ձեռք չեն անցնիր, եթէ միայն երկար չտեւէ դրութիւնը եւ ռազմամթերքնին այսպէսով չսպառի, որովհետեւ երբեմն 24 ժամ շարունակ փոխադարձ հրացանաձգութիւն տեղի կ'ունենայ: Ասոնց հետ մեր յարաբերութիւնները իզուած են մինչեւ հիմա. թերեւս նոր միջոց մը ճարենք յարաբերութեան. իրենց մասին կ'իմանանք միայն:

Նամակաբերս եթէ յաջողի անձամբ նամակս ձեզ հասցնել, արդէն կը պատմէ իմ մասին. իսկ կարող է պատահիլ, որ փոստարկղի միջոցաւ ուղարկէ: Այդ պարագային ստիպուած եմ մանրամասնութիւններ տալու իմ գործի մասին: Նամակաբերիս հօրեղբօր որդին, որ վրացի շատ ազնիւ անձ մըն է, ամէն զոհաբերութիւն յանձն առաւ հակառակ այնքան խստութիւններու. ամէն ջանք ի գործ դրաւ քաղաք մնացած այնքան աղջիկներու հետ միասին ազատելու: Ես մի քանի օր ասոնց մօտ մնալէ վերջ, իմանալով որ ուրիշ անտառի մը մէջ փախստական հայեր կան, փութացի քովերնին: Հիմա այդ ազնիւ վրացին կը պահէ փոքրիկներ, իսկ ես անտառն եմ մօտաւորապէս 90-100 հոգիի հետ:

Ասոնց մասին ահա մանրամասնութիւններ: Կէսը անչափահաս տղաներ եւ կիներ են. մնացած տղամարդկանց հազիւ 15-20 հոգին կարգին զէնք ունին, մնացածները անզէն են, արդէն գրեթէ բոլորը գիւղացիներ են ու խեղճուկրակ: Մեզ ալ շրջապատեցին քանիցս, բայց օգուտ չունեցաւ. շատ հեշտ չէ անտառներէ մեզ ձեռք ձգել: Միայն աննկարագրելի թշուառութիւն ու խեղճութիւն կը տիրէ մերիններու մէջ. շրջակայի յոյն գիւղացիք օգնած ու կերակրած են հազիւ հազ բաւելի չափով, իսկ բռնութիւն գործ ածել հաշուի չի գար, աւելի կը վտանգէ մեր գործը: Վերջերս գիւղացիք շատ կը դժուարանան, որովհետեւ հոդ բաւական տնտեսական տագնապ գոյութիւն ունի. ամէն ոք ինքզինքը կը հոգայ: Մի քանի եւրոպացիներու դիմեցինք դրամական օգնութեան համար, շատ անբաւական գումար ուղարկեցին: Վիճակնիս աննկարագրելի է, ձմեռը եւ ցուրտը շատ կը նեղեն մեզ. եթէ դրամ լինի բաւականաչափ կարելի է գոնէ կիներն ու տղաքը յոյներու տուներու մէջ տեղաւորել, որովհետեւ վերջերս կառավարութիւնը թոյլ կը շարժի դէպի մեզ, նոյնիսկ յայտարարեց որ փախստականներ եթէ կան՝ գան յանձնուին, «այլեւս վտանգ չկայ». ասոր վրայ խիստ նեղուողներ ուրիշ տեղերէ 10-ի չափ քաղաք իջան, իսլամացած են ու կը գործեն ազատ առ այժմ: Խնդիրը այս սրիկաներու լարած թակարդի շուրջ չէ. խնդիրը հոն է, որ այս խօսքերը ու դէպքերը քիչ քաջութիւն կը ներշնչեն յոյն գիւղացիներու, որոնք առաջուայ չափ չեն սարսափիր հայեր պահելէ, միայն թէ դրամ լինի, դրամ ու միշտ դրամ. կարճ՝ դրամով կարելի է մեր կեանքը փրկել:

Վերջացնելէ առաջ ասեմ նաեւ թէ քանի երկար տեւէ դրութիւնը, եւս որքան ուշանայ օգնութիւնը, այնքան կը ծանրանայ եւ կը կնճռոտի մեր գործը:

Սպասելով ձեր անմիջական աջակցութեան,
Սրտագին բարեւներով
Ի դիմաց փախստական հայերու
Ստորագրութիւն

Տրապիզոն, անտառ
20 Դեկտ./2 Յունուար 1916

Հղումներ

[1] Բարենորոգումների ծրագիրը միջազգային քաղաքական օրակարգ վերադարձավ Առաջին բալկանյան պատերազմում Օսմանյան կայսրության պարտության արդյունքում: Նախագծի վերջնական տարբերակում նախատեսվում էր բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթներում, որոնք բաժանվելու էին երկու խոշոր նահանգների (1. Էրզրում, Տրապիզոն, Սեբաստիա, Վան և 2. Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքիր), որոնց կառավարումը հանձնվում էր երկու օտարերկրյա ընդհանուր տեսուչների, որոնք նշանակվելու էին մեծ տերությունների հավանությամբ: Այս նախագծում ներառվել էր նաև Տրապիզոնի վիլայեթը, ինչը չկար նախորդում: Այն հաստատվեց 1914 թ. հոկտմբերի 26-ին (նոր տոմարով՝ փետրվարի 8-ին):

[2] Յովակիմեան Յ., (Արշակունի), Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պէյրութ, 1967, էջ 212:

[3] Մինախորեան Վ., 1915 թուականը. արհաւիրքի օրեր, Վենետիկ – Ս. Ղազար, 1949, էջ 51:

[4] Նույն տեղում:

[5] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրութ, 2016, հտ. ԺԲ, էջ 10:

[6] Սալիհ Զեքի (Կուշարկով) - Հայոց ցեղասպանությունն իրագործած օսմանյան պաշտոնյաներից մեկը, որը Մեծ եղեռնի հուշագրություններում հանդիպում է նաև «Հրեշ Զեքի» մականվամբ: Ծնվել է 1883 թ. Սամսոն քաղաքում, չերքեզի ընտանիքում: Հայրը Օսմանյան կայսրություն էր ներգաղթել 1864 թ. Ռուսաստանի Կուբանի շրջանից: Օսմանյան կայսրության ռազմական արտակարգ ատյանի կողմից 1920 թ. հեռակա կարգով դատապարտվել է մահվան: Սակայն դատավճիռն ի կատար չի ածվել, քանի որ 1918 թ. փախել էր արտասահման: Այնուհետև Կուշարկով ազգանվամբ անցել է «Կոմունիստական կուսակցության» շարքերը: Այդպես նա կարողացել է իր հետքը կորցնել և խուսափել արդարահատույց հայ վրիժառուների գնդակից, թեև նրա անունն ընդգրկված էր «Նեմեսիս»-ի բոլոր ցուցակներում: Սալիհ Զեքին 1925-1933 թթ. բնակվել է Թիֆլիսում: Նա միաժամանակ եղել է ադրբեջաներենի լատինատառ այբուբենի մշակման հանձնաժողովի նախագահի տեղակալ, ինչպես նաև՝ ադրբեջաներեն հրատարակվող «Yeni Fikir» թերթի գլխավոր խմբագիր: Մահացել է Մոսկվայում 1940 թ. նոյեմբերի 3-ին:

[7] Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան… հտ. ԺԲ, էջ 10:

[8] Նշվ. աշխ. Էջ 11:

[9] Նույն տեղում:

[10] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրութ, 2014, հտ. Ժ, էջ 325: ՀՅԴ Արխիվի թիվ 792-6 փաստաթուղթը:

[11] ԾՈՎԱՓ-ը Տրապիզոնի կուսակցական ծածկանունն էր:

[12] Նամակն ամբողջությամբ տե՛ս Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրութ, 2014, հտ. Ժ, էջ 330-331: ՀՅԴ Արխիվի թիվ 118-24 փաստաթուղթը:

[13] **Մալխաս,** Պաթումէն Տրապիզոն, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1941, թիվ 10, էջ 90:

[14] Նույն տեղում:

[15] **Թոռոլաքեան Մ.,** Օրերուս հետ, Պէյրութ, 2001, էջ 339 340:

[16] **Թոռոլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 341-342:

[17] **Թոռոլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 351:

[18] **Թոռոլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 343

[19] **Յովակիմեան Յ.,** (Արշակունի), նշվ. աշխ. Էջ 308:

[20] Նկատի ունի 1912 թ. հոկտեմբերին սկսված Առաջին բալկանյան պատերազմը:

[21] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրութ, 2016, հտ. ԺԲ, էջ 321: ՀՅԴ Արխիվի թիվ 792-40 փաստաթուղթը:

[22] **Յովակիմեան Յ.,** (Արշակունի), նշվ. աշխ. Էջ 346:

[23] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրութ, 2016, հտ. ԺԱ, էջ 313-323: ՀՅԴ Արխիվի թիվ 793-8 փաստաթուղթը:

[24] **Թոռոլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 326:

[25] **Յովակիմեան Յ.,** (Արշակունի), նշվ. աշխ. Էջ 351:

[26] ***Փոս*** բառը Համշենի բարբառում նշանակում է դաշտ, հարթ տեղ:

[27] **Յովակիմեան Յ.**, (Արշակունի), նշվ. աշխ. Էջ 358:

[28] **Թոռոլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 328:

[29] Բ. Թոռոլաքյանը ծնվել է 1899 թ. Յոմուրիայի գյուղախմբի Կյուշանա գյուղում, սովորել է գյուղի ծխական դպրոցում, ապա ավարտել է Տրապիզոնի Սահակ-Մեսրոպյան ութամյա վարժարանը: Տեղահանությունից խուսափելով՝ մոր հորդորով միանում է լեռներում ապաստանած հայ ռազմիկներին: Նա նշանավոր ազգային-կուսակցական գործիչ, «Նեմեսիս» արդարահատույց խմբի անդամ, Բաքվի 30000 հայերի դահիճ Ջիվանշիրին Կ. Պոլսում սպանած Միսաք Թոռոլաքյանի ազգականն է: Այս հայրենասեր և համարձակ գերդաստանի գրեթե բոլոր տղամարդիկ զոհվում են կամ դավադրաբար սպանվում: 1918 թ. Մ. Թոռոլաքյանը գերդաստանի ավագի իրավունքով արդեն փորձառու ռազմիկ 19-ամյա Բ. Թոռոլաքյանին պատվիրում է իրենց ընտանիքների՝ ցեղասպանությունից փրկված կանանց և աղջիկներին տեղափոխել Ռուսաստան և հոգ տանել նրանց մասին: Պատանի Բարունակը իր վրա է վերցնում այս պարտականությունը: Հետագայում՝ մինչև թոշակի անցնելը, նա ուսուցչություն է անում Սոչիի շրջանի հայկական դպրոցներում: Թոշակի անցնելուց հետո ավելի քան 20 տարի սվիրվում է Համշենի բանահյուսության ուսումնասիրությանը, որպես բանահավաք՝ շրջում Ռուսաստանի, Աբխազիայի և Միջին Ասիայի՝ համշենահայերով բնակեցված գյուղերում և քաղաքներում: Նրա ուսումնասիրությունների մի կարևոր մաս «Համշենահայերի ազգագրությունը» վերնագրով հրատարակվել է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 13-րդ հատորում 1981 թ.: 1986 թ. լույս է տեսել նրա կազմած՝ «Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության» ժողովածուն: Բազմաթիվ հետազոտություններ հրատարակվել են գիտական հանդեսներում: Ունի նաև չհրատարակված աշխատանքներ, որոնց մեջ հատկապես կարևորվում է «Համշենի խոհանոցը» արժեքավոր հետազոտությունը:

[30] **Յովակիմեան Յ.,** (Արշակունի), նշվ. աշխ. Էջ 352:

[31] **Кочьян А.,** В горах Ёмуры, տե՛ս «Первый бой на Узудаге» բաժնում, http://hamshen.org/forum/viewtopic.php?f=14&t=119 կամ http://www.isc-s.ru/publikacii/v-gorax-yomury.html

[32] Նահանջելիս հրամանատարների դին թողնում են կռվի դաշտում: Երբ ռուսական զորքերը գրավում են այս շրջանը, կռվի մասնակիցներից մեկը՝ Վարդան Մալխասյանը, գտնում է Աբրահամի աճյունը և հուղարկավորում Կյուշանա գյուղում: Տե՛ս նույն տեղում:

[33] Այս խմբի մեջ էր նաև ազգային-կուսակցական գործիչ, «Պատմութիւն հայկական Պոնտոսի» մեծարժեք աշխատության հեղինակ Հովակիմ Հովակիմյանը (Արշակունի): Տե՛ս **Кочьян А.,** նշված աշխատության մեջ, որը թեև գրվել է հայերեն, սակայն հրատարակված է ռուսերեն թարգմանությունը՝ այն էլ միայն նշված կայքէջերում:

[34] **Кочьян А.,** В горах Ёмуры, տե՛ս «Первый бой на Узудаге» բաժնում, http://hamshen.org/forum/viewtopic.php?f=14&t=119 կամ http://www.isc-s.ru/publikacii/v-gorax-yomury.html

[35] Տե՛ս **Յովակիմեան Յ.,** (Արշակունի), նշվ. աշխ. Էջ 363-364:

[36] Այսինքն՝ գաղթեց, վտարանդի դարձավ, փախավ իր բնակության վայրից:

[37] **Յովակիմեան Յ.,** (Արշակունի), նշվ. աշխ., Էջ 367: Տե՛ս նաև **Кочьян А.,** В горах Ёмуры, «Попытка бегства в Россию» բաժինը:

[38] Տե՛ս **Кочьян А.,** նշվ. աշխ., «Бой в районе горы Килиса и смерть Ливтви чауша» բաժնում»:

[39] Նույն տեղում:

[40] **Յովակիմեան Յ.,** (Արշակունի), նշվ. աշխ., Էջ 268-269:

[41] Նշվ. աշխ., Էջ 370:

[42] Այս բաժինը շարադրվում է հիմնականում ըստ **Ներսես Ֆնտքեանի** «Եղեռնը Տրապիզոնի հարաւ-արեւմտեան գիւղերուն մէջ» հուշագրության, որը հրատարակվել է Հ. Հովակիմյանի (Արշակունի) գրքում, տե՛ս էջ 400-442:

[43] Ն. Ֆնտքյանը դաշնակցական էր և լավատեղյակ էր այն հարցերում, որոնց մասին խոսում է անաչառ կերպով:

[44] **Թոռոլաքեան Մ.,** նշվ. աշխ., էջ 336:

[45] **Кочьян А.,** В горах Ёмуры տե՛ս http://hamshen.org/forum/viewtopic.php?f=14&t=119 կամ http://www.isc-s.ru/publikacii/v-gorax-yomury.html

[46] Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրութ, 2016, հտ. ԺԲ, էջ, ՀՅԴ արխիվի թիվ 793-9 փաստաթուղթ:

Վերընթերցենք Համաստեղին
Համաստեղի «Հայը եւ իր հաւատքը» հոդվածը

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

Հայաստանի ազգային գրադարանում մի քանի տարի անընդմեջ կարդացի Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» օրաթերթը եւ 1922-1970 թթ. հրատարակված համանուն ամսագիրը ((խմբագիր՝ Ռուբեն Դարբինյան (Արտաշես Չիլինգարյան, 1883-1968): Ազգային գրադարանում պահվող մամուլի, Գրականության և արվեստի Ե. Չարենցի անվան թանգարանում՝ Համաստեղի (Կելենյան, 1895-1966) ֆոնդում, հավաքված և գրողի կազմած ոչ մի ժողովածուում չհրատարակված նյութերից առանձնացրի՝

ա) դրամատիկական պատկերներ,
բ) եռամաս վիպակ,
գ) պատմվածքներ և պատմվածքների դրամատիկական տարբերակներ,
դ) «Այծեռոմար» երգիծական պոեմի դրամատիկական տարբերակ,
ե) բազմաթիվ հոդվածներ,
զ) տարբեր թեմաներով ելույթների շարադրանքներ,
է) Համաստեղի և նրա տիկնոջ՝ Սրբուհի Պեկյանի (1903-1966) թարգմանած էջեր և այլն:

2005-2007 թթ. հավաքածս նյութերը հրատարակեցի «Համաստեղ. Մոռացված էջեր» գրքի Ա - Դ հատորներում: Պարզվեց՝ «Հայրենիք» օրաթերթի 1953 թ. ապրիլի 24-25-ի համարներում (նո. 12470 և 12471) հրատարակված «Հայը եւ իր հաւատքը» հոդվածը չեմ հրատարակել: Համաստեղն ստորագրել է՝ **Օհան Ծոփեցի**:

Հոդվածը կարդացի քիչ-քիչ հիացմունքի փոխվող զարմանքով. թվաց՝ գրողը երեկ է գրել և հարկադրված է եղել անդրադառնալ մեր՝ անորոշությամբ ու տագնապներով լեցուն ժամանակների մի քանի հարցերի: Հոդվածը գրվել է յոթանասունմեկ տարի առաջ: Ուրեմն մենք անցած այդ տասնամյակների ընթացքում չենք փոխվել, նույնն են նաև մեզ անհանգստացնող խնդիրները, կորուստների ցավը, հիմա Արևմտյան Հայաստանի կողքին Արցախի հողն է սպասում Տիրոջ ձեռքերին, բայց նո՞ւյնն են փրկության միջոցները, որոնց մասին գրում է սփյուռքահայ գրողը: Մի՞թե այնքան «առաջադիմեցինք», որ Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակներում ոչ միայն խնդիրներ չենք լուծել, այլև Հայ սփյուռքի տագնապներն ու անհեռանկար գոյատևման անորոշությունը դարձրել ենք համահայկական, համընդհանուր՝ անկախ բնակության վայրից:

Այսպե՞ս են ԵՐԿԻՐ ու ՀՈՂ պաշտպանում, այսպե՞ս են սերունդներ դաստիարակում, ե՞րբ պիտի դուրս գանք ինքնախաբեության ու սրա-նրա լայն թիկունքում ծվարած ապրելու թմբիրից: Ե՞րբ պիտի ճանաչենք ու արժևորենք մեր ունեցածը, հասկանանք՝ մշակույթը մեծ ուժ է, երբ ստեղծվում է Մայր ՀՈՂի վրա և շնչում է ՀՈՂի շնչով: Չեմ ուզում հավատալ, իսկ Համաստեղի համար պարզապես անհեթեթություն էր մտածել, որ հաղթելու է ան+հայրենիք տեսակը …

1890-ականներին սկսված նախճիրը 2024-ին չի ավարտվել …

Հուսամ՝ այս հոդվածը ոչ միայն նորից կցավեցնի

մեր չսպիացած վերքերը, այլև ցույց կտա ազգային համախմբման ու փրկության միջոցները:

Մեծերը մի՛շտ այժմեական են:

ՀԱՅԸ ԵՒ ԻՐ ՀԱՒԱՏՔԸ

Ապրիլ 24 … Այդ մենք ենք, մեր կեանքը, որովհետեւ այդ օրուան բոլոր զոհերը մեր մէջն, մեր արիւնէն են ու մեր մէջ կ՚ապրին: Ես չգիտեմ ազգ մը, որուն մէջ մեռելները այնքան մեծ դեր կատարած ըլլան, որքան հայ ազգը:

Ապրիլ 24-ին մենք երկիւղածութեամբ կը մօտենանք՝ հաղորդուելու մեր զոհերու հաւատքէն: Հաւատքը կեանք է, Հայրենիք է: Հաւատքը ձգտումն է գեղեցիկ իդէալներու: Մեր ժողովուրդը հաւատքով, գեղեցիկ իդէալներով պահած է իր գոյութիւնը: Մեր ժողովուրդը ունեցաւ խաղաղ ու յաճախ խռով շրջաններ, յաղթեց ու պարտուեցաւ, շինեց վանքեր գորշ լեռներու կողին, կերտեց եկեղեցիներ, որոնց մէջ Երկինքը կ՚արձագանգէր, հերկեց հողը ու դաշտը լեցուց կանաչով ու հորովելով:

Մեր ժողովուրդը շէն էր ու փարթամ նոյնիսկ գերութեան շրջանին: Անոր մատները հողին որ դիպչէին, կանաչը հրաշքի պէս կը բուսնէր ու հասակ կ՚առնէր: Ան միշտ շինեց փլած, հրդեհուած ու թալանուած տունը, ու շատ չանցած՝ աւերակ տան բակը շէնցաւ, տան մէջ հարսները ծոցուորեցան: Նոյն շէն տունը լեցուեցաւ մեծցած ու նորածին երախաներու ձայներով:

Արտին մէջ ինկած հօրը աշխատանքին զաւակը հասաւ: Այդ զաւկին մէջ կար արդէն կազմուած հայեցի նկարագիրը ու հաւատքը ուժեղ:

Այդ նոր ծնած զաւկին մէջ արդէն կար աւանդական այն մեծ ժառանգը, որ մեր մեռելներէն, մեր պատմութենէն կու գար: Ան կ՚առնէր այդ նկարագիրը պապենական օրհնուած տունէն, լաչակը գլխին

ու տան օճախին, բուխերիկներու ծուխին հսկող հայ մայրէն: Ան կ'առնէր այդ ժառանգութիւնը հազար ու մի մտահոգութիւններով գլուխն ու դէմքը ծանրացուցած հօրմէն: Կ'առնէր հողէն, Երկնքէն, մեր երանելի վարժապետներէն, որոնք կը հաւատային, որ մեր Ա-Բ-Գը Երկնքէն իջած է: Ան այդ ժառանգութիւնը կ'առնէր մեր վանքերէն, մեր լեզուէն, մեր պարզամիտ ու խունկի հոտ ունեցող տէրտէրներէն: Այն երիտասարդ զակին մէջ կար ժառանգը մեր եկեղեցական տօներուն հետ խառնուած հեթանոսական ծէսերուն, մեր Բարեկենդանի տօներուն: Ան կը մեծնար այդ ոգիով՝ շինելու համար իր սեփական տաճարը՝ Հայրենիքին սէրը:

Կ'ուզեմ ըսել, որ ամէն հայ ինքնին թանկագին աւանդութիւն մըն է, ու դուք կը ճանչնաք զայն օտար երկինքներու տակ, եթէ ծանօթ չէք անոր անունին: Երբ ան ձեր մօտէն կ'անցնի, ձեր աչքերուն մէջ թեթեւ խայտանք մը կը զգաք ու դուք ետեւ կը նայիք, կարծես շատ ծանօթ մէկը անցաւ ձեր մօտէն, որուն հետ բաժնած էք հայու ճակատագիրը, ողբերգութիւնն ու հաւատքը:

Այդ անծանօթը կարծես տեսած էք ուրիշ անգամ, ուրիշ տեղ մը, կարծես մանկութիւն մը ապրած էք անոր հետ դարեր առաջ: Կարծես պիտի յիշէք անունը՝ Մարտիրոս, Օհաննէս, Վահան: Ու ձեզի կը թուի այնպէս, որ դարեր առաջ միասին ապրած էք անոր հետ պապենական ընտանիքի մը մէջ:

Իր հօրը գործին հասնող երիտասարդը լեցուն էր այդ ժառանգութիւնով:

Երբեք կարելի չէ ըմբռնել 1915-ի այն ահաւոր ողբերգութիւնը, որ եկաւ միանգամ ընդմիշտ արմատախիլ ընելու ժողովուրդ մը իր հողէն ու հոգեկան աւանդութենէն: Անոնք չգացին որպէս Օհաննէս կամ Յակոբ: Անոնք գացին՝ որպէս տէրերը մեր հոգեկան ժառանգութեան:

Ամէն մէկ հայ կազմուած նկարագիր է եւ պատմութիւն: Ահաւոր էր մտաւորականութեան մը կորուստը, որովհետեւ ժողովուրդը ինքնին անսպառ աղբիւրն է, շտեմարանը մեր մշակոյթին ու նկարագրին: Երբ մենք կ'ըսենք Ռուբէն Զարդարեան կամ Վարուժան, անոնք իրենց կեանքին տեւողութիւնը չեն միայն, որ ծնան այսինչ թուականին ու նահատակուեցան 1915-ին: Անոնց կազմութիւնը երկար ու դանդաղ ճանապարհով կու գայ Եղիշէէն, Սուրբ Մեսրոպէն, Դաւիթ Անյաղթէն, Եզնիկէն ու Նարեկացիէն:

Թիւ չէր մեր մտաւորականութիւնը, թիւ չէր մեր ժողովուրդը, որոնք անսպատները քշուեցան՝ իրենց ոսկորները աւազներուն հետ խառնելու:

Մեր ժողովուրդին հետ նոյնպէս կմախք ձգեցին մեր շէն դպրոցները, մեր վանքերը լեռներու կողին: Մեր թշնամին այդ միջոցով ուզեց կմախք դարձնել մեր հոգեկան շէն անդաստանն ու մեր հաւատքը: Աշխարհի վրայ ոչ մէկ մարդկային հրէշ պիտի մօտենար ճեղքելու գանկը Սիամանթոյի, ուր կար փոթորիկը հրեղէն երեւակայութեան: Ինչպէ՞ս մօտենալ մեր սրբանման մտաւորականութեան, որոնց ճակտին վրայ Աստուծոյ մատը կար, ու բոլորին ձգտումն էր դէպի գեղեցիկն ու մարդկայինը: Ինչպէ՞ս մօտենալ ու անգութ միջոցներով փճացնել ժողովուրդ մը, որ աշխատած է իր թշնամին իսկ տանիլ քաղաքակրթուած ազգերու սահմաններուն՝ անոր տալով ճարտարապետութիւն, շինելով մզկիթներ, աղբիւրներ ու կամուրջներ, ստեղծելով թատրոնը, մանաւանդ ստեղծելով երկրի մը տնտեսութիւնը: Որեւէ հրէշ չէր կրնար մօտենալ այդ տեսակ ժողովուրդի մը:

Համապատկեր

Միայն թուրքը կրնար ընել այդ:

Հայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքին շատ է տեսեր ողբերգութիւններ: Մեր պատմական շէն քաղաքները արդէն հողին տակ են, եւ սակայն նոյն ժողովուրդը անծանօթ օրէնքով մը պահած է իր գոյութիւնը՝ ազգերու պատմութեան մէջ իր դերը կատարելու:

1915-ի ողբերգութիւնը բաւական էր ոեւէ ցեղի կամ ազգի համար, որ դադրէր գոյութիւն ունենալէ:

Հայաստանի մը հեռապատկերը առաւելապէս եղած է Արեւմտահայաստանը՝ հոն, ուր կատարուեցաւ եղեռնը: Գերմարդկային ի՞նչ ուժ կրնար թագնուած ըլլալ հայ ժողովուրդին մէջ, որ այդ ահաւոր աղէտէն յետոյ, առանց տկարանալու, ապաւինելով միմիայն իր հաւատքին վրայ, ստեղծեց յաղթանակի թուական Մայիս 28-ը՝ անկախ Հայաստանը ու պաշտպանեց փոքրիկ Հայաստանի մը սահմանները՝ ճակատ բռնելով դարերով պետական կեանք ու մարզուած բանակներ ունեցող թուրքին դէմ: Հայ զինուորը բոպիկ ոտքերով կռուեցաւ: Հայ նախարարը հազիւ ծակ ու մաշուած տաբատ մը կրնար ճարել, եւ միեւնոյն ատեն այդ ժողովուրդի զաւակները պատերուն տակ կ'իյնային սովամահ ու հիւանդ: Եթէ 1915-ի ահաւոր ողբերգութենէն յետոյ այս ժողովուրդը կրցաւ անկախ Հայաստան մը ստեղծել, այդ մեծագոյն հրաշքն էր բոլոր ազգերու պատմութեան մէջ:

Միայն հայը կրնար գործել այդ հրաշքը: Այդ ինքնին ցոյց կու տայ, որ ինչքան ալ հին ազգ եղած ենք ու յաճախ ենթարկուած աղէտներու, դեռ կը պահենք մեր նկարագիրը ու կենսունակութիւնը մեր հաւատքին:

Ազգ կամ Հայրենիք ինքնին անհատականութիւն է եւ նկարագիր: Եթէ մենք չենք բաժնէր մեր Հայրենիքի այսօրուան ոեժիմը, անոր համար է, որ այնտեղ կը սպառնան աղճատել մեր նկարագիրը: Հոն անհատն իսկ լուծուած է որպէս ուժ, որպէս անհատականութիւն եւ նկարագիր: Մենք կը հաւատանք, որ հայ ժողո-

վուրդը, ինչ պայմաններու մէջ ալ ըլլայ, պիտի կրնայ պաշտպանել իր ցեղային առողջութիւնը եւ հաւատքը: Այդ հաւատքն է, որ մեզի ժառանգ ձգեցին 1915-ի Եղեռնի մէկ միլիոն զոհերը: Եւ պէտք է, որ ուժեղ ըլլայ այդ հաւատքը, որովհետեւ ոչ միայն պահելու համար, այլ[եւ] այդ հաւատքը ուժեղացնելու համար շատ զոհեր տուած ենք: Այդ զոհերը շատ աւելի ուժեղ են, քան այն բանակները, որոնք աշխարհագրական սահմանները կը պահեն: Մեր ժողովուրդը իր զոհաբերութիւնով ստեղծեց հոգեկան այն մեծ սահմանները, որոնց ոչ մէկ թշնամի կրնայ հասնիլ:

Անտարակոյս, քրիստոնէական պատմութիւնը աշխարհի պատմութեան մէջ եղած է համամարդկային: Շատ չանցաւ, հայ ժողովուրդը կործանեց բագիններն ու անոնց տեղ կերտեց քրիստոնէական տաճարները:

Մանրամասնութիւնները կը պակսին, եւ սակայն կը հաւատամ, որ հայ ժողովուրդը իր բարոյական ու համամարդկային սկզբունքներն ունէր նաեւ բագիններու փառաբանութեան մէջ:

Եղիշէն տուած է Վարդանանցը՝ վիպային գեղեցկութեամբ: Կայ այնտեղ տող մը, որ նոյնպէս հայ ժողովուրդի նկարագիրը կ'արտայայտէ եւ ցոյց կու տայ մեր հաւատքի մեծութիւնն ու ուժգնութիւնը. «Ահա՛ սուր քո եւ պարանոց մեր»:

Դարեր յետոյ այդ հաւատքը նոյն ուժգնութիւնով արտայայտուեցաւ 1915-ի զոհերուն կողմէ. «Ահա՛ սուր քո եւ պարանոց մեր: Մենք չենք զիջեր մեր հաւատքէն»: Ըսուած է՝ կան պարտութիւններ, որ մեծ յաղթանակներ են: Վարդանանցը այդ յաղթանակներէն մէկն էր: Այդ ձեւով յաղթանակեցին 1915-ի եղեռնի մեր զոհերը: Անոնք ցոյց տուին մեծութիւնը իրենց հաւատքին: Այդ նոյն հաւատքն էր, որ ստեղծեց մեր Մայիս 28-ը՝ ըսելու համար, որ գիտէ այդ հաւատքը կեանքի հետ խառնել, շնչել ու մտածել, այլ խօսքով, տէր դառնալ իր Հայրենիքին: Քրիստոնէական այդ շրջանը ինչքան մարդկային է, նոյնքան եւ աստուածային: Հայ ժողովուրդը գիտէ այդ աստուածայինը դարձնել ցեղային նկարագիր:

Կարիւնի «[Վարք] Մեսրոպ Մաշտոց»ին մէջ հիացմունքով կը տեսնենք համամարդկային ուժեղ բարոյականութիւն մը: Սուրբ Մեսրոպ բացաւ դպրոցներ՝ վերցնելու անգրագիտութիւնը, ճամբորդեց իր աշակերտներուն հետ՝ տարածելու համար Աւետարանի խօսքերը: Ան նոյն հաւատքով ստեղծեց մեր «Այբ» ու «Բեն»ը, թարգմանեց Սուրբ Գիրքը, որ մենք անմիջապէս դարձուցինք ցեղային մշակոյթ: Սուրբ Մեսրոպ այնքան տարուած էր համամարդկային սկզբունքներով, որ դրացի երկիրներով մտահոգուեցաւ ու յորդորեց նոյնպէս «Այբ» ու «Բեն»ը վրացիներուն եւ աղուաններուն:

Հերոսը այն չէ, որ կը յաղթանակէ առանց նպատակի: Հերոսը այն է, որ իրմէ վերջ իր գեղեցիկ սկզբունքները կը յաղթանակեն: Ճիշդ է, պատմութեան մէջ կայ Մեծն Աղեքսանդր մը, որուն շրջանին աստուածները ֆիզիքական ուժի ըմբոնումներ էին: Անոնք կայծակներուն եւ որոտներուն կը հրամայէին: Այդ բիրտ ուժն էր, որ հետզհետէ տեղի տուաւ նուրբ դէմքով Քրիստոսի մը, որ կ'ըսեն՝ Երուսաղէմի փողոցներուն մէջէն լալով կ'անցնէր՝ տեսնելով մարդկային թշուառութիւնները: Այդ տկար Քրիստոսն էր, որ ոչ միայն յաղթեց Հռոմին, այլեւ յաղթեց ամբողջ աշխարհին:

Հրեայ ցեղին տաղանդաւոր մէկ գրողը՝ Շոլոմաշ, իր մէկ պատմուածքին մէջ կու տայ դրուագ մը՝ հրեայ ցեղի հաւատքի ուժգնութիւնն արտայայտող:

Հռովմայեցի զօրավարը իր զինուորներով յարձակած է հրեայ անպաշտպան ժողովուրդին վրայ: Ձարդ, հրդեհ եւ սակայն ոչ փախուստ: Սուրերը ինչքան զոհեր կը խլեն, նոյնք կ'աւելնան: Զօրավարը սարսափով կը տեսնէ, որ հրեայ ժողովուրդը՝ ծեր թէ երիտասարդ, մայրը, իր զաւակը գրկած, սուրերուն դէմ կը վազէ՝ խառնուելու համար միւս բոլոր զոհերուն ու անոնց հաւատքին: Այդ պահուն է, որ հռովմայեցի զօրավարը սարսափահար կը հրամայէ, որ դադրեցնեն կռիւը: Զօրավարը պարտուած էր՝ տեսնելով մարդկային անհերեւակայելի զոհաբերութիւնը հաւատքին ու ցեղին համար.

– Ահա՛ սուր քո եւ պարանոց մեր:

Եւ նոյն հրեայ ժողովուրդը ոչ միայն յաղթանակեց մշակոյթով, այլեւ նոյն հաւատքով հազարաւոր տարիներ անց ստեղծեց իր հայրենիքը:

Մեր 1915-ի զոհերն էին, որ ստեղծեցին մեր Հայրենիքը: Քրիստոնէութիւնը եւս որպէս օրինակ վերցուցի՝ ցոյց տալու համար մեր նկարագիրը, մեր հաւատքի խորութիւնը:

Մեր հեթանոսական շրջանէն հազիւ թէ քանի մը կտորներ փրկուած են հէքիաթի վիճակով, որոնց մէջ նոյնպէս կը գտնենք մարդկային գեղեցիկ ձգտումներ:

Հայկի եւ Բելի հոյակապ դրուագը բռնութեան դէմ պայքարն է յանուն ազատութեան եւ գեղեցիկ նպատակներու, որ ինչքան հին է, նոյնքան նոր է եւ վաղուանը:

Սասունցի Դաւիթի պայքարը նոյնպէս պայքարն է ազատութեան, որ ունի այսօրուան աշխարհը եւ պիտի ունենայ վաղը: Այդ թռիչքներուն մէջ է, որ կը կերտուի ցեղային նկարագիրը: Նոյն սկզբունքները պապենական հարստութեան մը պէս շահեցան մեր մտաւորականութիւնն ու ժողովուրդը:

Նալպանտեան, Խրիմեան, Ռաֆֆի, մեր ֆետայիները ու 1915-ի Եղեռնին զոհ գացող մտաւորականները նոյն համամարդկային սկզբունքներուն առաքեալներն էին:

Սուրէ աւելի գեղեցիկ նպատակներն են, որ կը յաղթանակեն. ահա թէ ինչո՛ւ ինչքան թալլեցին, միշտ շէն մնաց հայուն տունը, ինչքան հալածեցին անոր մշակոյթը, օտար երկինքներու տակ մշակութային կեդրոններ շինեց ու շինեց վանքեր լեռներու կողքին:

Ինչքան հալածեցին, ան զոհերով պահեց իր հաւատքը եւ նոյն հաւատքով շարժեց իր սուրը ու ստեղծեց այսօրուան Հայաստանը:

1915-ի աղէտին մէկ միլիոն զոհերը սրբազան զոհերն էին մեր դարաւոր հաւատքին ու անսպառ ուժին: Անոնք չպարտուեցան: Անոնք յաղթեցին: Երբեք չեն պարտուիր անոնք, որոնք կ'իյնան հաւատքի մը համար: Մեր թշնամին մեր սուրէն չվախցաւ: Ան մեր հաւատքէն վախցաւ: Եւ նոյն ժողովուրդն է այսօր Հայաստանի մէջ:

Ժամանակները կարճ են ազգերու պատմութեան մէջ, եւ օր մը ալ պիտի տեսնեք, որ թուրքը անցնող ազգերու ճակատագրին ենթարկուած է, եւ մենք ենք յաղթանակողը, որովհետեւ հայ ժողովուրդը գիտէ զոհուիլ հաւատքի համար: Մենք մեր Հաւատքով պիտի յաղթենք*:

* Ընդգծումը Համաստեղինն է:

Այնճարը իբրեւ՝ համահայկական արժէք

(Արման Նաւասարդեանը եւ Միւսները (ԼԳ))

Մովսէս Ծիրանի (Հերկելեան)
Արվեստաբանութեան դոկտոր

Այնճարի մեր տան բակը, 1999, Սեպ.

Սիրելի ընթերցող.

առաջին անգամը չէր որ Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան լիազօր եւ արտակարգ դեսպան՝ Արման Նաւասարդեանը Այնճար կ'այցելէր, եւ ոչ ալ առաջին անգամն էր որ ես իրեն կը հանդիպէի: Արդէն իսկ մտերմացած էինք իբրեւ Վազգէն Մանուկեանի գործակիցներու խումբին մաս կազմող «Հին ընկերներ»: Ճաշէն ետք, մեր տիկինները՝ Լաուրան ու էլոն երբ գացին «Մունի» (ձմեռային ուտեստ) ապահովելու ու մենք առանձին մնացինք, ան ամենայն լրջութեամբ սկսաւ.

- Մովսէս ջան՝ այս անգամ եկել եմ «յատուկ նպատակով»...

-Այսի՞նքն...

- Այնճարի մասին յաւելեալ եւ մանրամասն տեղեկութիւններ են ինձ պէտք:

- Ժամանակին ես քեզ ուղարկել էի գիւղի յայտնի դէմքերից՝ Եսայի Հաւաթեանի մօտ, որովհետեւ նա աւելի տեղեկացուած է գիւղի բնոյթի, պատմութեան եւ առհասարակ բոլոր տեսակի անցուդարձերու մասին, նման պարագաներուն ես միշտ նրան եմ դիմել: Ինչքան գիտեմ, դու արդէն իսկ շփուել ես նրա եւ գիւղի որոշ ղեկավարների հետ, եւ բաւականին ծանօթ ես Այնճարին ու այնճարցիներին...

-Այո՛, անկախ քեզանից, ես արդէն իսկ այցելել եմ քաղաքապետարան, մեր կրոնական երեք յարանուանութիւնների դպրոցներն ու եկեղեցիները, ակումբներն ու այլ կառոյցներ: Նոյնի՛սկ ինձ տարել են Օգնութեան Խաչի դարմանատունն ու ծանօթացրել նրա գործունէութեանը: Սակայն գիւղին վերաբերող իմ նոր ծրագիրն իրագործելու համար սա չի հերիքում: Առաջին հերթին, ուզում եմ որ ինձ ցոյց տաս Այնճարի սահմաններն ու որոշ տեղեկութիւններ՝ ընդհանուր տարածքի, մնայուն բնակիչների որակի ու քանակի, «Հարեւանների» փոխյարաբերութիւնների եւ այլ հարցերի մասին:

- Արման ջան՝ սահմանները հենց այսօր էլ կարող եմ տանել ու ցոյց տալ քեզ, դա կարող ենք անել նաեւ՝ բարձրանալով մեր տան տանիքը, բայց մնացեալ տեղեկութիւնների համար հարկաւոր է դիմել «Կարմիր Լեռ» կոմիտէութեան:

- Ես դա գիտեմ եւ դա շատ լաւ է որ այդպէս է: Գիտեմ նաեւ որ գիւղը լաւ կազմակերպուած է, ու շնորհիւ այդ կազմակերպուածութեան, ոչ միայն ամէն ինչ հսկուած ու երաշխաւորուած է, այլ նաեւ հայեցի դիմագիծը պահպանում է ու մշակոյթը զարգանում... հենց դրա համար յատուկ ծրագիր եմ մշակել գիւղի զարգացման ու ապահովութեան համար...

- Իսկ ի՞նչ ծրագիրի մասին է խօսքը, կարելի՞ է իմանալ... եթէ գաղտնիք է կարող ես չասել:

- Թէեւ առ այժմ ամէն ինչ պէտք է որ գաղտնի մնայ, սակայն չեմ կարող քեզ չասել: Յատկապէս Կոմիտէն պէտք է որ տեղեակ լինի ու գործակցի մեր հետ: Տես ի՞նչ եմ մտածում եւ ինչո՞ւ...

- Ուշադիր լսում եմ:

- Մենք հայերս հայրենիքից դուրս ունեցել ենք լաւ կազմակերպուած գաղութներ, որոնք թէեւ ծաղկել են ու համախմբուած՝ դարձել են քաղաքական ու տնտեսական ուժ, սակայն նրանցից որոշները լրիւ անհետացել են, ինչպէս. Լեհաստանը, կամ Հնդկաստանը, իսկ ուրիշներ էլ մարելու վիճակում են, ինչպէս, Եգիպտոսը, Միջագէտքը կամ, թեկուզ, Թիֆլիսը: Այսօր վտանգուած են նաեւ՝ Պարսկաստանի, Հալէպի եւ կամ Պէյրութի նման գաղութները, իսկ մենք արդէն ունենք Անկախ Հայրենիք: Միջին Արեւելքի գաղութները աւելի եմ կարեւորում, ոչ միայն նրա համար որ նրանք, գրեթէ սահմանակից են Հայաստանին, այլ յատկապէս նրա համար որ նրանցից իւրաքանչիւրը, իր հերթին, լինի դա տնտեսապէս թէ քաղաքականապէս, ազդեցիկ կապեր ու դիրք ունեն իրենց ապրած երկրի մէջ: Հարկաւոր է հզօրացնել նրանց ու կապել հայրենիքին:

- Իսկ Այնճարը...

- Շտապում ես Մովսէս ջան, կ'ասեմ: Բայց, անկախ սրանցից աշխարհի տարածքում մենք ունենք նաեւ՝ Հայկական «օասիսներ» (oasis), որոնք իրենց strategic դիրքով ու բնոյթով, համահայկական արժէք են ներկայացնում, ու շատ աւելի դեր եւ նշանակութիւն ունեն Հայաստանի պետականութեան համար եւ որոնց վրայ հարկաւոր է գուրգուրալ, պահել ու պահպանել:

Ջուիցերիոյ դեսպանը, Մոլմէս Հերկելեան եւ դեսպան Արման Նաւասարդեան, Նոազ Արք-ի մէջ, 2000 թուին

- Հասկացայ, ուրեմն դրանցից մէկը Այնճարն է, իսկ միւսնե՞րը:

- Էլի ես շտապում, Վենետիկի Ս. Ղազար կղզին, Երուսաղեմի հայկական թաղամասն ու Այնճարը, մեզ համար շատ կարեւոր ու կենսական կեդրոններ են, որոնք ուղղակի կամ անուղղակիօրէն, պէտք է որ ունենան Հայաստանի պետական հովանաւորութիւնը...: Ես կարող եմ յիշատակել նաեւ Քեսապը, սակայն նրա վիճակն էլ յայտնի է մեզ: Առհասարակ, Սփիւռքը իր կարելին արել է ու անում է: Երբ մենք անկախ պետականութիւն չունէինք Հայը արտերկրում դիմացել է բազմաթիւ փորձանքների ու փորձութիւնների: Բայց դա բաւարար չի: Իր հեղինակութիւնն ու միջազգային վարկը ամրապնդելու համար հարկաւոր է որ պետութիւնը օժանդակի նրանց՝ առանց նրանց ներքին կեանքին միջամտելու... սա էլ իր հերթին կարեւոր է: Ես մի քանի անգամ այս խնդիրը բարձրացրել եմ պաշտօնական հանդիպումների ընթացքին, լինի այստեղ թէ Հայաստան: Թէեւ առաջարկս ընդունուել է ու ոմանք նոյնի՛սկ խանդավառուել են, սակայն գործնականում շատ բան չի փոխուել...:

-Լաւ, յետոյ...

- Այնճարը թէեւ մշակութապէս զիջում է միւս երկուքին, սակայն իր դիրքով, բնակչութեամբ, ու տարածքի մեծութեամբ ունի առաւելութիւններ...

-Ի՞նչպէս...

-Ասեմ... Նախ՝ ամբողջութեամբ Հայ է գիւղը, մեծամասնութիւնը մուսալեռցի: Համերաշխ էք ապրում ու լաւ կազմակերպուած էք: Այնճարը իր մաքրութեամբ, իր ռեստորաններով ու հնավայրերով աչքի է ընկնում իբրեւ «թուրիստական» կեդրոն, եւ օրինակ ծառայում միւս գիւղերին... նա կարող է օրինակ ծառայել նաեւ Հայաստանի գիւղերին: Պալպէքի ճանապարհին ու Սուրիոյ սահմանակից լինելը եւս իր նշանակութիւնը ունի: Ես գիտեմ, տեսնում եմ Դամասկոսից Արեւմտեան դեսպանատների աշխատակազմից շատերը յաճախ գալիս ու օգտուում են Գիւղի բարիքներից... յատկապէս ամառուայ շրջանում: Օդը մաքուր, ջուրը առատ ու մաքուր, առհասարակ բնութիւնը հարուստ ու մաքուր, հիւրասիրութիւնը գերազանց: Ի զուր չէ որ Օմայատները իբրեւ ամառանոց ընտրել են այս տեղանքը ու բերդ կառուցել: **Այնպէս որ Այնճարը լաւ ամառանոց կը լինի նաեւ՝ մեր դեսպանատան համար, միաժամանակ կարելի է նրան տալ հիւպատոսարանի կարգավիճակ...** դէ՛ հիմի ի՞նչ կ՚ասես, Շէֆ:

- Ի՞նչ պիտի ասեմ, Շէֆ, ես պարզապէս հիացած եմ քաղաքական հուրառութեանդ ու հեռատեսութեանդ վրայ: Եթէ նման բան յաջողացնես, ես եւ ոչ միայն ես, մենք պարզապէս շնորհակալ կը լինենք քեզանից... իբրեւ այնճարաբնակ մուսալեռցի:

(Ի դէպ Հայաստանի մէջ իմ ուսանողական տարիներուն Վազգէն Մանուկեանի շուրջ համախմբուած իր գործակից ընկերներով իրարու «Շէֆ» կ՚ըսէինք, նախ՝ իբրեւ «գաղտնաբառ» (parole) զիրար ճանչնալու համար, եւ երկրորդ՝ որպէս զի յայտնի չըլլայ թէ մեր մէջ «Շէֆ»ը ո՞վ է: Այդ Ժամանակներուն ինք՝ Արման Նաւասարդեանը կը պաշտօնավարէր Խորհրդային Միութեան Արտգործ. նախարարութեան մէջ, Անտրէյ Կրոմիքոյի կողքին եւ սերտ կապի մէջ էր Վազգէն Մանուկեանի հետ):

Իմ հետաքրքրասէր ընթերցող՝

մինչ այդ Նաւասարդեանը իբրեւ դիւանագէտ, քաղաքական գործիչ ու բանիմաց վերլուծաբան մեծ տպաւորութիւն ձգած էր վրաս, յատկապէս անոր համար, որ ան կը հաւատար մշակոյթի ուժին ու դերին քաղաքականութեան մէջ: Այդ օր, իր հեղինակութիւնը աւելի մեծցաւ աչքիս: Ան խիստ մտահոգ էր թէ՛ Լիբանանի եւ թէ՛ Հայաստանի ապագայով: «*Պէտք է պարրաստուենք յոռեգոյնին*» կ՚ըսէր ու շեշտը կը դնէր կազմակերպուածութեան, ու սեփական ուժ ունենալու անհրաժեշտութեան վրայ: Եւ յաճախ կը կրկնէր. «*Միջին Արեւելքի, Կովկասի եւ առհասարակ երկրի ապագան փայլուն չեմ տեսնում, մոայլ ժամանակներ են գալու*» ու իր ըսածներուն իբրեւ ապացոյց զարմանալի քաղաքական նուրբ ու խոր վերլուծութիւններ կ՚ընէր միշտ օրինակներ բերելով պատմութենէն: Դժբախտաբար իր կանխատեսումներն ու քաղաքական կռահումները յետագային իրականացան, ու մենք պէտք եղած արթնամտութիւնը չկրցանք ցուցաբերել, եւ ազգովին չկրցանք նախապատրաստուիլ, ու տուժեցինք ըլլայ Միջին Արեւելքի թէ յատկապէս Հայաստանի ու Արցախի մէջ:

Ես չափազանց խանդավառ էի գիւղիս՝ Այնճարին վերաբերող իր ծրագիրներով, եւ յոյս ունէի որ ամէն ինչ հեզասահօրէն կ՚ընթանայ, ու մենք Այնճարի մէջ կ՚ունենանք Անկախ Հայաստանի հիւպատոսարան: Սակայն ամէն ինչ շրջուեցաւ: Ան երբ սկսած էր արդէն լուրջ հանդիպումներ ունենալ որոշ ղեկավար շրջանակներու հետ, ու քննարկել այս հարցը, ըլլայ Լիբանանի թէ Հայաստանի մէջ, ժամանակէն շուտ կանչուեցաւ Երեւան ու պաշտօնազրկուեցաւ: Եւ որովհետեւ ան միշտ քննադատական մօտեցում կը ցուցաբերէր հայրենի իշխանութիւններուն հանդէպ՝ յատկապէս միջազգային փոխյարաբերութիւններու առումով, անոր ծրագիրներէն շատեր կիսատ մնացին: Ան բարձր կը գնահատէր նաեւ՝ Պուրճ Համուտի համահայկական դերն ու քաղաքական նշանակութիւնը, եւ կը մտածէր Հայ Մշակոյթի Տուն ստեղծել Պէյրութի մէջ:

Զախէն Աջ՝ Տիկ. Ճոհն Սարաֆեան, Էլօ եւ Մովսէս Հերկելեաններ, Հրայր Սգայեան, Մովսէս Սարգունի եւ Հայկ Սարաֆեան, 1999-ին Այնճարի Սբ. Պօղոս Եկեղեցւոյ բակը

Ա. Նաւասարդեան, Մ. Հերկելեան, Գերապայծառ՝ Վ. Աշգարեան, պապական նուիրակ Լուիճի Քաթթի, Հայկ Սարաֆեան, 2 այլ դեսպանատուներու ներկայացուցիչներ եւ Քոյր Թէոպիսթէ Նոազ Արք ցուցասրահին մէջ

Նաւասարդեանը վերադարձաւ հայրենիք իբրեւ հասարակ քաղաքացի: Եւ հակառակ անոր որ միշտ մնաց ընդդիմութեան շարքերու մէջ, սակայն իբրեւ հմուտ դիւանագէտ ու քաղաքական վերլուծաբան, պատասխանատու բարձր պաշտօններ վստահուեցան իրեն:

Այո՛, ան Այնճարը կը գնահատէր իբրեւ համահայկական արժէք, եւ փորձեց օգնել ու զարգացնել զայն:

Այս բոլորէն ետք, պէտք է ընդունինք որ ինք միակը չէր Հայաստանի դեսպաններէն, որոնք Այնճարը կ'ընդունէին իբրեւ համահայկական արժէք: Աշոտ Քոչարեանը, Վահան Տէր Ղեւոնդեանը եւ յատկապէս՝ Արեգ Յովհաննիսեանը, ոչ միայն Այնճարը կ'ընդունէին իբրեւ համահայկական արժէք, այլեւ, ըլլայ պաշտօնապէս թէ անպաշտօն կերպով, յաճախ իրենց հիւրերը կը բերէին գիւղ, ու միշտ հպարտութեամբ կը խօսէին Այնճարի մասին:

Նոյնիսկ Լիբանանի մէջ այն ատենուայ Գանատայի դեսպանը՝ Հայկ Սարաֆեանը եւս նոյն կարծիքին էր, որը իր հերթին, հաւատալով Այնճարի ապագային, ընդառաջելով ԼՕԽ-ի առաջարկին, գործնապէս բարեսիրական օգնութիւն կատարեց Այնճարի մէջ: Ան յաճախ կ'այցելէր Այնճար, եւ նոյնիսկ երբեմն ընտանիքով կու գային ու կը գիշերէին գիւղը: Ան լաւ յարաբերութեան մէջ էր Հայաստանի դեսպաններուն՝ յատկապէս Նաւասարդեանի հետ: Ըլլայ ինք, Նաւասարդեանը թէ միւս հայ դեսպանները, երբ կը ծանօթացնէին զիս օտար հիւրերու կամ ուղղակի դեսպաններու հետ, իբրեւ Հայաստանի դեսպանատան Կերպարուեստի խորհրդական ու Նոազ Արք ցուցասրահի տէր եւ տնօրէն, չէին մոռնար յիշելու որ ես Այնճար ծնած ու մեծցած եմ: Ու առիթէն օգտուելով ոչ միայն կը գովաբանէին գիւղը իբրեւ համալիբանանեան ու նոյնիսկ համամարդկային արժէք, այլեւ կը հրաւիրէին զանոնք այցելելու գիւղը ու վայելելու անոր ընձեռած բարիքներէն: Ի դէպ, բացի Եւրոպայէն, այլ երկիրներու դեսպաններէն ու դեսպանատան աշխատակազմի անդամներէն շատեր եւս, (Սկսեալ Ռուսաստանէն, Հնդկաստանէն ու Փաքիստանէն, մինչեւ Գանատա, Պրազիլ ու Արժանթին) մեր կազմակերպած ցուցահանդէսներու առիթով, կու գային եւ իրարու կը հանդիպէին...: Ես ալ իմ հերթին, հետեւելով հայ դեսպաններու օրինակին չէի մոռնար խօսելու ծննդավայրիս ու անոր արժանիքներու մասին:

Պատահեցաւ նաեւ հետեւեալ յատկանշական դէպքը: Հովանաւորութեամբ Պապական նուիրակ Լուիճի Քաթթիի, 2000-ին կազմակերպած էինք բարեսիրական ցուցահանդես մը ի նպաստ «Հոիփսիմեանց» երկրորդական վարժարանին, այլ դեսպանատուներու ներկայացուցիչներու զուգահեռ ներկայ էին նաեւ Գանատայի եւ Հայաստանի դեսպանները՝ Հայկ Սարաֆեանն ու Արման Նաւասարդեանը: Ծանօթացման ընթացքին, երբ Պապական նուիրակը իմացաւ որ Գերապայծառ Աշգարեանը, Քոյր Թէոպիսթէն ու ես նոյն գիւղէն ենք, հետաքրքրուեցաւ Այնճարով: Սարաֆեանը անմիջապէս սկսաւ գովաբանել Այնճարը իբրեւ իւրայատուկ երեւոյթ, իսկ Նաւասարդեանը մանրամասն տեղեկութիւններ հաղորդեց գիւղի, գիւղացիներու, ինչպէս նաեւ՝ Կաթողիկէ համայնքի մասին: Պապական նուիրակն այնքան խանդավառուեցաւ, որ խոստացաւ այցելել Այնճար՝ իբրեւ հայութեամբ բնակեցուած ու բացառիկ տուալներով օժտուած քրիստոնեայ իւրայատուկ գիւղ մը:

Այնպէս որ, սիրելի ընթերցող՝ միայն մենք՝ Այնճարցիներս չենք որ կը գնահատենք Այնճարի առաւելութիւններն ու արժանիքները եւ կու տանք անոր համահայկական դեր ու նշանակութիւն...

Եւ այսպէս. Մխիթարեաններու Վենետիկի Սբ. Ղազար կղզին, Երուսաղեմի Հակական Թաղամասը, Այնճարը եւ նոյնի՛սկ Քէսապը հարկաւոր է ընդունիլ իբրեւ համահայկական արժէքներ ու պահել պահպանել զանոնք համահայկական ջանքերով ու նաեւ՝ պետականօրէն:

Այո՛, այս ենք մենք

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Կիրակի երեկոյ է, Մոնթրէալ վերադարձի ճամբուն վրայ ենք: Աշնանային արեւոտ ու տաքուկ երեք գեղեցիկ օրեր էին: Այստեղ այս եղանակը «հնդկական ամառ» կը կոչուի: Անկէ ետք զգալիօրէն անկում կ՚ունենայ ջերմաստիճանը, իսկ ձմեռը կը յիշեցնէ, թէ հեռու չէ...

Շրջանային ժողովի գացեր էինք Թորոնթօ: Քանի մը ինքնաշարժներով: Պէտք է խոստովանիմ, որ շատ ընդդիմութիւն կար այս ժողովին մասնակցութեանս առնչութեամբ: Կինս, աղջիկս մտահոգ էին, որ շատ պիտի յոգնիմ, այս տարիքիս այլեւս նման յոգնութեան պէտք չէ ենթարկեմ ես զիս: «Գոնէ գնացքը առնէիր, կամ օդանաւով երթայիր», կ՚ըսէին:

Ուրիշներ յիմարութիւն կը նկատէին այս բացառիկ օդէն չօգտուիլ ու տեղ մը հանգիստի չերթալ, չվայելել աշնան գունագեղ տեսարանները. «Թող ուրիշներ երթան ժողովի», «թող երիտասարդները երթան այլեւս», «քո՞ւ գործդ ինչ է, չի՞ բաւեր որքան ժողովի գացեր ես կեանքիդ մէջ...», – ու այսպիսի իմաստո՛ւն յանդիմանութիւններ եւ խրատներ կը լսէի:

Արդարեւ, տասը տարեկանէս ի վեր, Պատանեկանէն սկսեալ, անհամար ժողովներու մասնակից եմ եղեր: «Ժողովախտը» երակներուս մէջն է կարծես: Մեղաւորը ես չեմ: Ծնողքէս սորվեր եմ: Եւ ինչպէս չմտաբերեմ այն երեխան, որ ես չէի, որ օր մը երբ հարցուցեր են, թէ հայրը ի՞նչ գործ կ՚ընէ, «ժողով» պատասխաներ է: Եւ շատ տարօրինակ է նաեւ լսել, ժողովէ մը վերադարձիս, թէ «գոհ մնացի՞ր»: Ինչո՞ւ նման հարցում. ժողովի կ՚երթանք անձնական գոհացո՞ւմ ստանալու, թէ՞ մեր պարտականութիւնը կատարելու՝ հաւաքակա՛ն գոհացում ձեռք ձգելու համար:

Ճամբան երկար է, մեր հանգստաւէտ ինքնաշարժին մէջ մենք չորս ընկերներ ենք: Այնպէս դասաւորուեցաւ, որ երկուքս բանաձեւի յանձնախումբի անդամ էինք այս ժողովին, երրորդն ալ մեր օգնականը՝ համակարգչային յարմարեցումներուն գծով: Փակագիծի մէջ ըսեմ, կարծես ճակատիս վրայ գրուած է «բանաձեւի յանձնախումբի թեկնածու»: Յաճախ կը մերժեմ, այս անգամ սակայն չհամարձակեցայ չընդունիլ: Անշուշտ ուրիշ առաւելութիւն մըն ալ ունի այդ պաշտօնը. դիւանին կից սեղանի մը առջեւ կը նստինք ու շատ աւելի համապարփակ ընկալում մը կ՚ունենանք ժողովականներու ըսածներէն:

Խօսելիք շատ բան կայ, բայց եւ այնպէս մեր զրոյցը կը շեղի այլ ուղղութիւններով՝ քաղաքին անհամաչափ ընդլայնման, հետզհետէ բազմացող ու մեծցող ճանապարհներուն աւելի ու աւելի խճողման, ապագայ քաղաքներու նախագծման, ապագայ ընկերութիւններու կազմաւորման, ապագայ աշխարհի գոյաւման մասին եւ այլն, որոնք, վերջին հաշուով, առնչուած են մե՛ր ալ ժողովին, որուն ամբողջ առանցքը ապագան է՝ ապագայ Հայաստանը, ապագայ Սփիւռքը, ապագայ հայութիւնը: Մեր հայեացքը միշտ դէպի առջեւ ուղղուած պիտի ըլլայ: Այլապէս ի՞նչ իմաստ ունին այս ժողովները, այս զոհողութիւնները: Այդ վերջին բառը պէտք է չակերտէի - «զոհողութիւններ»...: Ի՞նչ զոհողութիւն: Ժողովի երթալը զոհողութի՞ւն: Զոհողութիւնը անո՛նցն էր, ֆետայիներո՛ւնը, որոնք հաւատացին, որ «մահ իմացեալ՝ անմահութիւն է»: Եւ մեր սահմաններուն վրայ նահատակուած զինուորներուն: Մենք կը դաւանինք ֆետայիներուն ժառանգորդները ըլլալ, գուցէ անարժա՛ն ժառանգորդները...

Խօսակցութիւնն ալ կ՚երկարի: Միայն անո՞նց ժառանգորդներն ենք: Ամենեւին ոչ: Մենք ժամանակակից սերունդն ենք Արտաշէս արքայի, Արշակ թագաւորի, Վռամշապուհի, Սահակ կաթողիկոսի ու Մեսրոպ Մաշտոցի, Մամիկոնեան Վարդանի ու Վահանի, եւ դեռ Աշոտ Երկաթի, Դաւիթ Բէկի ու Մխիթար Սեբաստացիի, Խրիմեան Հայրիկի եւ Դաշնակցութեան հերոսատիպ բոլոր խոնարհներուն, եւ Արամին ու Ռուբէնին ու միւսներուն: Այդ պատմական դէմքերուն կուսակցութիւնները ի՞նչ կը կոչուէին, կամ անոնք կուսակցութիւն ունէի՞ն արդեօք,- չե՛մ գիտեր, կարեւոր ալ չէ, բայց անոնց ազգային նպատակներու հետապնդումը մեզի է հասեր, եւ ա՛յդ գիտակցութեամբ է, որ պէտք է ապրինք:

Կ՚անցնինք ճամբուն եզերքը այս ուղեւորներուն ընծայուած հանգստավայրերէն, կանգ կ՚առնենք պարբերաբար: Մեզմէ մէկը դիտել կու տայ, թէ ափսո՛ս, Հայաստանի մէջ նման կայքեր ստեղծելու գաղափարը միայն նոր է, որ մտածուեր է: Լա՛ւ է, որ մտածուեր է:

Համաձայն կը գտնուինք բոլորս ալ, որ ժողովը շատ դրական մթնոլորտի մէջ ընթացաւ: Ոմանք կը կարծեն, թէ դաշնակցական ժողովները այդքան կիրթ ըլլալու չեն, աւանդաբար կիրքերը արագ կը բորբոքին: Բայց հիմա զգալի է, որ մեր հայրենիքի իրավիճակը ու անկէ բխած տրամադրութիւնները մեզ ա՛լ աւելի լուրջ ու սեւեռուն դարձուցած են, եւ մեր ուշադրութիւնը շատ աւելի կեդրոնացած պիտի ըլլայ մեր կազմակերպութեան հզօրացման վրայ՝ ի ծառայութիւն Հայրենիքի ու Սփիւռքի:

Ուրիշ ի՞նչ բան մեզ շատ տպաւորեց, – հարց կու տանք մենք մեզի: Ինծի համար, որ մատի վրայ համրուող ներկաներէն մէկն էի՝ տարիներով ամենէն հարուստ, չափազանց ուրախալի էր, տեսնել քանի մը տարեկիցներ, – որոնց հետ քանի՛-քանի՛ անգամներ ենք մասնակցած նման ժողովներու, վիճած, հակաճառած, ապա համաձայնած, – ողջագուրուիլ անոնց հետ ու հաստատել, թէ տակաւի՛ն պատնէշի վրայ են՝ հիմա արդէն ամբողջովին սպիտակահեր, թէկուզ ոչ առաջուան թափով ու եռանդով, եւ ա՛լ աւելի ուրախալի՝ անդրադառնալ, որ անոնց՝ մե՛ր տեղը եկած ու գրաւած են արդէն մեր զաւակներու եւ թոռներու սերունդները: Դրօշադրշաւը կը շարունակուի, եւ դրօշը ստանձնածները հո՛ն են:

Ահա կ՚անցնինք հսկայ կարմիր խնձորին քովէն, որ խորհրդանշանն է խնձորի շատ համեղ բլիթ արտադրող այդ հաստատութեան, բայց կանգ չենք առներ: Ժամանակը արդէն լառաջացած է, ու դեռ ճամբայ կայ մինչեւ Մոնթրէալ... ■

Ասա՛ մեզ, Եվրոպ, ո՞ւր ես շտապում
Ձեռներդ ներկած հայի արյունով.
Դու հոշոտեցիր Սուրբ Հայաստանը,
Այժմ ո՞ւր ես փախչում արնոտ ձեռներով:

Քո խիղճը երբեք չխայթեց, Եվրոպ,
Փշրելով գանգեր բյուրավոր հայի.
Անառակ Եվրոպ, բարբարոս Եվրոպ,
Անեծք սերընդիդ՝ անեծք դարերի…

Դեպի ծովերն ես շտապում հիմա,
Որպեսզի լվաս ձեռներդ արնոտ.
Ծովերը փոքր են, օվկիանը՝ չնչին,
Որ մաքրեն խիղճդ-խիղճդ արյունոտ…

Հանցանքդ մեծ է - և ավելի շուտ
Ծովերն ու օվկիան արյուն կդառնան
Ձեռներիդ արնով, հայի արնով՝
Անեծք քեզ, Եվրո՛պ, անեծք հավիտյան:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ,
ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐ,
Երևան 1990 թ. էջ 251

Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ: (22 նոյեմբերի, 1920 թ.): (Իրավարար վճիռը, որն իր ուժը չի կորցրել)

ԴՐՕՇԱԿ